1024
L. II. 6

ԳԻՐՔ LX



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 1 ՅՈՒՆՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՕԼԻՍ,
1910

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*** Բանաստ. Յար. Պետրոսեան 3

Մի օր. վէպ. Արսէն 4

Մեսրոպ Ա. Արտազեցի. Մաղաքիա աե. Օրմանեան . 12

Գիւղացին. Բանաստ. Մ. Ենգիբարեան 20

Պատմութիւն Սասանեանց և Իրանի նուաճումը արաբացիներից. պրոֆ Ա. Կրիմսկու. Մ. Շովրեան . . . 22

Գիտութեան տօնը. (Մոսկուայից) Ա. Վ. 34

Նորագոյն պատմագիտութիւն Կարլ Լամբրեխտի Pessimist 44

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Դր. Բօլէդէր. Խրատներ ծնողների և դաստիարակների համար. Պարոյր։—Ստացուած գրքեր 60

ԱՄՍՕՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պատրիարքական հրաժարական Mars.—Ի՞նչ պիտի անեն Թիւրքիայի հայերը. Գ. Ենգիբարեան.—Ս. Օրմանեան.—Վահան վարդապետ.—Լուրեր։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՊԻՈՒՄ Է

ԳԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Թ.

Յովսէփ Արղութեան

«ԼՈՒՄԱՅ»-ի յունուարի համարը ուշացաւ խմբագրի հիւանդութեան պատճառով։ Հետևեալ՝ փետրուարի համարը լոյս կտեսնի ամսոյս վերջին։

ԳԻՐՔ LX



ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1910 № 1 ՑՈՒՆՈՒԱՐ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՕԼԻՑ, 7.
1910

*
* *

Քամին փչեց, թոզ ու դուման
Աշխարհն առան ու բռնին.
Վա՜խ, իմ արեւ, օր ու գիշման
Խաւար դարձան իմ գլխին։

Բա՛ռնր սարեր, կա՛ռնր քարեր,
Ճանապ, կանաչ թուփ ու ծառ.
Այ լե՛ռ քարեր, այ ժէ՛ռ քարեր
Դարդիս չունէ՞ք մէկ հնար։

Աշխարհ եկայ, աշխարհ մնայ,
Օր ու ասուոր ես չունիմ.
Մարդկանց սրտում խիղճ չգտայ...
Սարեր, քարե՞ր, ի՞նչ անեմ։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՄԻ ՕՐ

Մի քանի ամիս առաջ մեռաւ իմ ամենամօտ բարեկամ Աշոտ Դրանիկեանը։ Նրա կեանքը, գոնէ ինձ համար, երկար ու բարակ պատմութիւն չունէր։ Մի քանի խօսքով կարելի էր համարում աւարտել նրա կարճ կեանքի համառօտ և հակիրճ պատմութիւնը։ Պատմութիւնը հետևեալն է. ուսումն վերջացնելուց յետոյ Աշոտն եկաւ հայրենիք, երկու թէ երեք շաբաթից յետոյ հիւանդացաւ անբուժելի հիւանդութեամբ, որի պատճառով ուղարկեցին Կովկասեան հանքային ջրերից մէկը, որտեղ և մարեց ընդ միշտ։ Ահա բոլորն ինչ որ կարող էի ասել նրան անծանօթ հետաքրքրուողներին, որոնք ուզում էին իմանալ, թէ ո՞վ է ջահիլ մեռեալը։

Անցեալ անգամ Դրանիկեանների տանն էի։ Որդեկորոյս մայրը լալիս էր ու լալիս։ Ոչինչ չէր հանգստացնում նրան։ «Աշոտս, Աշոտս» բարձրագոչ աղաղակելով ողբում էր սգաւոր մայրը վաղամեռիկ երիտասարդի կսկծալի մահը։ Որդու զգեստները գիրկն էր առել, համբուրում էր և մէկիկ-մէկիկ պատմում նրա բարեմասնութիւնները։ Ես ուզում էի ունենալ իմ սիրելի բարեկամ Աշոտի նկարը, ուստի մօրը խնդրեցի տալ ինձ այն, եթէ միայն կայ։

—Աշոտի նկարը։ Հա՛, ունինք, ո՛չ չունինք։ Մի հատ միայն ունինք, այն էլ մեզ մօտ կը մնայ։ Աշոտս ասում էր, որ նոր նկարուել է և իւր մօտն են այդ նկարները։ Հիւանդացաւ. ուշք ու միտքս կորցրի և մոռացայ հանել նրա գրքերի սնդուկից նկարները։ Ոտքերումս և ձեռքերումս ոյժ չի մնացել, խնդրում եմ, դո՛ւք բերէք գրքերի սնդուկն այստեղ, փնտրեցէք և նկարներից մէկը վերցրէք ձեզ համար։

Ես մօտ գնացի պահարանին, հանեցի սնդուկը և կողքից կախած փոքրիկ բանալիքով բացի ու սկսեցի քրքրել։ Նկարները գտայ, սակայն և այնպէս հետաքրքրութիւնս ինձ ստիպեց Աշոտի բոլոր գրքերը մի առ մի տեսնել։ Այս հաճելի գործողութեան ժամանակ ձեռքս ընկաւ մի թղթակալ, որի մէջ կար մի նորագիր, սակաւաթուղթ ձեռագիր։ Եւ սկսեցի թերթել։ Դժուարընթեռնելի

ձեռագրով գրած, տեղ-տեղ ամբողջ երեսներ կամ տողեր ջնջած ու սևացրած, մի քանի տեղ էլ միջից թղթեր պոկած գրուածք էր դա։ Երևում էր, որ սևագրութիւն է։ Ձեռագրի միավանկ, երկու բառից բաղկացած վերնագիրը գրուած է այս երկտողի ճակատին. բայց ձեռագրի խորագիրն ունի իւր ներքևում մի հաղիւ նկատելի, փակագծի մէջ գրուած, բառ՝ «խոստովանութիւն», իսկ լուսանցքում նշանակուած է տարեթիւը և ամսաթիւը, որից եզրակացրի, որ «Մի օրը» Աշոտը գրել է ուսումն աւարտելուց անմիջապէս յետոյ։

Աշոտ Դրանիկեանի ձեռագիրն այժմ անփոփոխ հրատարակում եմ և դնում մեր ընթերցող հասարակութեան առաջ, ենթադրելով որ երիտասարդ ուսանողի անկեղծ և հապճէպով գրած տողերը քիչ թէ շատ հետաքրքրութիւն կը զարթեցնեն ընթերցողների մէջ, մատնացոյց անելով մեր ընտանեկան, դպրոցական և մասամբ հասարակական կազմակերպութեան թերի, պակասաւոր և ցաւոտ կողմերը։ Ի Հարկէ դա նոր հարց ու խնդիր չէ. շատ և շատ անգամ այդ մասին խօսք ու կռիւ է եղել, վէճ ու պայքար է մղուել մեր ինտելիգէնտ շրջաններում և մամուլի մէջ։

* * *

1

Գեղեցիկ էր այդ մայիսեան արշալոյսը։ Ես երբէք չեմ մոռանում այն։ Երկնքի արևելեան կողմը բացուել էր։ Բիւրաւոր գոյներով ներկուել էր երկնակամարը։ Գոյներն այնքան վառ էին, այնքան աչք գրաւող և խտտեցուցիչ։ Ասես թէ երկինքը կամենում էր մրցել գարնանային բնութեան սքանչելիքների հետ։ Իսկ գարնանային բնութիւնը. այն ևս ոչնչով յետ չեր մնում երկնային գեղեցկութիւններից։ Այն ևս հրաշալի էր, զմայլեցնող։ Մենք, հողի մարդիկս, աւելի սիրում ենք երկրային փայլը, պերճութիւնը, քան երկնային աննման, թովիչ տեսարանները։ Մի բնազդական, անգիտակցական ոյժ, զօրութիւն դրդում է մեզ դէպի երկիրը, դէպի բնութիւնը։ Մենք սիրում ենք նրան, անսահման, անհուն և անպատմելի խանդակաթութեամբ։ Եւ իրօք, ո՞նց կարելի է չ՝սիրել մայիսեան երկրաւոր հրաշալիքները։ Ամբողջ բնութիւնը շունչ առած գործում է։ Ամեն ինչ հիացնում է, սրտի թրթիռ և յոյզ է պատճառում։ Լայնատարած մարդս իւր դիւթական բնութիւնը արձակող ծաղիկներով, թռչունների երգերը քաղցրանուագ

դայլայլներով, բարակ, քնքոյշ զեփիւռի մեղմանոյշ սուրումը թաւիշ խոտերի և ծառերի վրայով, տերևների սրտագրաւ փսփսուկը, գաղտնի ու խորհրդաւոր զրոյցը—այս բոլորը, բոլորը հոգեղէն մարդու վրայ այնպէս են ազդում, այնպէս են յուզում, որ նրա հոգին թև առած ձգտում է դէպի վեր, դէպի ինչ որ մեծ, անհասկանալի ու հսկայական վեհութիւն։

Բայց այդ անուշ առաւօտը հոգիս մռայլ մտածումների բովարան էր ներկայացնում։ Թեղուկ, վշտալի և սրտաճմլիկ մտածումներ։ Ես բնութիւնը սիրողներից եմ, ես գրեթէ պաշտում եմ նրան։ Սակայն ինչ անէի։ Հոգիս հակապատկեր էր կազմում բընութեան զուարթութեան, թարմութեան և աշխուժութեան հետ։ Այնտեղ կեանքը թունդ եռում էր, իսկ իմ հոգում թոյլ մարում։ Այնտեղ պատրաստւում էր մի տօնական փառաւոր հանդէս, իսկ իմ սրտում հնչւում էր մելամաղձիկ, ծանր ու մռայլոտ վշտերգ։ Ճիշտ այդպէս բնութեան սիրահար մի դատապարտուած, որ արշալոյսի ժամին գլուխը պէտք է դնէ դահճի կացնի տակ, ուշադրութեան մի մասն է միայն զբաղեցնում բնութեան վսեմ հրաշալիքով, իսկ մեծագոյն մասը դրաւուած է հոգեկան յոյզերով, տխուր և տրտում խոհերով։ Եւ իրօք. ես երբէք չէի տխրել այնպէս։ Կանգնած մեն-մենակ բարձր պատշգամբի վրայ, աչքերս յառած դէպի հեռուն, մտորմունքների մէջ խորասուզուած։ Ի՞նչ էր պատահել։ Չէ՞ որ իրաւունք ունէի այդ օրը բոլորից շատ ուրախ և զուարթ լինելու։ Աւարտմանս վկայականը պէտք է յանձնէին։ Գիշեր և ցերեկ, տարիներ շարունակ սպասել էի այդ երջանիկ օրին։ Պարտականութիւններս աշխատել էի անթերի կատարել։ Արել էի այն բոլորը ինչ որ պահանջել էին, ինչ որ դաստիարակիչներս ճշմարիտ և խելացի ուսանողի գլխաւոր նպատակը էին համարում և առաջադրում էին ինձ՝ կատարելու համար։ Եւ այժմ, երկար ու ձիգ տարիներից յետոյ, ուսանողական պարտքերիս ու պարտականութիւններիս շրջանը բոլորելով՝ եկել հասել էր ցանկալի ժամը։ Միայնացած առանձնութեան մէջ, վերջին անգամ կեանքի հոգսերից ազատ ուզում էի թափանցել հոգուս խորքը, քրքրել անցեալիս տխուր և ուրախ, մռայլ ու պայծառ յիշատակները։ Մխիթարական շատ քիչ բան էի գտել վերյուշներիս մէջ։ Հէնց դրա համար էլ այդ ժամին այդպէս յուսահատ էի տրտում և թալկադէմ։

Տարիների մի ամբողջ շարք։ Ի՞նչ եմ արել, ի՞նչ բանի համար եմ պատրաստուել և այժմ ո՞ւր պիտի գնամ։ Արդեօք ես գիտե՞մ իմ նպատակը, գիտեմ թէ քայլերս ո՞ւր պիտի ուղղեմ։ Ե՛ս, որ ամեն օր թութակի պէս կրկնում էի սեփական ոյժերի վրայ

վստահանալու և յենուելու գաղափարը, ինքնավստահութիւն և հաւատ՝ յաջողութեան համար, ես, որ միշտ զգուշացնում էի ուրիշներին օտար հովանաւորութիւններից խուսափելու մասին, այժմ գիտակցութիւնս պարզօրէն ինձ հասկացնել է տալիս, որ կարօտ եմ հովանաւորութեան և առանց ուժեղ նեցուկի շուտափոյթ, պէտք է կորստեան վտանգի ենթարկուեմ և գահավիժուեմ դէպի մի անդունդ, որտեղ լռում են կեանքն ու երգը։

Այսպէս վշտագին մրմնջում էի դառնակսկիծ շեշտերով խեղտուկ ձայնով է հառաչանքներով։ Նոյն եղանակով շարունակում էի խորհրդածութիւններս, աւելի և աւելի խորասուզուելով մտահոգութեան և մռայլութեան մէջ։

—Ուրեմն տարիների մի պատկառելի շարքը, դառն ու վշտոտ օրերի վիթխարի քանակը կորո՞ւել են ինձ համար ապարդիւն, առանց մի շօշափելի հետք թողնելու, առանց օգտի, մխիթարութեան։ Էլ ինչո՞ւ համար թոքեր մաշել, փոշի ծծել, անքուն գիշերներ սպանել, երբ վերջ ի վերջոյ պէտք է մնաս ձեռնունայն, դատարկ և կեանքի համար անպէտք ու ոչինչ լինելու խայթիչ, մեռցնող գիտակցութեամբ։ Բայց մթթէ ես մեղաւոր եմ, մթթէ չեմ արել այն, ինչ որ ներել են իմ ոյժերը, ինչ որ հնարաւոր է եղել։ Ես ծոյլ չեմ եղել, այլ չափազանց աշխատասէր, տոկուն, եռանդոտ։ Ի՞նչպէս և ի՞նչով բացատրել այս առեղծուածը։ Ես ինձ անպարտ էի համարում և իբրև մի անմեղ զոհ ներկայանում ներքին դատաստանիս առաջ։

Հապա ո՞վ էր մեղաւոր։

II

Ուսանող Աշոտ Դրանիկեանն եմ ես.—ունևոր ծնողների զաւակ։ Մանկութիւնս և պատանեկութիւնս անցրել եմ հայրենիքում, ծնողներիս մօտ։ Ուրախ և բախտաւոր օրեր շատ չեմ տեսել։ Ուսումս շարունակելու համար՝ հարկադրուած, գրեթէ փախէփախ, օտարութիւն եմ դիմել։ Նոր կեանքն ու նոր պայմանները բաւական աղդել են կենցաղիս, վարք ու բարքիս ընթացքիս վրայ։

Տգէտ էին ծնողներս։ Հայրս՝ բռնակալ, մայրս՝ ստրուկ։ Ընտանեկան միջավայրից ստացած տպաւորութիւններս անմխիթար, ճնշող և անհրապոյր էին։ Խաւարի թագաւորութիւն, ապականութեան բոյն,—այսպէս եմ անուանում այն ընտանիքը, որտեղ անցրել եմ ամենի համար այնքան քաղցր մանկութեան և պատանեկութեան տարիներս։

Հայրս մի հրէշ էր, որ իւր անբարոյական, զզուելի և կեղ-

տոտ վարքով ամբողջ ընտանիքի ներքին կեանքի վրայ մի սև բիծ էր թողել։ Դրսում մեր ընտանիքը քիչ թէ շատ յարգուած էր, որովհետև հայրս այն մարդկանցից չէր, որոնք այնքան հեշտութեամբ կարողանում են մատնել իրանց ընտանեկան կեանքի գաղտնիքները։ Ապրում էր ըստ երևոյթի երջանիկ և նախանձելի կեանքով։ Պահում էր մի շարք ծառաներ։ Բոլորի հետ էլ այս կամ այն կերպ կապուած էր։ Ունէր երկու աղախին և մի սպասաւոր։ Աղախիններից մէկը իւր նախկին ընկեր-վաճառականի կինն էր, որի ամուսնուն ճարպիկ կերպով կարողացել էր աղքատացնել, սնանկ հրատարակել և թոքախտով հիւանդացնելով գերեզման գլորել։ Այժմ նրա կնոջ և երկու երեխաներին պահում էր «հոգու համար» ամուսնու տանեակ հազարներից բաղկացած դրամագլուխը պարարտ քսակի մէջ զետեղելուց յետոյ։ Միւս աղախինը մի դեռահաս աղջիկ էր, որի հետ յանցաւոր կապեր ունէր։ Հօրս էական գծերից մէկն էլ այն էր, որ նա սարսափելի ժլատ էր։ Սակայն ժլատ՝ պէտք է խոստովանել՝ ոչ իւր ընտանիքի համար, ուտող-խմող, զուարճասէր մարդ էր։ Ժլատութեան ախտը սոսկալի ձևերով էր արտայայտւում նրա գործառնութիւնների մէջ։ Ես պարզ յիշում եմ նրա մի երազի պատմութիւնը, որ այնուհետև զարմանալի ազդեցութիւն ունեցաւ նրա կեանքի վրայ և որի յիշատակն անջնջելի մնաց մինչև վերջը։ Հայրս պատմում էր, որ մի գիշեր տեսել է, որ ինքը իբր թէ անցնում է մի սոսկավիթխար մեծութիւն ունեցող, հսկայափառ սարի տակով։ Դարնանային մի գեղեցիկ օր է լինում, յանկարծ լսում է մի որոտընդոստ, հուժկու ձայն։ Սարսափում է և դողում։ Սարից ճեղքւում և պոկւում է մի խոշոր բեկոր և ընկնում ներքև։ Նա ահաբեկւում է. վտանգն անցնում է անվնաս։ Այդ ընկած քարաբեկորը ոսկու գոյն է ստանում. հայրս մօտենում է և համոզւում, որ ոսկի է դարձել այն։ Մի գերբնական ոյժի զօրութեամբ վերցնում է և բերում տուն։ Այնուհետև հարստանում է, այն էլ ինչպէս։ Աշխարհիս ամենամեծ միլիոնատէրերը նրա սպասաւորներն են դառնում։ Նա ապրում է փարթամ, ճոխ և երջանիկ կեանքով։

Այս երազը հօրս վրայ ահագին ազդեցութիւն էր թողել. նա ամբողջովին համակուեց հարստանալու տենչով և ձգտումով։ Ոչ մի բան նրա համար այնքան թանկ և ազդեցիկ չէր, որքան այդ ձգտման առաջ բերած յոյզը, սրտի թրթիռը։ Հօրս հոգին որոշ չափով մեղմացաւ, փափկացաւ և բանաստեղծական ցնորքների, մտորման և խոհանքի բնակարան եղաւ։ Ի հարկէ, ընդհանուր ընթացքը, վարք ու բարքը չը փոխեց։ Նա մնաց նախկին անբարոյականը, կրքոտը։ Իւրաքանչիւր մի հնչիւն, իւրա-

քանչիւր մի շշուկ և ամենաչնչին ձայն՝ երազանքի գիշերուանից յետոյ՝ նրան գրաւում էր, սիրտը շարժում և ալեկոծում։ Նրա աչքերում արտասուքի կաթիլներ էին երևում այդպիսի բոպէներին. նա մի տեսակ հոգեկան երազայոյզ վիճակի մէջ էր ընկնում, սրտադող վեր էր թռչում և գոչում «ձայնը, ձայնը», որով ուզում էր յիշեցնել բեկորի ճեղքուելու, պոկուելու ձայնը։ Շատ անգամ էլ զրուցելիս խօսքի թելը կտրում էր և ամբողջ ուշադրութիւնը լարում որևէ ձայն լսելու համար, լինի դա ժամացոյցի թէ արծաթէ գդալի զրնգոց։ Քոյրերից մէկը գրեթէ ամեն իրիկուն դաշնակարանի վրայ նուագում էր հօրս համար։ Գեղեցիկ նուագները գրաւում էին նրա հոգին, զմայլեցուցիչ յոյզերի մէջ նետում։ Նրանք յիշեցնում էին հօրս՝ երազի մէջ տեսած այն գարնանային սքանչելի օրը, երբ տեղի ունեցաւ նոյնքան և աւելի հրաշալի հրաշքը։ Մէկ էլ տեսար հայրս իրիկնադէմին եկաւ տուն և խսկոյն քրոջս թևից բռնեց, տարաւ դաշնակարանի մօտ և սկսեց մեղմ, փաղաքշիչ ձայնով խօսել. «Աղջիկս, արի նստիր և նուագիր, բայց այնպէս լաւ, այնպէս լաւ, որ ես կարծեմ, թէ գարունք է, ոարը առջևս է, յանկարծ բեկւում է բեկորը և ես մի ձայն եմ լսում, մի խորհրդաւոր, զմայլեցնող ձայն»։ Քոյրս նստում էր և սկսում նուագել։ Հայրս էլ էր նստում դաշնակարանի կողքին. գլուխը յենած ձեռքերին։ Աղջիկը սկսում է նուագը։ Մի քանի բոպէից յետոյ հայրս սրտաթունդ ցատկում էր և գոչում բարձրաձայն գրեթէ գոռալով. «Ձայնը, ձայնը»։

Այո, հօրս այլանդակ պատկերը իմ յիշողութեան մէջ միայն այդ պայծառ կէտն է թողել, եթէ միայն կարելի է այդպէս անուանել յիշեալ յատկութիւնը։

Մայրս մի խեղճ կին էր։ Թէև բնաւորութեամբ բարի, բայց սահմանափակ խելքի տէր, մի բոլորովին խեղճ ու պարզամիտ անձն էր, որ կրթական ոչ մի ազդեցութիւն չէր կարող ունենալ զաւակների վրայ։ Նա միահեծան, կրակոտ և դիւրաբորբոք ամուսնու հլու, հնազանդ գերին էր։ Այդ կինը շատ բան գիտէր իւր ամուսնու արարքների մասին, իւր աչքի առաջ, իւր ընտանեկան յարկի տակ ամուսինը գործում էր ամեն տեսակ խայտառակութիւններ, անասելի յանդգնութիւններ։ Ի՞նչպէս մռայլ ու արցունքոտ էին անցնում նրա օրերը։ Ո՛չ մի ուրախութիւն, ոչ մի երջանիկ վայրկեան։ Նա այրւում, տապակւում էր, բայց բողոքել ժպիրհ ամուսնու անօրէնութիւնների դէմ, ձայն ու ծպտուն հանել չէր կարող։ Նա այնքան խղճուկ, այնքան ապիկար կին էր, որ իւր միշտ արգահատանք շարժող խուլ բողոքներով սիրտը ցաւեցնում, կսկծեցնում էր։ Արտասուաթոր աչքերով գիշեր-

ներ էր լուսացնում։ Ամուսինը թղթախաղի հերոս էր։ Նա խմում էլ էր։ Եւ այդ բոլորի պատճառով տուժողը, տանջուողը խեղճ ու կրակ այդ տգէտ կինն էր։ Միայն ամուսինը չէր նրան հոգեպէս սպանողը, զաւակներն ևս պակաս չէին նրան վիշտ ու հոգս պատճառում։ Նա ունէր երկու տղայ և երկու աղջիկ. տղաներից աւագը—ես եմ։ Իսկ փոքրը տեղական դպրոցի մի աշակերտ՝ 18 տարեկան։ Մի փչացած, վաղահաս, կրքոտ և անբարոյական արարած, որ ամբողջ օրեր զուարճութիւնների, կեր ու խումի, վատ ընկերների և յանցաւոր վարք ու բարքի տէր կանանց շրջանում էր անցկացնում։ Ոչինչ չէր ազդում նրա վրայ. ոչ դպրանոցի վարչութեան յորդորները, ոչ «բարեացակամ» հօրս մշտամրմունջ խրատներն ու սպառնալիքները, որոնք աւելի և աւելի գրգռում էին նրան։ Անսանձ, վայրենի բնազդների տէր մի խըստասիրտ տղայ էր։ Զօրեղ կրքերի տէր, նպատակի հասնելու համար միջոցների մէջ խտրութիւն չդնող, անզուսպ ըզգացմունքների և գարշ մոլութիւնների գերի մի հեշտասէր էր։ Ի՞նչ ասես, որ չէր գործում, ոչ աջ էր նայում, ոչ ձախ։ Սարսափելի կնասէր էր։ Մեր դեռահաս աղախինը նրա հետ ևս կապեր ունէր։ Մի գեղեցիկ օր այդ սիրուն աղջիկը յղացաւ, հայրս միջոցներ էր փնտրում վերահաս վտանգի, անպատեհութեան առաջն առնելու։ Տղան իմացել էր, թէ բանը ինչումն է։ Անդիմադրելի զգացկոտութեամբ համակուած՝ ուզեց գնդակահար անել «երդմնադրուած սիրեկանին», սակայն հօրս ջլապինդ ձեռքի մի հզօր հարուած նրան շնչասպառ փռեց գետնի վրայ։

Այդ չարաբաստիկ օրը ես գրեթէ փախայ հայրական տանից, չկարողանալով այլևս հանդուրժել շուրջս կատարուող սըրբապղծութիւններին, չարիքներին և նողկալի դէպքերին։ Ես չէի կարող մնալ և կռուել, դեռ պատրաստ չէի զգում ինձ՝ կռիւ սկսելու մի ապականուած ու այլանդակ միջավայրի դէմ. ես փախայ, որպէսզի վերադառնայի աւելի զօրեղացած։

Երկու քոյր էլ ունէի, որոնք մօրս համար ցաւ ու կրակ էին դարձել։ Տեղական չորսդասեան օրիորդաց դպրանոցն աւարտել էին։ Պատրաստւում էին դիմաւորիչ մտնելու։ Պատրաստող ուսուցիչը մի օտարազգի երիտասարդ էր։ Հայրենի քաղաքից հեռանալուց յետոյ՝ ընտանիքից ստացած իմ անցեալ տխուր տպաւորութիւններիս պակասը լրացրեց կրտսեր եղբայրս, յայտնելով նամակի միջոցով այնպիսի տեղեկութիւններ, որոնք ինձ համար այնքան էլ անյայտ և անսպասելի հանգամանքներ չէին. ես գրեթէ ամեն բան գիտէի, թէև մութ և ոչ պարզ կերպով։

Նախազգում էի, որ համանման մի բան տեղի պիտի ունենար։ Եւ տեղի ունեցաւ։ Ահա թէ ինչ։ Քոյրերիս ուսուցիչը, օտարազգի երիտասարդը, մի ամբողջ պատմութիւն էր սարքել։ Իւր աշակերտուհիներին առանձին-առանձին սէր էր խոստացել, երկուսին էլ խաբել, ամուսնութեան երդում տուել և մի գեղեցիկ օր թողել նրանց ու շտապով հեռացել քաղաքից, Աստուած գիտէ թէ որտեղ...

ԱՐՍԷՆ

Կը շարունակուի

Տ. ՄԵՍՐՈՊ Ա. ԱՐՏԱԶԵՑԻ

180. Չորեքտասաներորդ դարուն երրորդ քառորդին հասած ենք, որ է Ռուբինեանց անկման և կործանման միջոցը։ Թէպէտ եղելութիւնը քաղաքական, սակայն իւր եկեղեցական նշանակութիւնն ալ ունի, քանի որ կրօնային ուղղութեան և օտարասէր զգացմանց արդիւնքն եղաւ։ Կիլիկիոյ քրիստոնեայ իշխանութեան անհնար պիտի չըլլար Եգիպտոսի հզօր իշխանութեան մօտ ապրիլ, եթէ Լատինաց հետ մտերմական և ներքին յարաբերութիւններ մշակելով կասկածելի չդառնար Եգիպտացւոց աչքին և եթէ Արևմուտքէ խոստացուած օգնութիւնները խաբէական միջոցներ չլինէին լոկ կրօնական հպատակութիւն մը կորզելու։ Բայց մենք պատմութիւնը պիտի ներկայացնենք միայն, և քաղաքական կացութիւնը պատկերացնելու համար, քանի մը տեղեկութիւններ աւելցնենք։ Կոստանդին Պաղտինեան տասնուհինգ տարիէ ի վեր կը թագաւորէր, երբ Յակոբ Բ. մեռաւ, և Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսացաւ (1359)։ Սորա չորրորդ տարին մեռաւ Կոստանդին (1363), և ժառանգ չթողուց, որովհետև զաւակները ծաղիկ հասակի մէջ մեռած էին։ Կիպրոսի Լուսինեանները ուզեցին գահը գրաւել. և անմիջապէս Ճիվանի որդին Բոէմոնդը Հռովմ ղրկեցին, որպէսզի պապէն պսակուելով և օգնութիւններ ընդունելով Կիլիկիա դառնայ. այլ Բոէմոնդ ճանպորդութեան ատեն Վենետիկի մէջ մեռաւ (1363)։ Կիլիկիոյ ազգային կուսակցութիւնը, որ ժառանգական խնդրով ժամավաճառ կը լինէր, վերջապէս համաձայնեցաւ վախճանելոյն հօրեղբօրորդին թագաւորեցնել, որ էր Լևոն Ե.-ի խնամակալներէն Հեթումի որդին Կոստանդին, Նղբրի իշխանը (1364)։ Նոյն միջոցին Կիպրոսի թագաւոր Պետրոս Լուսինեան Հռովմ գացած էր, և Ուրբանոս Ե. պապէն կոնդակ ստացաւ, որպէս զի վախճանեալ Ճիվանեան Բոէմոնդի տեղ անոր կրտսեր եղբայրը Լևոն, Հայոց թագաւոր հռչակուի։ Հռոմէ դառնալուն Պետրոս տեսաւ որ Կոստանդին Հեթումեան արդէն թագաւոր հռչակուած էր։ Սա կանխեց և առատ ընծաներով և խոստումնե-

բով Պետրոսի պաշտպանութիւնը խնդրեց, Պետրոս հաւանեցաւ և պապէն առած կոնդակը մէջ տեղ չը հանեց (1364), մանաւանդ որ Կոստանդին նոյն իսկ Կոռիկոսը ու Կիլիկիոյ մէկ մասը Պետրոսի չը թողուր։ Հինգ տարի ետքը Պետրոս սպանուեցաւ (1369) երբ Կիլիկիա պիտի անցնէր, և Յովհաննէս Լուսինեան Կիպրոսի թագաւորութեան խնամակալ եղաւ։ Կոստանդին այն ալ շահեցաւ, և իւր իշխանութիւնը շարունակեց, մինչև որ Պետրոս Ա.-ի որդին Պետրոս Բ. հօրը իշխանութիւնը ստանձնեց (1373)։

181. Մեսրոպ կաթողիկոս, որ Յակոբ Բ.-ի յաջորդեց (1359), Արտազեցի կը կոչուի, վանքի Արտազու Ս. Թադէոս մայրավանքին առաջնորդն էր, և թերևս Զաքարիա Ծործորեցիի անմիջական յաջորդը, որ յայտնի էր իբր Սսոյ կանոններուն պաշտպան մը։ Հարկաւ Մեսրոպ ալ նոյն հոգւով տոգորուած էր, և ուրիշ կերպ ալ չկրնար եղած ըլլալ, վանի որ կրցաւ Պաղտինեան Կոստանդինի պաշտպանութեան ներքև կաթողիկոսական աթոռ բարձրանալ, առանց Կիլիկիոյ եպիսկոպոսներէն լինելու։ Նոյն բանը կը հաստատուի նաև այն պատուոյ ցոյցով, զոր Մեսրոպ ընծայեց Իննովկենտիոս Զ. պապին, իւր գահակալութիւնը ծանուցանելով անոր յոյժ պատուադիր զգացումներով։ Այսու հանդերձ Մեսրոպի վրայ կը գտնենք աղգային եկեղեցւոյ և հնաւանդ ծէսերու անկեղծ սէր մը, որով կը ձեռնարկէ անոնք վերակենդանացնել և նորամուտ սովորութիւնները հետզհետէ խափանել։ Ազգին գայթակղութեան ամենամեծ կէտն էր բաժակին ջուր խառնելը. և Մեսրոպ յաջողեցաւ նոր ժողով մը գումարել ի Սիս (1361), և պաշտօնապէս ջնջել Սսոյ գլուխներուն այն կանոնը, որ բաժակին ջուր խառնելուն կը պատկանէր։ Թէպէտ միայն այս կէտը կը գտնենք պատմագիրներէն յիշուած, սակայն այդ միակ կէտն ալ բաւական է դիտելու, թէ ինչպէս Սսոյ նախընթաց ժողովին (1307) սկսելով հետզհետ աճող ու զօրացող լատինամոլութիւնը սկսաւ տեղի տալ և աւաղել։ Մեսրոպ իւր այդ որոշմամբ խղած կըլլար Հռոմի հետ ներքին կապակցութիւնը, և իրաւունք ալ ունէր, վասն զի քաղաքական օգնութեանց պայմանով հաստատուած կրօնական յարաբերութիւն մը՝ այլ ևս գոյութեան պատճառ չունէր, երբոր քաղաքական յարաբերութիւններ ջնջուելու աստիճանին հասած էին։ Եգիպտացիք գրաւած էին Ադանան և Տարսոնը (1360), իսկ Լատինացիք և ոչ իսկ օգնելու շարժում կը ցուցնէին։ Կոստանդին Պաղտինեան, որ դեռ կը թագաւորէր, նա ալ վերջի վերջոյ համոզուած էր նոյն գաղափարին, որ ազատաբար թող տուաւ Մեսրոպին ժողովական որոշմամբ հակալատին գործողութեան մը յանգիլ։ Մեսրոպի վրայ ուրիշ գիտելիք չունինք, բայց եթէ տաս-

սուերեք տարի պաշտօնավարելէ յետոյ խաղաղութեամբ վախճանիլը (1372)։

Տ. ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե. ՍՍԵՑԻ

182. Մեսրոպ յաջողցուցեր և նուիրագործեր էր Հեթումեան Կոստանդինի թագաւորութիւնը, որ նուազ ևս միտեալ էր Լատիններուն կողմը, քան իւր նախորդը իւր վերջին տարիներուն մէջ։ Փոխանակ պապական հովանաւորութեան դիմելու, նա յաջողած էր դրամի զօրութեամբ շահիլ Կիպրոսի Լուսինեան թագաւորն ու խնամակալը, որք շահու և դրամի սիրոյն մինչև իսկ պապական կոնդակ մը ծածկելու և մերձաւոր ազգականի մը կարծեցեալ իրաւունքը անարգելու համարձակած էին։ Կոստանդին Հեթումեան պապերէն յոյս մը պիտի չունենար. քանի որ անոնք Լուսինեան Լեւոնը, Ճիվանի որդին, թագաւորեցնելու որոշում տուած էին։ Մեսրոպի յաջորդը ընտրուեցաւ Հեթումեան Կոստանդինի հովանաւորութեամբ, և եղաւ Կոստանդին անուն եպիսկոպոս մը, զոր պիտի կոչեմք Կոստանդին Ե. Սսեցի (1372), այլ ոչ իւր նախընթացին և ոչ իւր գործունէութեան վրայ կարող ենք տեղեկութիւններ տալ։ Մխիթար կաթողիկոսի ժողովին մէջ Կոստանդին անունով եպիսկոպոս մը կայ, Կիլիկիոյ վիճակներէն, այլ վիճակն ալ չէ յիշուած և նոյնութիւնն ալ հաստատել դժուար է։ Թագաւորութիւնը կարի անձուկ սահմաններու մէջ փակուած էր ի Սիս, զի Ադանա և Տարսոն Եգիպտացւոց ձեռքն էին, և անոնց կողմէն ամիրա մը կը նստէր Տարսոնի մէջ, որ Մանչակ կոչուած է Թլկուրանցիին քերթուածներուն մէջ (Սիսուան 225)։ Մանչակ քանիցս Սսոյ վրայ յարձակեցաւ, և Կոստանդին թագաւոր յուսահատութեան մէջ ինկած անձնատուր լինել կը պատրաստուէր, արքունի գանձերը ապահովելով։ Այդ պարագային կը զօրանայ Լուսինեանց կուսակցութիւնը, որուն համամիտ կը գտնուէին Կոստանդին կաթողիկոս, և Մարիամ թագուհի, Պաղտինեան Կոստանդինի կինը, որ Օշին պայլին և Յովհաննա թագուհիին աղջիկն էր։

183. Հեթումեան Կոստանդինի հակառակ կուսակցութիւնը, տեղեկանալով թէ Կոստանդին արդէն բանակցած է Եգիպտացւոց հետ Սիսը անոնց յանձնելու, սպաննեց զայն (1373 ապրիլ) տասը տարի թագաւորութենէ ետքը, և թագաւորութեան խնամակալ հռչակեց Պաղտինեան Կոստանդինի այրին Մարիամ թագուհին, և անմիջապէս պատգամաւորութիւն մը ղրկեց Կիպրոս, Պետրոս Բ. թագաւորին, որպէս զի Ճիվանեան Լեւոնի թագաւորելուն օգնէ

Պատգամաւորութիւնը Լևոնի ալ ներկայանալով ծանոյց Կոստանդինի սպանութիւնը, և զինքն թագաւորութեան հրաւիրեց յանուն խնամակալուհւոյն և յանուն կաթողիկոսին, որ պէտք է լինի նախայիշատակեալ Կոստանդին Ե. (Դարդել 70)։ Պետրոս և Լևոն հաճեցան պատգամաւորութեան առաջարկին. այլ գործադրութիւնը խափանուեցաւ, որովհետև Կիպրացիք պատերազմ ունէին Գենուացւոց հետ, և Պետրոս Բ. պէտք ունէր Լևոնի, որ իւր զօրապետն էր։ Այդ պատճառով, թէպէտ Լևոն պաշտօնապէս ստանձնեց Կիլիկիոյ թագաւորութիւնը (1373), այլ չորս անձերէ խնամակալութիւն մը կազմեց, որ իւր կողմանէ Կիլիկեան կառավարէ մինչև իւր գալը։ Խնամակալներն էին. Մարիամ թագուհի Պաղտինեան Կոստանդինի այրին, Ռեմի կոմսուհի նոյն Կոստանդինի քայլը ու Գուիտոնի եղբայր Բոեմոնդ Լուսինեանի այրին, Բարթողիմէոս սեպուհ նոյն Բոեմոնդի անհարազատ որդին, և Վասիլ իշխան պարոն Թորոսի որդին։ Այս չորսերուն ընկերակից տրուեցան Կոստանդ ասպետ, Լևոնի զինակիրը իբր զինուորական հրամանատար։ և Մանուէլ իշխան, Նէապոլսոյ թագուհիին դեսպանը, որ հրաւիրակ եկեր էր Մարիամ թագուհին Նէապոլիս տանելու։ Ազգային պատգամաւորները, որոց գլուխ էր Լևոն իշխան Համուսի, գաղտագողի Սիս մտան, և պաշտօնապէս հրատարակեցին այդ կարգադրութիւնները, և Լևոնի դրօշը բարձրացուցին Սիսի ամրոցներուն վրայ (1373)։ Կոստանդին Ե. կաթողիկոս մասնակից էր այդ ամէն գործողութեանց, այլ երկար չեղաւ իւր պաշտօնավարութիւնը, զի միւս տարին (1374) վախճանեցաւ, երկու տարի կաթողիկոսութենէ յետոյ։

Տ. ՊՕՂՈՍ Ա. ՍՍԵՑԻ

184. Կոստանդինի մեռնելէն անմիջապէս ետքը, չորս խնամակալներու հովանաւորութեամբ կաթողիկոս ընտրուեցաւ (1374) Պօղոս եպիսկոպոս մը, որոյ նախնթացը անծանօթ կը մնայ պատմութեան մէջ։ Լևոն, թագաւորութեան յանձնառու ըլլալէ ետքը, շարունակեց Գենուացւոց դէմ պատերազմը վարել, այլ Համագոստա բերդին մէջ գերի ինկաւ, և հազիւ դրամով իւր ազատութիւնը ձեռք ձգեց, և Գենուացւոց պաշտպանութեամբ, մայրն ու կինը մէկտեղ առած Կիլիկիա անցաւ, և Կոռիկոսի ծովաբերդը ցամաք ելաւ (1374 ապրիլ 2)։ Այն տեղէն խորհեցաւ նախ Տարսոնի վրայ յարձակիլ, որոյ առու�ը դիւրին կը կարծէր, այլ Կոռիկոսի բերդապահին հակառակութեան երեսէն քիչ մնաց որ նորէն Գենուացւոց ձեռք իյնար։ Կոռիկոսի հայ եպիսկոպոսին օգնութեամբ ծովաբերդէն մեկնեցաւ,

և Ադանայի գետաբերանին մօտ ցամաք ելաւ, և երկու օր անընդհատ և արշաւասոյր ընթացքով և միայն քանուհինգ հեծեալներու ընկերակցութեամբ Սիս հասաւ և մեծաւ փառօք քաղաք մտաւ (1374 յուլիս 26)։ Պօղոս կաթողիկոս կը գանուէր Սսեցի բազմութեան գլուխը, որ քաղաքէն երեք փարսախ հեռու Նորեկ թագաւորը դիմաւորելու ելած էր։ Լեւոնի մայրը՝ իշխանուհին Սուլթան, և կինը՝ թագուհին Մարգարիտա, աւելի ուշ հասան հանդիսաւոր ուղևորութեամբ։ Հայեր ուզեցին որ Լեւոն Հայոց ծէսով և կաթողիկոսին ձեռքով թագաւոր օծուի, այլ Լեւոն հակառակեցաւ, պատճառելով թէ ինքն լատին ու հռովմէական է և իւր եկեղեցւոյն պաշտօնեաներէն միայն կրնայ օծուիլ, և թէ այդ նպատակով արդէն Կիպրոսէն լատին եպիսկոպոս մը և լատին մեռոն բերել տուած է, և թէ առաւել կը հաճի թագէն հրաժարիլ, քան թէ Հայոց կաթողիկոսէն օծում ընդունել (Դարդէլ 113)։ Բայց երբ տեսաւ թէ Հայեր շուտով չեն զիջանիր, իբրև յետին շնորհ ինքը զիջաւ, որ լատին եպիսկոպոսը աջ կողմէն և հայ կաթողիկոսը ձախ կողմէն, միատեղ եկեղեցի մտնեն, երկուքն ալ պատարագեն, և ապա ինքն նախ լատին եպիսկոպոսէն օծուի և յետոյ երկրորդ անգամ հայ կաթողիկոսէն ալ օծում ընդունի։ Այդպէս ալ գործադրուեցաւ (1374 սեպտեմբեր 14)։ Պօղոս կաթողիկոս, կ'երևի, չներեց Լեւոնի Հայոց եկեղեցւոյն դէմ ըրած նախատինքը. վասնզի մինչ յառաջագոյն իւր նախորդին հետևելով ամէն պատիւ ու պաշտպանութիւն չէր զլացած Նորընտիր թագաւորին, այնուհետև միտքը փոխեց, և Լեւոնի հակառակ կուսակցութեան մէջ կը գտնենք իւր անունը։

185. Այդ կուսակցութիւնը որ արդէն կար, և նախկին թագաւորներու բարեկամներէն կազմուած էր, ստուարացաւ օծման միջադէպով, և աւելի ալ շատցաւ երբ Լեւոն սկսաւ խնամակալները նեղել գանձի հաշիւ պահանջելով, և անոնցմէ Վասիլ իշխանը, ու Հեթումեան Կոստանդինի այրի թագուհին ժամանակ մը բանտարկեց։ Այդ առթիւ Աշոտ իշխան մը՝ ալ, որ բանտարկեալ թագուհւոյն եղբայրն էր, սկսաւ հակառակութիւններ գրգռել Բերբիայէ, ուր կը գտնուէր, այնպէս որ Լեւոն շուտով վարկը կորսնցուց, մինչև իսկ կուսակցութիւն մը՝ ալ կազմուեցաւ Լեւոնը թշնամիներուն յանձնելով շարունակ պատերազմներէ ազատելու։ Արդէն Սսոյ արտերն իսկ թշնամիին առջև բաց էին, և ութը տարիներէ իվեր մշակութիւնը դադրած էր, և պարէն բերող սայլերն ու գրաստները չէին կրնար ապահով երթևեկել։ Նոր տարւոյն սկիզբէն (1375 յունուար 5) Եգիպտացիք զօրաւոր բանակով պաշարած էին Սիսը, և ոչ ուստեք օգնութեան յոյս չէր մնացած։

Լևոն Սսեցիներու վրայ վստահ ըլլալու համար, կաթողիկոսէն սկսելով բոլոր եկեղեցականներէն և աշխարհականներէն հաւատարմութեան նոր երդում պահանջեց։ Նոյն միջոցին Մելիք ամիրա, Հալէպի կառավարիչը, նոր բանակով Սսոյ պաշարումը պնդեց (1375 փետրուար 24), և սովն ու տագնապը քաղաքին մէջ ծանրացան։ Լևոն ևս քանզևս ատելի դարձաւ, և Հայերը, Պօղոս կաթողիկոսի գլխաւորութեամբ, սկսան հաշտութիւն խնդրելու հոգ տանել, մինչ Լևոն պատերազմը շարունակել կուզէր։ Նոյն իսկ Լևոնի Կիպրոսէ բերած լատին սպաները, սկսան իրեն դէմ դառնալ, և միջնաբերդը մտնելով կ'ուզէին զինքն սպաննել (1375 մարտ 24). բայց Լևոն յաջողեցաւ փախչել ու ազատիլ։ Լատին հակառակորդներ օր մը ամրացեալ մնացին բերդին մէջ, և Լևոնի հայ զինուորներուն յարձակումները ընկրկեցին. այլ Դոմինիկեան կրօնաւոր մը գաղտնի մուտք մը գտաւ, և հայ զինուորներ յաջողեցան նորէն միջնաբերդին տիրանալ (1375 մարտ 25)։

186. Որչափ և Հայեր Լևոնի պաշտպանութեան համար լատին դաւաճաններուն դէմ ելան, սակայն տեսնելով որ ազատութեան յոյս չկայ. և արտաքին օգնութեան նշոյլն իսկ չերևիր, կաթողիկոսի նախագահութեամբ խորհրդակցութեան հաւաքուեցան, ու որոշեցին Եգիպտացիներուն անձնատուր ըլլալ, և որոշումին Լևոնի հաղորդեցին։ Սա թէպէտև իր կողմը բնաւ մէկը չունէր, և իր ընտանեօք առանձնացած սենեկի մը մէջ վիրաւոր կը պառկէր, այսու հանդերձ համաձայնել չուզեց, սակայն Պօղոս կաթողիկոս և Վասիլ նախկին խնամակալ, յանուն քաղաքացւոց, իրենց որոշումը յայտնեցին Մելիք Այշեխուր ամիրային, և Լևոնի անձին համար ալ ապահովութեան թուղթ մը ստանալով, բերդը դարձան։ Ամիրայն անհակառակ մտաւ և բերդին տիրեց առանց նոր արիւնհեղութեան, և Լևոնէն ալ առաւ բերդին բանալիները և գանձին հարստութիւնները։ Քանի մը օր ետքը (1375 ապրիլ 22) Լեւոն և իրենները, իբր քսան հոգի, բերդէն հանուելով Հալէպ տարուեցան, անկէ ալ Եգիպտոս։ Լատին պատմիչը կը դիտէ, թէ ճիշտ զատկի օրն էր, երբ Լևոն իբր գերի Սսոյ բերդէն կը մեկնէր, և ճիշտ նախընթաց զատիկի օրն ալ Կոռիկոսի բերդը հասած էր իբրև նորընտիր թագաւոր (Դարդէլ 89)։ Մեր նպատակէն դուրս է քաղաքական եղելութեանց վրայ աւելի երկարել։

187. Պօղոս կաթողիկոսին շատ տխուր կերպարան մը կը վերագրէ լատին պատմիչը (Դարդէլ 138) ցուցնելով զայն իբրև ուխտադրուժ մատնիչներու գլխաւորը, և Սսոյ անկումին մէջ աւելի դեր մը տալով Պօղոսի, քան որչափ որ Լաստիվերտցին կուտայ Պետրոսի՝ Անիի անկումին մէջ։ Սակայն զարմանալի չէ,

որ անկեալ իշխանի մը ջատագովը համարձակ մեղադրէ անոր համակիր չեղողները։ Մենք չպիտի համարձակէինք Հայոց եկեղեցին անարգողի հանգամանքն աւելցնել Լևոնի յիշատակին, եթէ իւր իսկ մտերիմը յստակ խօսքերով չպատմէր զայն։ Իսկ հայ եկեղեցւոյ կաթողիկոսի մը յիշատակին չպիտի կարենանք անպատշաճ խօսել, երբ նա իւր եկեղեցին անարգողին համակիր չկրցաւ մնալ, թէպէտ սկիզբէն ամէն համակրութիւն և օգնութիւն ցուցուց առատապէս, երբ տակաւին ազգի և եկեղեցւոյ պաշտօն մը կը սպասէր գտնել անոր մէջ։ Լևոնի ազգային պաշտպանութեան համար ընելիքն ալ իւր նշանակութիւնը կը կորսնցնէ, երբ նկատենք, որ տէրութիւնը կործանուած էր արդէն այն վայրկենէն, որ ամբողջ թագաւորութիւնը Սսոյ պարիսպներէն ներս միայն ամփոփուած էր, և Լևոն իւր նշանակութիւնը կորուսած էր այն օրէն, որ Արևմուտքի հզօր օգնութիւններով սպասուած թագաւորը, միայն քսանուհինգ հեծեալներով Սիս կը հասնէր։ Նոյնիսկ այդ Լատին հեծեալներն էին որ Լևոնի դէմ ապստամբեցան, և ծանր վտանգին մէջ նորէն Սսեցի Հայերը եղան, որ կաթողիկոսին հրամանին հետևելով, Լևոնի անձը պաշտպանեցին և ազատեցին։ Երբոր այլևս պատերազմի միջոցները կը պակսէին, խոհական խաղաղութիւնն էր որ պարագայից կը պատշաճէր, սակայն այս անգամ ալ Պօղոսի խորհուրդները Լևոնի մերժուեցան, հայ կեանքերը անխորհուրդ ամբարտաւանութեան զոհելու նպատակով։ Այդ խորհրդածութիւնները մեծ կշիռք ունին այն դատաստանի մէջ, զոր պէտք է կազմենք Պօղոսի վրայ։ Պէտք չէ նաև աչքէ վրիպեցնել, որ վերջին երեք կաթողիկոսները, Մեսրոպ ու Կոստանդին ու Պօղոս եղան, որոնք Անաւարզեցիէն սկսելով դէպի Լատինականութիւն տանող հոսանքը կեցուցին, և ազգային եկեղեցւոյն ինքնութիւնը զօրացուցին։

188. Պօղոս իբր կաթողիկոս և իբր ազգի գլուխ անձնատուր լինելով, գերի ինկողներու թիւին մէջ անցաւ, և այնպէս ալ Սիսէ հանուելով Մէլէքի զինուորներուն հետ Հալէպ տարուեցաւ (1375 Ապրիլ 30) և միւսներուն հետ բոլոր մայիս ամիսը այնտեղ անցուց, և Եգիպտոսի Սուլթանէն եկած հրամանին համեմատ Հալէպէ մեկնելով (յունիս 1) Գահիրէ հասան (յուլիս 9)։ Քանի մի օր ամէնքն ալ արգելական պահուեցան, և ապա Էշրէֆ Շաբան սուլթանին ներկայացան (յուլիս 22), որ յարգեց Մէլէքի տուած ապահովութեան գիրը։ և գերեալներուն հարցուց թէ ո՞ւր կ՚ուզեն մնալ։ Լևոն իւր հաճութեամբ և Գահիրէի Հայերուն եռաշխատութեամբ քաղաքին մէջ մնաց, Մարիամ այրի թագուհին, և Ռիմի կոմսուհին, և սորա երկրորդ ամուսինը Սոհիէ կամ Շա-

հուն ասպետը՝ Երուսաղէմ դացին, Իսկ Պօղոս կաթողիկոս և Հայոց գլխաւորներ խնդրեցին իրենց տեղը դառնալ, և հաւատարմութեան խոստմամբ աղատութեան շնորհը ընդունեցան. և նոյն տարին (1375) չ'վերջացած Պօղոս կրցաւ Սսոյ աթոռը դառնալ։ Այս պատճառաւ պարտաւորուեցաւ Պօղոս պաշտօնապէս դադրեցնել Հայոց թագաւորին համար աղօթքները, թէ պատարագէն և թէ ժամերգութենէն, ինչ որ անհրաժեշտ հետևանք էր Եգիպտոսի սուլթանին հպատակութիւնը ընդունելուն։ Լատին պատմիչը կ'ըսէ, թէ է Հայոց առանձինն ինչ բարւոք սովորութիւն, զի քահանայք ամենայն աղօթեն ի սուրբ պատարագին եւ յայլ մաղթանս հանապազօրեայս վասն թագաւորացն Հայոց վախճանելոց, եւ յայանէ յանուանէ վասն թագաւորին որ կենդանին է (Դարդէլ 154)։ Սակայն մի պարագայն ուղիղ չէ, վասնզի կենդանի թագաւորին համար աղօթքը ոչ թէ քահանայն կը ղրուցէ, այլ սարկաւագը կը հրաւիրէ, և ժողովուրդը կը պատասխանէ։ Այդ փոփոխութեան հետևանօք է, որ թէ անդաստանի և թէ քարոզներու մէջ Հայոց թագաւորութեան և թագաւորին բացատրութիւնները Քրիստոնէից բացատրութեան փոխուած են. և այնպէս ալ կը շարունակեն։ Պօղոսի մահուան նկատմամբ մասնաւոր տեղեկութիւն չունինք, միայն գիտենք թէ երեք տարի ալեծուփ պաշտօնավարութենէ ետքը խաղաղութեամբ վախճանեցաւ (1377)։ Պօղոս կը փակէ թագադիր գլուխներու գործակցութեամբ պաշտօնավարող կաթողիկոսներուն շարքը, որ սկսուած էր Դէորգ Բ. Գառնեցի հայրապետէն (876)։

ՄԱՂԱԲԻԱ Ա. Ե. ՕՐՄԱՆԵԱՆ

ԳԻՒՂԱՑԻՆ

Դաշտերը ծածկուեց սպիտակ սաւանով,
Գիւղացին հազիւ մտաւ ծածկի տակ.
Ամբողջ ամառը նա տանջուեց յուսով,
Որ ձմեռն ապրէ հանգիստ, անվաստակ.
Կերածը չոր հաց, խմածը՝ սառ ջուր,
Շատ քիչ է տեսել նա տաք կերակուր.
Խոնաւ գետինն էր նորա անկողին
Նա սպասում էր ցանկալի օրին.—
Հինգ խալվար ցորեն կալից կ'ծախեմ,
Գարու բերքովն էլ պարտքերս կ'տամ.
Աւելցած փողով հարսանիք կանեմ
Տղիս, աղջկանս, «ծաղը»*) կ'կանչեն.
Բայց ով տեղեակ է ընութեան խաղերին,
Նա չէ հաւատում այդ երազներին.
Մայիսին սաստիկ, մեծ կարկուտ տեղաց,
Խեղճի մուրազը փորումը մնաց.
Իսկ նա ինչ տարաւ իւր վար ու ցանքից
Եւ ինչ ստացաւ գարուց ու ցորնից.
Եկած բերքերը տուեց պարտքերին,
Տուն գնաց, դարդակ ջվալը ուսին.

---

*) Ծաղ կանչել. գիւղական սովորութիւն է, որ հարսնեքաւորները ընծայ են տալիս նորապսակներին ոսկու, արծաթեայ ամաններով և փողով, ըստ կարողութեան և պատուի.

Դարձեալ նորից պարտք, նոր ցորեն փոխ առ,
Տուր մեծ վերադիր, մինչև գալող կալ.
Այսպէս է ապրում թշուառ գիւղացին,
Ամբողջ ձմեռը, ձեռները ծոցին։
Բաղդաւոր է նա ով որ իւր տանից
Սերմ ունի ցանած, բերած իւր կալից.
Երջանիկ է նա, ով իւր գրպանից
Հարկն է վճարում. հարուստ ամենքից.
Իսկ դու շատերի ապրուստը գիտես.
Գիւղի բարեկամ, գնա ինքդ տես,
Մարդիկ տգէտ են, տիրում է խաւար,
Մի դպրոց չ'կայ ողջ գիւղի համար.
Արուեստանոցի տեղակ գինետուն.
Այդ տունը քանդող, որջը, գիւղացուն.
Չ'կայ գիւղական մի շտեմարան
Նեղ օրուայ համար միակ յենարան,
Իսկ բժշկական •գնութեան մասին
Կարծես մտածող չ'կայ բնաւին.

Այդպէս են գիւղեր, մեծ շէն և աւան,
Այդպէս է ամբողջ գաւառն Ապարան։

Մ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍԱՍԱՆԵԱՆՑ

ԵՒ

ԻՐԱՆԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ ԱՐԱԲԱՑԻՆԵՐԻՑ

(Ա. Կրիմսկու)

Լազարեան ճեմարանի մասնագիտական դասարանների պրոֆ. Ագ. Կրիմսկու այս ստուար գիրքը, in 8, բաղկացած է 416 էջերից. աղբիւրները մանրամասնօրէն յիշուած են տասն և հինգ էջերում (3—18) և են՝ հին յոյն և լատին պատմագիրներ. Պարսից, Ասորոց և Հայոց հեղինակներ, Ի թիւս որոնց Եղնիկ, Եղիշէ, Սեբէոս, Մ. Խորենացի, հնախօսութիւն, հին դրամներ. արևմտեան նորագոյն աղբիւրներից՝ Շպիդէլ, Ռօուլինսօն, Իւստի, Նեօլդեկէ, Բռաուն, Կլինտօն, Հերցբերգ, Ռայթ և այլն։

Որովհետև Հայոց նոր գրականութեան մէջ շատ սակաւ տեղեկութիւններ ունինք Հայաստանի հին դրացիների մասին, որոնք երկար տարիների ընթացքում ոչ միայն աղդել են մեր նախնեաց վրայ իրանց կուլտուրայով, այլ և աւատական դրութեան մէջ են պահել Հայաստանը կամ բոլորովին տիրապետելով՝ բաժանել են նրան իրանց մէջ, այս պատճառով ես կարևոր եմ համարում կանգ առնել յիշեալ դրուածքի վրայ և այնտեղից ամբողջ հատուածներ թարգմանել. իսկ այն դէպքերում, ուր պ. Կրիմսկի՝ Սասանեանց հարստութեան պատմութիւնը աւանդելիս, ակնարկներ է անում Հայոց վրայ, լրացնել մեր տոհմային պատմութիւնը Գարագաշեանից, Ք. Պատկանեանից և այլ աղբիւրներից. միով բանիւ աշխատել լուսաբանելու հայ Արշակունեաց արտաքին՝ մասամբ ներքին քաղաքականութիւնը երկու դրացի պետութիւնների վերաբերութեամբ, կ'յաջողուի՞

Մեծ հաճութեամբ տեղ ենք տալի մեր յարգ. աշխատակցի այս յօդուածին «Լումայ»-ում. մի տեղ սակայն հեղինակը շտապել է Մ. Խորենացուն IXդ. հեղինակ լինելը վերջնական համարել. մինչդեռ, որքան մեզ յայտնի է, այդ ինդիրը դեռ երկար վիճաբանութեան նիւթ կարող է լինել, երբ լոյս տեսնի մեր մի այլ յարգ. աշխ. գիտն. Նորայր Բիւզանդացու ընդարձակ ուսումնասիրութիւնն այդ մասին։ ԽՄԲ.

արդեօք մեզ հաշտեցնել Կրիմսկուն Գարագաշեանի հետ, թողնում ենք ընթերցողի դատողութեան։

Այս երկտող յառաջաբանից յետոյ դառնանք Կրիմսկու գրքին։

«Հայոց մատենագիրները, ասում է ռուս գիտնականը, բաւականին տեղեկութիւններ են բովանդակում իւրեանց գրքուածքների մէջ Սասանեանց հարստութեան մասին, որոնց վրայ յենլով պրոֆ. Ք. Պատկանեանը գրեց իւր հետաքրքիր մագիստրոսական շարադրութիւնը՝ Опытъ Исторіи династіи Сасанидовъ (փորձ Պատմութեան Սասանեան հարստութեան)։ Համեմատաբար Ասորոց հեղինակների հետ, հայ հեղինակները պակաս յուսալի աղբիւրներ են։ Պարսկաստանի ասորիները նեստորական աղանդաւորներ լինելով՝ Հռովմայեցւոց արևելեան կայսրութեան ոխերիմ թշնամիներն էին, հալածուած Հռովմայեցիներից և այդ պատճառով նոքա վայելում էին ոչ միայն Սասանեանց համակրութիւնը (փոքր բացառութեամբ), այլ և յարատև հովանաւորութիւնը. Հայերը, ընդհակառակն, ծգտում էին Հռովմայեցւոց կայսրութեան կողմը, որի բնակիչների հետ հասարակական կրօնն էին դաւանում. ուստի Պարսից կառավարութիւնը շատ խիստ կերպով էր վարուում Հայերի հետ և հայ պատմիչները—ոչ անաչառ աղբիւրներ*) են պարսիկների վերաբերութեամբ։ Բացի դորանից նոցա տեղեկութիւնները Պարսկաստանի բոլոր երևոյթների մասին աւելի պակաս են, քան Ասորոց մօտ, որոնց երկրումն էր գտնուում Սասանեանց թագաւորների բուն մայրաքաղաքը։

Բայց այսուամենայնիւ այնպիսի անուններ, ինչպէս Եղնիկ V դարու (գրագաշտականութեան պատմութեան համար), Ե-

*) Արշակունեաց շրջանի մեր պատմիչների անաչառութիւնը բուն հայ իշխանների մասին ևս շատ կասկածելի է. Փ. Բիւզանդ, Եղիշէ, Ղ. Փարպեցի սիրահար են Մամիկոնեան տոհմի, Մ. Խորենացին գովաբանում է Բագրատունեաց ցեղի իշխաններին. ուրեմն, կուսակցական ոգւով են գրում. եթէ փոքր ինչ հեռու գնանք, մի քանի դար յետոյ, կտեսնենք Յովհան Մամիկոնեան եպիսկոպոսին, Յովհաննէս կաթողիկոսին, Թովմա Արծրունուն, Ստեփաննոս Օրբելեանին, որոնք գովում են Մամիկոնեան, Արծրունեաց և Սիւնեաց իշխանական տոհմերը։ Մ. Շ.

ղիշէ (դատողութիւններ սասանական, մոգութեան քաղաքական դերի մասին), Սեբէոս եպիսկոպոս VII դարու (Սասանեանց վերջին ժամանակի վերաբերութեամբ) —հեղինակաւոր են հանդիսանում։ Զափաղանց ընկած է այժմ ամենահռչակաւոր Հայոց պատմագիր Մ. Խորենացու, ազգային «Հայոց Պատմութեան» հեղինակի վարկը, ուր (պատմութեան մէջ) սփռուած են երբեմն տեղեկութիւններ Պարսկաստանի մասին։ Առաջ կարծում էին, թէ Մովսէս Խորենացին ապրում էր V դարում։ Այժմ կարելի է լիովին ապացուցուած համարել, որ նա ամենևին V դարում չէ ապրել և ժամանակակից չէ եղել հնագոյն անցքերի, այլ հաւաքել է ուրիշի հաղորդածները և այս թւում Ցունաց։ Ինչպէս այժմ (Գարագաշեան և Կառիերի նախաձեռնութեամբ) վերջնականապէս ապացուցուած է պրոֆ. Գ. Խալաթեանցի մանրակրկիտ քննութեամբ, Մ. Խորենացին օգտուել է VII—VIII դ. աղբիւրներից. հետևաբար, հարկ է եզրակացնել, որ նա գրել է VIII-դ վերջում կամ IX-ի սկզբում։ Նաև կարևոր է հին պարսից վէպի*) մասին այն տեղը Մ. Խորենացու մօտ, ուր նա հաղորդում է հին պարսկական զրոյցը Բիւրասպ Աժդահակի (Զոհակ), ինչպէս նորան կոչում է Մատեան թագաւորաց (Շահ-նամէ) նաև Ռոստոմի մասին**)»։

Այժմ դիմենք բուն Սասանեանց պատմութեան, որ սերտ յարնչութիւն ունենալով Հայոց պատմութեան հետ, միանգամայն նոր լոյս է սփռում նորա վրայ, լուսաբանում է Հայոց քաղաքական անցեալ կեանքի շատ հանդամանքները։ Ուշի ուշով կարդալով Կրիմսկու այս նշանաւոր երկը, մեր սակաւաթիւ բանասէրները կհամոզուին, որ առանց ուսումնասիրելու՝ Հայաստանի երկու դրացի մեծ կուլտուրական պետութիւնների, այն է՝ Պարսից Սասանեանց միահեծան տէրութեան և բիւզանդական էյսրութեան պատմութեանը անհնար է հասկանալ մեր ազգային պատմութիւնը։ Մեր նախնիքը անձեռնհաս եղան

---

*) Պարսից առասպելներ։

**) Քանի որ Սեբէոսը (VII-դ) ճանաչում է Մ. Խորենացուն, այս վերջինս չէր կարող ապրել VIII կամ IX դարում։ Մ. Շ.

հզօր կենդրոնական իշխանութիւն ստեղծելու մայր երկրում։ Հայը, ասում էր հանգ. պրոֆ. Ք. Պատկանեանը, միշտ հաւատարիմ ծառայ էր օտարին, և վատ տնտես իւր տանը։ Բայց այն ժամանակից յետոյ երեսուն տարիներ են արդէն անցել և ներկայումս հայագիտութիւնը և արևելեան ազգերի պատմութիւնը ճոխացած են նորանոր ուսումնասիրութիւններով և հետազօտութիւններով, որոնցից դժուար չէ դուշակել, որ Սասանեանց օրերում հզօր Հայաստանի գոյութիւնը ծեռնտու չէր ոչ Պարսից ոչ էլ Յունաց քաղաքական տեսակէտից։ Միշեալ երկու պետութիւնների գլխաւոր նպատակն էր տիրապետել Ասորիքին և Միջագետքին, որոնց համար նոքա ամբողջ դարեր մրցում էին իրար հետ. ինքն ըստ ինքեան այստեղից պարզ է, որ կազմակերպուած, հզօր հայկական մի թագաւորութիւն անցնելով մէկի կամ միւսի կողմը, համածայն իւր շահերին, շատ կդրժուարացնէր մրցակիցների գործը. ուրեմն, հարկը պահանջում էր «բառնալ 'ի միջոյ զՀայս, որ և կատարուեցաւ 390 թուին բաժանելով Հայաստանը իրանց մէջ։ Արևելեան մեծագոյն մասը անցաւ Պարսից. իսկ արևմտեան փոքր մասը—Յունաց։ Բայց չկանխենք պատմութիւնը և աշխատենք հակիրճ խօսքերով ամփոփել այստեղ ռուս հեղինակի երկի բովանդակութիւնը, մերթ ընդ մերթ լուսաբանելով մեր ազգային պատմութեան մութ կողմերը. մեր ասելիքը վերաբերում է յատկապէս Սասանեանց հարստութեան շրջանին՝ մինչև Արաբների պատմական ասպարէզ իջնելը։

«Սասանեանց ծագումը։ Արտաշիր I (224—242) և նորա զծած սասանեան հարստութեան ընդհանուր բնաւորութիւնը։

Ֆարս նահանգը (Պերսիդա, կամ բուն Պարսկաստանը) Կիւրոսի և Դարեհի հայրենիքը, որտեղից ծագում էին նոյնպէս Սասանեանք, Արշակունեաց ժամանակ բաւականին անկախութիւն էր վայելում, ինչպէս առհասարակ ընդունուած էր պարթևական թագաւորութեան մէջ ուրոյն նահանգների վերաբերութեամբ։ Երրորդ դարու սկզբում Քրիստոսից յետոյ, Ֆարսում կային բազմաթիւ մանր իշխաններ, որոնք, բնակուելով զանազան լեռնային խոռոչներում, միմեանց թշնամի էին հան-

դիսանում։ Ոմն Պապակ որդի թէ սերունդ Սասանի, աղգաւ Շիրազի արուարձանից, յաջողեցաւ տապալել Շիրազի իշխան Գոլեհրին, որին ժառայում էր և բացի դորանից տիրեց Ֆարսի մայրաքաղաք Ստահրին (Պերսեպոլիս)։ Տակաւին իւր կենդանութեան օրերում Արշակունեաց արքունիքից նա կարողացաւ իւր որդու Շապուհի համար թագաւորութեան իրաւունքը ձեռք բերել. բայց հազիւ թէ Պապակը մեռաւ, նորա միւս որդին Արտաշիրը, ապստամբեցաւ եղբօրից, յաղթեց նորան և ինքը դարձաւ թագաւոր (211), և շուտով իւր իշխանութեան տակ միացրեց ամբողջ Ֆարսը։ Իւր ամենայն ձեռնարկութիւնների միջոցին Արտաշիրը աշխատում էր յենուել զրադաշտական հոգևորականութեան վրայ։ Ճշմարիտ է, Զրադաշտի վտրդապետութիւնը Իրանում չէր հանդել ոչ մակեդոնական ոչ պարթևական տիրապետութեան միջոցին, Արշակունիք ինքեանք էլ դաւանում էին Զրադաշտի կրօնը, սակայն ոչ եռանդուն կերպով։ Ընդհակառակն Արտաշիրը յաճախ կրկնում էր. «դահը— նեցուկ է բազնի, իսկ բազինը— նեցուկ դահի.» Նա ճգնում էր ընդգծել իւր դաւանութիւնը մոգութեան և այսպէս ուղղակի Արտաշրից է սկսւում զրադաշտական մոգերի մոլեռանդ դասակարգի մշակումը, որ յետոյ այնքան նշանաւոր դեր խաղաց Սասանեան կայսրութեան մէջ և երեւելի հանդիսացաւ իւր անհամբերողութեամբ օտարահաւատների և աղանդաւորների վերաբերութեամբ։ Իրան բաւականին զօրեղ համարելով Արտաշիրը պատերազմ սկսեց արշակունեաց մնացեալ աւատական իշխանութիւնների դէմ (արևելքում Կերմանի, արևմուտքում Սուզիանի և այլն) և յաղթելով նոցա, առանց դժուարութեան տապալեց Արշակունեաց իսկ հարստութիւնը. ընդ ամենը տեղի ունեցան երեք պատերազմներ, որոնց վերջնում ընկաւ Արտաւան V-դ թագաւորը. Նորա գլուխը Արտաշիրը, ըստ աւանդութեան, կոխոտեց ոտքերի տակ։ Այդ վայրկեանից Արտաշիր I (224—242) դարձաւ արքայից արքայ և հիմնեց հռչակաւոր Սասանեանց հարստութիւնը։

Ես արդէն յիշեցի, շարունակում է պ. Կրիմսկին, որ Սասանեանց պետութեան բնորոշ տարբերութիւնը Արշակունիներից

կայանում էր հոգևորականութեան դերիշխանութեան մէջ։ Մի այլ յատկութիւնը սկսեալ նոյնպէս Արտաշրից — աւատական պետութիւնների ոչնչացման սիստեմն է, նոցա նահանգների դարձնելն և ջնջումն աւատական հարստութիւնների։ Վերջիններս Արտաշրից և յաջորդ Սասանեաններից թոյլատրւում էին միայն ժայրերի և սահմանակից նահանգների համար, զոր։ Հայաստանի թագաւորութեան (որի նուաճման մասին հոգ էր տանում Արտաշրի որդի Շապուհ Առաջինը), որպէս և արաբական հեր իշխանութեան կամ թագաւորութեան (Եփրատ գետի մօտ) կամ փոքր ինչ յետին ժամանակներում հեռաւոր արևելեան երկիրների համար միջին Ասիայում։ Բայց թէպէտ բուն Իրանում ուրոյն աւատական հարստութիւնները ջնջուած էին, ուրիշ դէպքերում Արտաշրի և այլ Սասանեանների օրերում պետական կազմակերպութիւնը առհասարակ մնաց նոյնը, ինչպէս որ էր Արշակունեաց ժամանակ։ Պետութեան Արշակունեաց բաժանումը 18 նահանգների (сатрапій) պահպանուեց և միայն Սասանեանց վերջին շրջանում դոքա միացան չորս փոխարքաների իշխանութեան տակ։ Դրան մեծամեծները կամ տեղական աւագանին (ազնուականութիւնը), որ կարելի է համեմատել Եւրոպական միջին դարերի բարոնների հետ, պահպանեցին իրանց ոյժը և միշտ կարող էին սպառնալ արքայից արքաներին, այն տարբերութեամբ սակայն Արշակունեաց ժամանակից, որ Սասանեանց օրերում իրանց ազդեցութիւնը նոքա հարկադրուած եղան բաժանել հոգևորականութեան հետ։ Ի վերջոյ աւագանին հոգևորականութեան հետ միասին կազմեց մեծամեծների դասակարգ։ Ինչպէս կտեսնենք ստորև, սասանեան թագաւորը ծգտում էր ինքնակալութեան, իսկ աւագանին և մոգերը ճգնում էին սահմանափակել արքայական ինքնակալութիւնը։ Այս երևոյթը սասանեան պետութեան ներքին քաղաքական կեանքի գլխաւոր բովանդակութիւնն էր, որ սակայն, կորստաբեր չէր երկրի բարեկարգութեան համար։ Ընդհակառակն, թէ ներքին վարչութիւնը և թէ ելևմտից կառավարութիւնը հացրած էր ներդաշնակ սիստեմի Արտաշրից սկսեալ, Իրանում հաստատւում էր անընդհատ բարեկարգութիւն, որ,

չորս գար յետոյ, երբ ընկաւ սասանեան հարստութիւնը, Պարսկաստանի մահմեդական կառավարիչները իբրև կաղապար էին ընտրել իւրեանց համար, թէև չկարողացան հասցնել կարգը և նահանգների արդիւնաբերութիւնը այն կատարելագործութեան, ինչ որ սասանեանց օրերուն էին։

Գալով արտաքին քաղաքականութեան՝ կարելի է Արտաշրի թագաւորութեան միջոցին ակնարկ տեսնել սասանեան պատմութեան յետագայ ընթացքի վերայ։ Այն է՝ մի կողմից Սասանեանք պատերազմներ են մղում Հռովմայեցւոց կայսրութեան դէմ (ապա մասնաւորապէս, Հռովմայեցւոց արևելեան կայսրութեան այս. Բիւզանդիայի դէմ) Հայաստանի և Միջագետքի առթիւ. իսկ մեւսից—արևելեան բարբարոսների սպիտակ Հոնաց (Հեփթաղների, Քուշանաց) դէմ։ Կուուի լարուած շրջանը բարբարոսների հետ (V-դ) խաղաղութեան շրջան է Յունաց համար։ Այս չորեքդարեան կռւում Հռովմայեցւոց կայսրութիւնը ասպարէզ հանելով մի շարք ժիր ու տաղանդաւոր կառավարիչներ վերջ ի վերջոյ յաղթանակող կողմն էր հանդիսանում յաճախ և այդ վիճակուեցաւ Արտաշրին փորձով տեսնել (233 թ), երբ նա միջամուխ եղաւ Հռովմայեցւոց ասիական երկիրները. բայց միևնոյն ժամանակ էլ Հռովմայեցւոց կայսրութիւնը միշտ պիտի նայէր Սասանեանց վրայ, իբրև արժանաւոր և հաւասար ախոյեանների վրայ, նա մանաւանդ այն պատճառով, որ Պարսից յաջողւում էր ոչ սակաւ յոյն—հռովմայեցւոց չարաչար պարտութեան մատնել և անարգանքով ծածկել նոցա անունը։ Դարևոր կռիւը Հռովմայեցւոց կայսրութեան հետ ազդեցութիւն ունեցաւ սասանեան մայրաքաղաքի տեղի ընտրութեան վերայ ևս։ Տեսականապէս մայրաքաղաք էր համարւում հին Ստահրը. այնտեղ էր և թագաւորական մեհեանը կրակի, ուր ի միջի այլոց կախ էին տալիս յաղթուած թշնամի թագաւորների գլուխները. բայց իրօք, գործնականապէս Սասանեանց գլխաւոր քաղաքը դարձաւ Արշակունեաց հին մայրաքաղաք Տիզբոնը, որի մօտ, Տիգրիս գետի միւս ափում շինուած էր քաղաքիս միւս կէսը—Սելևկիա («Բեհ—Արտաշիր»)։ Հարուստ երկիրը, ուր կանգնած էր այս կրկնակի քա-

զաքը, չէր պատկանում Իրանին ոչ աշխարհակտնապէս, ոչ ազգագրականապէս, վասն զի այս տափարակը, Իրանի բարձրաւանդակից դուրս, սեմական բնակչութիւն ունէր յատկապէս. բայց պատերազմական գործողութեանց ասպարիզին մօտ լինելու անհրաժեշտութիւնը ստիպեց Սասանեաններին՝ Արշակունեաց օրինակով, բնակութիւն հաստատել Տիզբոնում: Անընդհատ յարաբերութեան արդասիքը Հռովմայեցւոց հետ էր նա և կուլտուրական ազդեցութեան փոխարինութիւնը. պետական, զինուորական կազմակերպութեան, արհեստների արդիւնաբերութեան մէջ—ամենուրեք կարելի է նշմարել յոյն—հռովմայական կուլտուրայի մեծ ազդեցութիւնը Իրանի վրայ: Ինչպէս կտեսնենք ստորև Խոսրով Անոյշիրվանը 540 թ. մտնելով Ասորիք և տիրելով Անտիոքին, նորա բնակիչներին գաղթել տուեց Տիզբոն և հոգ տարաւ, որ նոցա համար յատկացրած աւանում նոքա լիովին պահպանեն առաջուայ յոյն—հռովմայական կենցաղավարութիւնը: Անկասկած է, որ Սասանեանց ժամանակ տեղի ունեցաւ Եւրոպական և ասիական ֆոլկլորի փոխարինութիւնը. հռովմայեցիք և յոյները չէին կարող չծանօթանալ Պարսկաստանի միջնորդութեամբ արևելեան, մասնաւորապէս հնդկական առակների ու վէպերի հետ և այլն. հաւասար կերպով և պէս պէս յոյն-հռովմայական սիւժէտներ պիտի մտնէին արևելք, այս թւում և Հնդկաստան:

Արդ զննելով Սասանեանց հարստութեան հիմնադրի թագաւորութիւնը, ես ցոյց տուի, թէ հոգևորականութեան և աւագանու ազդեցութիւնը պետութեան ներքին կեանքի վրայ, պատերազմները յոյն—Հռովմայեցւոց և միջինասիական բարբարոսների դէմ արտաքին կեանքում—այն երևոյթներն են իւրեանց հետևանքներով, որոնք բնորոշում են սասանեանց պատմութիւնը»: Այնուհետև յարգելի պրոֆեսորը խոստանում է իրողութիւնները աւանդել դարուց դար:

Ինչպէս ընթերցողը յիշում է, Արտաշիրի պատմութեան ընթացքում պ. Կրիմսկին երկու անգամ ակնարկեց Հայաստանի վրայ: Կանգ առնենք այստեղ և տեսնենք, թէ ոչք էին թագաւորում այն ժամանակ Հայաստանում և վերջինս վայելում

էր արդեօք անկախութիւն։ Պահլաւունի ցեղի թագաւորութիւնը կործանելուց յետոյ Պարսկաստանում, Արտաշրի առաջին գործը եղաւ աշխատել տապալելու նաև Հայոց Արշակունի հարստութիւնը Հայաստանում, ուր այդ միջոցին թագաւորում էր Տրդատ II Խոսրովը, (որդի Վաղարշի, մեռած բանտում 216 թ), որ իւր թագը ստացել էր 218 թ. Անտոնինոս Կարակալլայի յաջորդ Մակրինոս կայսրից։ Ըստ Դիոնի, ասում է Գարագաշեանը (տե՛ս. Քննական պատմ. Հայոց. մ. II էջ. 268) Արտաշիր իւր թագաւորութեան սկզբում (226 թ.) արշաւելով Հայաստան, մեծ ընդդիմութեան հանդիպեցաւ այն ժամանակի թագաւորի կողմից, որի մօտ ապաւինած էին Արտաւան V-ի որդիքը։ Այն թագաւորն էր Տրդատ II, որդի Վաղարշի։ Զարմանալի չէ ուրեմն, որ Արտաւանի որդիքը՝ ապաւինելով Տրդատ II-ին կամ Խոսրովին, այնպիսի սաստկութեամբ ընդդիմացան Արտաշրին. վասն զի երկու թագաւորներ Տրդատ II (ըստ ազգային աւանդութեան Խոսրով) և Արտաւան, ինչպէս երևում է, մօտ ազգականներ էին, հաւանականապէս եղբայրներ իսկ։ Ագաթանգեղոսի «եղբայրութիւն ազգականութեան» և Եղիշէի նամակի «հօրեղբայր» բառերին նայելով, մեր պատմութեան առաջին մասում (էջ 86, 87) ասացինք, որ Արտաւան և Խոսրով եղբայրներ էին։ Ինչևիցէ Արտաշիրը, ըստ Դիոնի, տեսնելով Հայոց և Մարաց ընդդիմութիւնը, գնում է ժողովելու աւելի շատ զօրք Պարսից արևելեան սահմաններից և (230—234) պատերազմներ է մղում Հռոմվայեցւոց կայսր Ալեքսանդր Սևերոսի դէմ, որին, ինչպէս երևում է, Հայերը դաշնակից էին։ Մաքսիմինոս Թրակացու կայսեր ժամանակ (235—238) մենք գտնում ենք, որ Հայերը օգնական նիզակակից էին նորան Գերմանացւոց պատերազմի միջոցին (236 թ)։ Դորանից դժուար չէ գուշակել, որ Հայաստանը բաւականին անկախութիւն էր վայելում Հռովմայեցւոց ազդեցութեամբ։ Գարագաշեանը Արտաշրի մահը գնում է 235—238 թուականներում, երբ նա պատրաստւում էր նոր յարձակում գործելու Հայոց և Հռովմայեցւոց վրայ. այն ինչ ըստ Կրիմսկու Սասանեանց հարստութեան հիմնադիրը մեռաւ

242 թ. և նորան յաջորդեց որդին Շապուհ I (242—272), Հռովմայեցւոց և Ցունաց մօտ Սապօր։ Սա շարունակեց հօր Արտաշրի արշաւանքները. Արտաշիր պարտութիւն կրելով 233 թ. Ադեքսանդր Սեւերոսից, կրկին միջամուխ եղաւ Հռովմայեցւոց երկիրները Մաքսիմինոսի օրերում (236—238) և նորան յաջողեցաւ հիւսիսային Միջագետքում տիրել երկու ամրոցներին՝ Մծբնին և Խառանին։ Շապուհ Առաջին արշաւելով Ասորիք՝ հասաւ մինչև Անտիոք (242)։ Գորդիանոս III-ը արտաքսեց նորան, յետ խլեց Միջագետքում վերոյիշեալ երկու ամրոցները և վճռեց յառաջ ընթանալ Եփրատի ափերով և տիրել Տիզբոնին։ Այն տեղում, ուր Խաբոր գետը թափւում է Եփրատի մէջ, Գորդիանոսը սպանուեց իւր թիկնապահների հրամանատար արաբացի Փիլիպպոսի ձեռքով 244։ Սպանիչը իրան կայսր հրուչակելով, ամօթալից դաշն խաղաղութեան կապեց Շապուհի հետ, և զիջեց նորան Հայաստանը և Միջագետքը։ Խաղաղութիւնը տևեց մի քանի տարի. բայց 251 կամ 252 թ. Շապուհ, օգուտ քաղելով Հռովմայեցւոց ներքին խռովութիւններից, նորոգեց պատերազմը և արշաւեց դէպի Ասորոց երկիրը։ Մի ասորի Կիրեադ առաջնորդեց Պարսից մինչև Անտիոք։ Վերջապէս Վալերիանոս կայսրը դուրս եկաւ Պարսից, բայց քանի մի պատերազմական գործողութիւններից յետոյ Միջագետքում, Եդեսիայի մօտ գերի ընկաւ Շապուհի ձեռքը 260 թ. և գերութեան մէջն էլ մեռաւ։ Այս դէպքից խրախուսուած Շապուհ յառաջ խաղաց դէպի փոքր Ասիա. սակայն պարտութիւն կրելով Հռովմայեցւոց Բաղդիստա զօրավարից, երբ վերադառնում էր Պարսկաստան, ենթարկուեց անակնկալ նոր յարձակման Պալմիւրայի իշխան Ոդենատոս II կողմից և չարաչար ջարդուեց. արքայական կանանոցի մէկ մասը ինաց յաղթողի ձեռքում։ Դորանից յետոյ Ոդենատոս II-ը երկիցս պաշարեց Տիզբոնը։ Որովհետև Պարսկաստանը չունէր մշտական զօրք, Շապուհը առաջին պարտութիւնից յետոյ, որ կրեց Պալմիւրայի իշխանից, ընդմիշտ հրաժարուեց բիւզանդական երկիրներին տիրելու փորձերից և թոյլ տուեց Հայոց անցնել Հռովմի կողմը։ Այնուհետև

յընթացս երեք հարիւր տարիների Պարսիկները էլ ոտք չկոխեցին Ատրիք մինչև Կաւատ I և Խոսրով I-ին։

Պետութեան մէջ Շապուհ հռչակուեց իւր շինարար գործունէութեամբ. նա մեծամեծ շէնքեր կառուցեց Շուշտերում (Սուզիանա), կանոնաւոր ոռոգման համար Կարուն գետի ջրերով դաշտերը ու այգիները. նոյն տեղում նա շինեց գունդեշապուր քաղաքը, որ առաջին Աբբասեանց օրերում համաշխարհային հռչակ ստացաւ, իբրև ուսումնական կենդրոն, ուր նեստորական քրիստոնէից զեկավարութեամբ ծաղկում էին յունական գիտութիւնները և արաբական ամիրապետների ձեռքով հիմնուած էր բժշկական բարձր ուսումնարան, որի վարիչն էր Բոխտիշու բժշկական սերունդը։ Նոյն Շապուհի օրերում աշկարայ կերպով քարոզւում էր Մանի պարսկի աղանդը, անարգել տարածուելով ամենուրեք, մինչև որ ինքն Մանին վերջապէս մոգերի դրդմամբ Վռամ 1-ի հրամանով մորթազերծ եղաւ և սպանուեց։ Ահա այս է Շապուհի թագաւորութեան էական կէտերը, ըստ Կրիմսկու։

Մենք վերը տեսանք, որ Հռովմայեցւոց ազդեցութիւնը Հայաստանում վատարի Փիլիպպոս կայսեր շնորհիւ միառժամանակ փոխարինուեց պարսկականով։ Բայց ինչ եղաւ Տրդատ II-դ Խոսրով և ո՛վ յաջորդեց նորան՝ օտարազգի պատմագիրները չեն յիշում։ 218-ից, երբ Տրդատ II թագ ստացաւ Մակրինոսից մինչև Վաղերիանոսի գերութեան տարին՝ 260 թ. մենք գտնում ենք Արտաւազդ անունով մի թագաւոր Հայոց, որի նամակից, գրուած Շապուհին, պարզ երևում է, որ Հայերը նիզակակից էին Պարսից մինչև Աւրեղիանոս կայսրը (270—275)։ Ցիշեալ նամակը Գարագաշեանը մէջ է բերում թարգմանութեամբ լատին պատմիչ Տրեբեղղիոս Պոլիոնից և է հետևեալը.—«Արտաւազդ Արքայ Հայոց գրեաց առ Շապուհ. «Ուրախ եմ ընդ փառս քո, այլ երկնչիմ թէ արծաւրծեցեր զհուր պատերազմի մանաւանդ քան յաղթեցեր։ Զվաղերիանոս խնդրեսցեն և՛ որդի նորա, և՛ թոռն, և զօրավարք Հռովմայեցւոց, և՛ համօրէն Գաղղիա, և՛ Ափրիկէ ողջոյն, և բովանդակ Սպանիա, և՛ ամենայն Իտալիա, և՛ ամենայն զօրք, որ են 'ի

Լիւրեկ և յարևելս և 'ի Պոնտոս դաշնակիցք Հոռոմոց կամ ընդ իշխանութեամբ նոցա։ Կալար զու զայր ոմն ծեր, և յարուցեր հակառակ քեզ զամենայն աղգս երկրի, թերևս և հակառակ մեզ՝ որ առաքեցաք քեզ օգնական. դրացի քո եմք և կրեմք հանապազ վիշաս, յորժամ կռուիքդ ընդ միմեանս» (Գարագ. ՔՆՆ. պատմ. մ II էջ 274)։

Բայց դառնանք այստեղ Պարսից պատմութեան, որ աւանդում է պրոֆ. Կրիմսկին։ Շապուհին կարճ միջոցում յաջորդեցին՝ «Որմիզդ I (272—273), Վռամ I (274—277)։ Վռամ II-րդ (277—293), Վռամ III-դի (293) և Ներսեհի (293—303) թագաւորութիւնը հետաքրքիր է միայն Հռովմայեցւոց յարաբերութիւնների շնորհիւ. Վռամ II-դի հետ պատերազմեցին Պրոբոս և նորա յաջորդ Կարոս. այս վերջին կայսրը արդէն տիրել էր Տիզբոնին, բայց յանկարծակի մեռաւ. Ներսեհ փոքր մի յաջողութիւնից յետոյ, չարդուեց Հայաստանում Դիոկղետիանոսի կեսար Գալերիոսից, որ ղեկավարում էր Դիոկղետիանոսի—Հռովմայեցւոց հռչակաւոր կայսեր (284—305) հրահանգներով, որ նոր դարագլուխ սկսեց Հռովմայ պատմութեան մէջ. Ներսեհի կանայք և որդիք գերի ընկան և այս ժամանակ խաղաղութեան դաշն կապուեց (298), որ տևեց 40 տարի (մինչև Շապուհ II-ի պատերազմը)։ Այդ դաշին զօրութեամբ Պարսկաստանը հրաժարուեց Հայաստանից և Միջագետքից և մինչև անդամ զիջեց Տիգրիսի ծախ ափի մի մասը մինչև Քուրդիստան (մասն այսպէս ասած Փոքր Հայոց)»։

Մ. ՇՈՎՐԵԱՆ

Կը շարունակուի

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ

Անցեալ 1909 թուի Դեկտեմբերի 28-ից Մոսկուայում բացուեց «Ռուս բնագէտների և բժիշկների XII համագումարը»։

Նախընթաց XI համագումարը տեղի ունէր Պ. Բուրգում ութը տարի առաջ, 1901 թուին։

Թէ որչափ զգալի էր այդ համագումարի անհրաժեշտութիւնը ներկայ ժամանակիս համար, ցոյց է տալիս այս համագումարին գրուող անդամների թիւը, որը հաւասար է 5303-ի։ Եթէ մենք ի նկատի առնենք բնագիտութեան զարգացման պատմութիւնը Ռուսաստանում, անկասկած կգանք այն եզրակացութեան, թէ՝ իրօք դա մի խոշոր թիւ է, որին չէ հասել Ռուսաստանում գումարուող ոչ մի գիտական համագումար։ Այդ թիւը միևնոյն ժամանակ մատնացոյց է անում այն մեծ հետաքրքրութիւնը, որը առաջ է եկել ներկայ ժամանակաշրջանում դէպի էքսպէրիմենտալ, դրական բնագիտութիւնը։

—Վաղուց արդէն արտայայտուած էր այն միտքը, ի միջի այլոց ասաց համագումարի նախագահ պրոֆէսսոր Անուչինը, թէ գիտնականների համագումարները գիտութեան տօներ են։ Ընդհատելով իրենց առօրեայ ծանր աշխատանքը, իրենց ամենօրեայ հոգսերը, գիտութեան և դպրոցի մարդիկ, ժողովւում են համագումարների թարմանալու հոգեպէս պարզ գիտութեան մթնոլորտում, իրենց ուսուցիչների, ընկերների, գործակիցների, աշակերտների յետ յարաբերութեան մէջ, այդպիսով վերակենդանացնելու իրենց ոյժերը ապագայ աշխատանքի համար գիտութեան և դաստաւութեան շրջանում։ Անկասկած այդ հայեացքը մեր համագումարների վերաբերմամբ, իբրև գիտութեան տօների, մեծ մասամբ ճիշտ է. բայց միւս կողմից, հազիւ թէ ով և իցէ պնդի թէ գիտական համագումարների նշանակութիւնը սահմանափակւում է միմիայն նրանով, որ դրանք տօներ են—և հէնց գիտութեան տօներ։ Երևի բոլորը տրամադիր կլինին ընդունել, որ մեր համագումարը, ոչ թէ միայն տօն է, այլ և գործ, և նոյն ժամանակ լուրջ և կարևոր գործ։

Բնագէտների համագումարը նոյն գործի շարունակութիւնն է, որին մենք, համագումարի մասնակիցներս, նուիրում ենք մեր ամբողջ գիտակցական կեանքը, որով մենք պարապում ենք դըպրոցում, գիտական ճեմարաններում, գիտական հաստատութիւններում և ընկերութիւններում և որը արտայայտւում է նրանով, որ մենք սովորում ենք և ձգտում ենք սովորեցնել ուրիշներին. իսկ փոխադարձ յարաբերութեան մէջ ձգտում ենք ընդլայնել և պարզել մեր գիտական հորիզոնը։ Ի հարկէ համագումարը չէ կարող փոխարինել ոչ ընութիւնը, ոչ գիրքը, ոչ աշխատանոցը կամ թանգարանը, բայց, միւս կողմից, բոլորին յայտնի է, որ հոգեկան ազդեցութեան միջոցներից ամենից ընդունուած և ամենափորձուածը կենդանի, հեղինակաւոր խօսքն է և դրան ուղեկցող փորձի և դիտողութեան փաստերի հետ դիտողական ծանօթութիւնը։ Եւ եթէ այդպիսի կենդանի խօսքը գիտութեան տարածման անհրաժեշտ գործօնն է դպրոցում և հետաքրքրութեան արթնացման դէպի այդպիսիները, ոչ պակաս կարևոր միջոց կարող է լինել կենդանի խօսքը համագումարների վրայ, ուր ամփոփումներով հանդէս են գալիս բազմաթիւ գիտնականներ ամբողջ Ռուսիայից։

Մեր համագումարը, այդպիսով, միևնոյն ժամանակ և տօն է և գործ՝ սա իրականացնում է և ընկերական լայն յարաբերութեան հնարաւորութիւնը և համառուսական բնագիտութեան բարձրագոյն դպրոցը։ Իսկ ես թոյլ կտամ ինձ արտայայտել մի կարծիք, որ սա միևնոյն ժամանակ և քննութիւն, կամ, աւելի ճիշտ, ռուս գիտութեան տեսութիւն է, ռուս բնագիտութեան՝ ամբողջ մարդկութեան գիտութեան առաջ, մեր սեպհական հայրենիքի քաղաքակրթութեան խնդիրների առաջ, մեր իսկ, ռուս գիտութեան մշակների, առաջ։

Համագումարի վրայ անխուսափելի կերպով արտայայտութիւն պէտք է գտնեն մեր գիտնականների վերջին տարիների աշխատութիւնները, մտքերը, գիտողութիւնները և փորձերը։

Սա պէտք է արտացոլի իւր մէջ ռուս գիտութեան նորագոյն շարժումը, պէտք է հնարաւորութիւն տայ դատել իւր ոյժի և արդիւնաւէտութեան մասին, ինչպէս նախընթաց տասնամեակի, նոյնպէս և արևմտեան գիտութեան ներկայ դրութեան վերաբերմամբ»։

Դեկտեմբերի 27-ի եր. 7 ժ. նշանակուած էր սկզբնական ժողով Больш. Московская հիւրանոցի ամենամեծ դահլիճներից մէկում՝ սպիտակ դահլիճում, բայց, որովհետև և այդ ընդարձակ

դահլիճը բաւական չեղաւ, համագումարի անդամներից ոմանք տեղափոխուեցին միւս դահլիճները, իսկ մի ճիւղ մինչև անգամ մի ուրիշ տեղ։ Այս ժողովը նշանակուած էր միմիայն փոխադարձ ծանօթութեան համար, որովհետև շատ գիտնականներ աշխատելով իրենց գրասենեակի անաղմուկ հովանու տակ՝ ծանօթ չէին իրար հետ. համակրելով միմեանց մտքերն ու գաղափարները, բաժանուած լինելով ժամանակով և տարածութեամբ կամ հանգամանքներով, զուրկ էին փոխադարձ ծանօթութեան հնարաւորութիւնից։ Այժմ այդ հնարաւորութիւնը հանդէս էր եկել. խորտակուել էին «հանգամանքների» սառնասիրտ պատերը և մարդկային աչքը շոյում էր այն գեղեցիկ տեսարանը, որը բացւում էր ամեն մի հանդիսատեսի առաջ։

Համալսարանում միակերպ առօրեայ տեսարանը փոխուել էր, ինչպէս վերը նկատեցինք, տօնական տրամադրութեամբ։

Համալսարանական պարապմունքներից դուրս մռայլ և տըխուր վիթխարի շէնքերի պատերի մէջ հնչում էր լայնատարած Ռուսիայից ժողովուած գիտութեան և դպրոցի մարդկանց կենդանի խօսքը։

Ուր ոչ շատ առաջ հատ ու կէնտ ուսանողների դէմքերն էին երևում, այժմ խռնւում էր բազմազան հասարակութիւնը, որոնք, ոգևորուած ընդհանուր գիտութեան գաղափարով, միացել էին մի ընդհանուր ուժեղ ամբողջութիւն կազմելու. առանց որև է խըտրութեան. ոչ քաղաքական տարբեր հայեացք, ոչ կրօն, ոչ սեռ։

Տասը օր տևեց այս գեղեցիկ պատկերը. տասը երջանիկ օր աւելացրեց ամեն մի գիտութեան իմաստը հասկացող մարդու յիշողութեան մէջ և երկար տարիներ այդ յիշողութիւնը վառ պիտի պահէ շատերի գիտութեան բաց տենչը, միշտ կենդանի խօսքով պիտի հնչէ պրոֆ. Ա. Ա. Էյխէնվալդի վերջին ընդհանուր ժողովին (որ տեղի ունեցաւ 1910 թ. յունուար 6 ին) արտասանած ճառի վերջին դիմումը դէպի այն անձինք, որոնք անձամբ չեն կարող աշխատել պարզ գիտութեան ասպարիզում։

Ահա այդ խօսքերը։

Изъ вѣчности музыка вдругъ раздалась
И въ безконечность она полилась,
И хаосъ она на пути захватила,
И въ безднѣ, какъ вихрь, закрутились свѣтила.
Пѣвучей струной каждый лучъ ихъ дрожитъ,
И жизнь, пробужденная этою дрожью,
Лишь только тому и не кажется ложью,
Кто слышалъ порой эту музыку Божью...

Ռուս բանաստեղծ Պոլոնսկու խօսքերն են, որով յարգելի պրոֆեսորը ցանկացաւ ցոյց տալ գիտութեան ներդաշնակութիւնը։

Նախ քան ժողովների նկարագրութեան անցնելը, մենք այստեղ առաջ կբերենք մի երկու հետաքրքիր թուական փաստեր, որ վերցնում ենք ներկայ թուի № 6 Русск. вѣд. լրագրում տպագրուած Тихонович-ի յօդուածից. համագումարի անդամների ընդհանուր թուից 33%-ը կազմում են միջնակարգ դպրոցների ներկայացուցիչները, ապա գալիս են բարձրագոյն դպրոցները, որոնց տոկոսը հաւասար է 26-ի, բժիշկները կազմում են 19%-ը, ճարտարապետները 9%-ը, հողագէտները 4%-ը, ուսանողները մօտ 1%-ը են. կանայք ընդհանուր թուի մի քառորդից աւելի են կազմում—27%-ը.

Ըստ տեղագրութեան հետաքրքիր են հետևեալ թուները. Սիբիրը և միջին Ասիան միասին և Կովկասը տուել են 2-3%-ը ամեն մէկը։ Իսկ գլխաւոր տոկոսը կազմում են կենդրոնական նահանգները։

Օգտուելով հանգամանքից այստեղ տալիս ենք և հետևեալ ցուցակը. համագումարը բաժանուում է հետևեալ մասնաճիւղերի՝

1 Մաթեմաթիկա

2 Ֆիզիքա

3 Ֆիզիքական աշխարհագրութիւն և օդերևութաբանութիւն Ստորաբաժանում թուչնարուեստ.

4 քիմիա

5 հանքաբանութիւն և երկրաբանութիւն (ստորաբաժանումներով)

6 Բուսաբանութիւն

7 Կենդանաբանութիւն

8 Մարդակազմութիւն, մարդու և կենդանիների ընախօսութիւն. հիւսուածաբանութիւն ստորաբաժանումով։

9 Աշխարհագրութիւն, ազգագրութիւն և մարդաբանութիւն վիճակագրութեան ստորաբաժանումով։

10 Հողագիտութիւն (ստորաբաժանումներով)

11 և 12 գիտական բժշկականութիւն և առողջապահութիւն։

Ահա և հետևեալ օրը.

«Բլագորոդնոե սօբրանիե»-ի ընդարձակ դահլիճը իր 24 սպիտակ մարմարեայ հսկայական սիւների տակ ընդունեց 4 հազար մարդ, որոնք ճեմելով երկար դահլիճում, զրուցում էին այս կամ այն խնդրի մասին. ամեն քայլափոխին կարելի էր լսել՝

Պարոն այր, ինչպէս Ք. չՔ ճանաչում, եւ ապա հետևում էր յիշողութիւնը երեկուայ նոր ծանօթութիւնից կամ՝

Բարև ձեզ, պ. բիմ, չՔ ճանաչում, տիկին գիմ. և նորից յիշողութիւններ. և այդպէս անվերջ...

Գիտութեան արդիւնք էլէքտրական լապտերը լուսաւորեց դահլիճը. լոյսը ընկնելով ջահերի հարիւրաւոր եռանկիւնի ապակիների վրայ արտացոլւում էր ծիածանի երփներանգ գոյներով և ֆանտաստիկ երևակայութիւն առաջ բերում։

Բարձրավանդակը գրաւում էն գիտութեան ներկայացուցիչները. հնչում է զանգը և ամբիոն է բարձրանում մի ալէզարդ ծերունի. ներկայ համագումարի նախագահ, Մոսկուայի համալսարանի աւագագոյն պրոֆեսսոր Անուչինը։

«Ռուս գիտութիւնը և բնագէտների համագումարները» ճառով սկսուեց առաջին ժողովը. XII համագումարի «կարգադրիչ յանձնաժողովի կոմիտէի լիապօրութեամբ պատիւ ունիմ յայտարարել ռուս բնագէտների և բժիշկների XII համագումարը բացուած և օգտւում եմ հանգամանքից ողջունելու կոմիտէի կողմից ժողովուած անդամներին սրտագին ընկերական «բարի գալուստ» ով։

Միևնոյն ժամանակ, կատարելով Մոսկուայի համալսարանի խորհրդի տուած պատուաւոր յանձնարարութիւնը, ողջունում եմ ձեզ, XII համագումարի պ. պ. անդամներ, հնագոյն ռուս համալսարանի կողմից. հիւրասէր կերպով բանալով համագումարի պարապմունքների համար իւր բնակարանները, իւր գիտական ճեմարանները և լսարանները, Մոսկուայի համալսարանը յաջողութեան լաւագոյն մաղթանքներն է յայտնում համագումարի այսօր սկսուող գործունէութեան յօգուտ ռուս գիտութեան և լուսաւորութեան։

Կարգադրիչ Յանձնաժողովը անկեղծ բաւարարութեան զգացումով կարող է մատնացոյց անել, որ նրա կոչը ընկերներին լայն արձագանք գտաւ վերջիններից կողմից։ Այդ արձագանքը արտայայտուեց ինչպէս համագումարի անդամ գրուողների մեծ թուով, նոյնպէս և զանազան մասնաճիւղերին ներկայացրած զեկուցումների մեծ քանակութեամբ, արտայայտուեց և այն գործակցութեան պատրաստակամութեամբ, որով մեր շատ յայտնի գիտնականները արձագանք տուին կոմիտէի հրաւէրին կարդալ ընդհանուր և միացեալ ժողովներում։

Այդպիսի արձագանքի անկասկած նպաստում էր, յայտնի չափով, այն հանգամանքը, որ ներկայ XII համագումարը հաւաքւում է երկար ժամանակամիջոցից յետոյ։ Նախընթաց XI համագումարը Պետերբուրգում տեղի ունէր, ինչպէս յայտնի է, 1901 թուին, այն

է ութը տարի սրանից առաջ։ Ութը տարի—սա մի այնպիսի ժամանակամիջոց է, որի ընթացքում, մեր XX դարում, գիտությունը ընդունակ է մեծ յառաջադիմության և, իրօք, այս վերջին ութը տարուայ ընթացքում, կարելի է մատնացոյց անել մի շարք կարևոր տեսրէտիք և գործնական գիտության յայտնագործության վրայ։ Այս յաջողությունները, ինչպէս որ կարելի է սպասել, կգտնեն իրենց արտայայտությունը համագումարում. որոշ չափով գիտության այդ նոր շարժման հետ ծանօթանալու յոյսը կարող էր շատերին դրդել մասնակցել համագումարի պարապմունքներին։ Բայց, բացի վերջին ժամանակները ձեռք բերած նոր յաջողություններից, ութը տարուայ ժամանակամիջոցը համագումարների մէջտեղ պէտք է առաջ բերէր գիտության գործիչների և ուսուցիչների մէջ ուժեղ ձգտում դէպի փոխադարձ ծանօթություն և շփում։ Որչափ և անհրաժեշտ է գիտական աշխատանքի համար գրասենեակի առանձնացումը և աշխատանոցի առանձնությունը, բայց և այնպէս ոչ պակաս յամառ անհրաժեշտություն կարող է առաջ գալ երբեմն և անձնական շփման անհրաժեշտության նոյն կամ հարևան գիտական և ուսուցչական գործունէության ներկայացուցիչների հետ։ Որոշ իրաւունքով կարելի է ասել, որ ռուս բնագէտները սովեցին երկար անջատումից և որ նրանք, այդ պատճառով, ուրախությամբ արձագանք տուին համագումարին մասնակցելու հրաւէրին, որը բանում է նրանց առաջ լայն ընկերական յարաբերության հնարաւորությունը։

Սրանից յետոյ գալիս է այն կտորը, որը բերինք վերը. ապա առաջ բերեց բնագիտության զարգացման պատմությունը Ռուսաստանում սկսած Պետրոս I-ից. մատնացոյց արեց այն խոչնդոտներն ու արգելքները, որոնք թոյլ չէին տալիս ռուս գիտության առաջ ընթանալ այն լայն շաւղով, որը նկատւում է Եւրոպայում։ Առանձին մանրամասն կերպով կանգ առաւ ռուսական քաղաքակրթության զարգացման խնդրի վրայ։

Այդ ճառը պրոֆ. Անուչինը վերջացրեց հետևեալ խօսքերով՝ «Նորից ողջունում եմ ձեզ Մոսկուայի համալսարանի կողմից», որ ծածկուեցին երկար ծափահարություններով։

Ապա ամբիոն բարձրացաւ Ակադ. Պավլովը, որ հաղորդեց իւր տասը տարուայ աշխատանքի արդիւնքները ամփոփելով «բնագիտությունն և ուղեղ» խորագիր կրող ճառի մէջ։

—Բնախօսությունը մեծ յառաջադիմություն արեց ջղային համակարգության ստորին մասի—ողնուղեղի—ուսումնասիրության մէջ, իսկ բարձր կենդանիների բարդ նեարդային գործունէության ուսումնասիրությունը, որը կապակցած է գլխուղեղի հետ,

համարեա տեղից չէ շարժուում. հոգեբանութիւնը իբրև մարդկային ներքին աշխարհի գիտակցութիւն մինչև այժմ դեռ ինքը փնտրում է իւր իսկական եղանակները, մեթոդները. բնախօսութեանը անհրաժեշտ է մնալ հաւատարիմ բնագիտական մեթոդներին, կենդրոնական նեարդային համակարգութեան բարձր մասը ուսումնասիրելիս։ Անհրաժեշտ է առանձնացնել առանձին ազդեցութիւնները և փորձերի օգնութեամբ ուսումնասիրել նրանց հետևանքները։ Նեարդային համակարգութեան ամբողջ գործունէութիւնը ամփոփուում է երկու հիմնական մեխանիզմների մէջ. նախ ժամանակի կապի մեխանիզմի կամ պայմանական անդրադարձման, ռէֆլէքսի և ապա տարաբաղադրիչների (анализаторъ) մեխանիզմի մէջ։

Այս ուղղութեամբ փորձերը կատարուում էին Պավլովի և նրա օգնականների կողմից տասը տարուայ ընթացքում գլխաւորապէս շների վրայ և մի բնախօսական տեսակէտից չնչին անդամի—լորձագեղձի (слюнная железа) վրայ։ Այս սկզբում պատահական ընտրութիւնը գործի վրայ շատ յաջող երևաց։ Վաղուց արդէն յայտնի էր որ լորձագեղձը սկսում է մատակարարել իւր հեղուկը բերանին, երբ այնտեղ մնունդ է մտցուում կամ ուրիշ գրգռող նիւթեր, որոշ նեարդերի օգնութեամբ, որոնք գրգռումը հաղորդում են կենտրոնական նեարդային համակարգութեան, իսկ այնտեղից դէպի գեղձը, առաջ բերելով վերջինում լորձունքի արտադրութիւն։ Սա անպայման անդրադարձում է, որը կատարուում է ճիշտ նոյնպէս և առանց գանգուղեղի մասնակցութեան։ Նոյն ժամանակ բոլորին յայտնի է, որ լորձունքը գրգռում է և հոգեպէս, միմիայն ուտելու մասին մտածելով։ Այս բարդ նեարդային գործունէութեան համար անհրաժեշտ է արդէն ուղեղի վերին ճիւղը։ Սրան իբրև հիմք ծառայում է պայմանական անդրադարձման ժամանակի կապի մեխանիզմը. պայմանական ռէֆլէքսների ուսումնասիրութիւնը գրաւում է բնախօսութեան մի ամբողջ գլուխը։ Ամփոփելով, կարելի է ասել, որ ամբողջ բարձր նեարդային գործունէութիւնը, ինչպէս դա արտայայտուում է պայմանական անդրադարձման մէջ, կազմուում է երեք հիմնական ընթացքների (կամ պրայեսների) հաւասարակշռութիւնով։

Միւս հիմնական մեխանիզմը տարաբաղադրիչների մեխանիզմն է։ Տարաբաղադրիչը բարդ նեարդային մեխանիզմ է, որ սկսուում է արտաքին ընդունող գործարանից և վերջանում է գանգուղեղում։ Արտաքին գործարանը յատուկ ձևափոխիչն է (трансформаторъ) ներկայ արտաքին եռանդի դէպի նեարդային պրոցեսս։ Ապա գալիս են մի շարք դեռ չվճռած խնդիրներ թէ՝ ինչ

ձևով է կատարուում այդ ձևափոխութիւնը վերջին կէտում, թնչ ընդհանուր օրէնքներով է կատարուում այդ տարաբաղադրութիւնը և այլն։ Ներկայումս այս բոլոր խնդիրները ենթակայ են օբեկտիւ ուսումնասիրութեան կենդանիների վրայ։ Յաճախ համոզուում ենք, որ, ըստ երևոյթին, հոգեբանութեան տեսակէտից ամենաբարդ յարաբերութիւնները ենթակայ են պարզ և արդիւնաւէտ օբեկտիւ քնախօսական տարաբաղադրութեան (анализъ), որոնք հեշտ ստուգուում են համապատասխան փորձերով. ի հարկէ այդպիսի փորձերը—արտաքին շրջանի ազդեցութեան օրգանիզմի վրայ—պահանջում են բոլորովին բացառիկ պայմաններ, այլ տեսակի աշխատանոցներ, ուր գոյութիւն չունի լոյսի յանկարծակի տատանում, ջկայ օդի փոփոխական շարժում և այլն և այլն։

Պրոֆ. Պավլովը վերջը մատնացոյց արեց «բնական աշխատանոցի» անհրաժեշտութեան վրայ, միևնոյն ժամանակ ցանկութիւն յայտնելով, որ այդ աշխատանոցի գաղափարը իրականանայ Մոսկուայում։

Պրոֆ. Պաւլովը ամբիոն բարձրացաւ և իջաւ երկար ծափահարութիւնների ձայների տակ։

Խօսքը պատկանում էր Մոսկ. քաղաքագլուխ Գուչկովին, որը քաղաքի կողմից յայտնեց համագումարին լաւագոյն ցանկութիւնները և յաջողութիւն նրա գործունէութեան։

Ապա կարդացուեցին հեռագիրներ զանազան հաստատութիւններից և առանձին անհատներից. ի միջի այլոց Թիֆլիսի հայոց գիւղատնտեսական և տնայնագործական ընկերութիւնից և Թիֆլիսի բնութեան սիրողների ընկերութիւնից (общ. любителей природы). Թէ մէկ և թէ միւս ընկերութիւնները խնդրում են նշանակել հետևեալ համագումարը Թիֆլիսում։

Փոքրիկ ընդմիջումի ժամանակ կատարուեց նախագահի և 2 փոխնախագահի ընտրութիւնը. 1043 ձայնով նախագահ ընտրուեց պրոֆ. Դմիտրի Նիկոլաևիչ Անուչինը, իսկ փոխնախագահներ 901-ական ձայնով Ակադէմիկոս Իվան Պետրովիչ Պավլովը (Ս. Պ. բուրգ) և պրոֆ. Իվան Իվանովիչ Բորգմանը (Ս. Պ. բուրգի համալսարանի ռէկտորը)։

Վերսկսուած ժողովի ընդհանուր որոշումով հեռագիր էր ուղարկուած յայտնի Պրոֆ. Կ. Ա. Տիմիրեազևին, որը հիւանդութեան պատճառով անկարող եղաւ կարդալ իւր «Դարվինականութիւն և ներկայ գիտութիւնը» ճառը։

Կարդացուեցին մի երկու նոր ցանկութիւններ, որոնց թւում Պ. Բուրգի բժշկների և բնագէտների լէհական ընկերութեան կող-

մից, իսկ Սոֆիայի համալսարանի ներկայացուցիչ պրոֆ. Պ. Ն. Ռայկովը բուլղարերէն ճառով ողջունեց ներկայ եղողներին։

Նախագահի մի առաջարկութիւնից յետոյ գիտնականների ռուս ընկերակցութեան մասին, որի մասին կը խօսենք մի փոքր ուշ, ամբիոն բարձրացաւ Պրոֆ. Եգորովը։

Կիրխհոֆի և Բունզէնի մեծագիր նկարները, որ մինչ այդ լուռ նայում էին ամբիոնից ներկայ եղողներին, այժմ մարմնացան կենդանի խօսքի մէջ և գիտութեան պատմութեան փայլուն հորիզոնի վրայ նկարուեցին իրենց մտաւոր մեծութեամբ...

«Պատկերալուծութեան 50 տարին» ճառով Պրոֆ. Եգորովը նկարագրեց գիտութեան այդ ճիւղի զարգացումը սկզբից մինչև մեր օրերը։

Նոյն ժողովում նախագահը առաջարկեց մասնաճիւղերում քննել «Գիտնականների ռուս ընկերակցութեան» նախագիծը, որը կարգադրիչ մասնաժողովի կողմից ընդունուած ձևով կտպագրուի «Դեննիկի» № 2-ում և որոշումները յայտնել ոչ ուշ քան յուն. 1-ը։

Գլխաւոր կէտերը հետևեալներն են.

1. Ռուսաստանում գիտութիւնը տարածելուն նպաստելու համար կազմւում է «գիտութեան զարգացման և տարածման նպաստելու ռուս ընկերակցութիւն»։

2. ընկերակցութիւնը նպատակ է դնում բոլոր ունեցած միջոցներով նպաստել գործնական բնագիտութեան, մաթեմատիկայի, աշխարհագրութեան, գիտական բժշկականութեան և նրանց հետ կապակցած գիտութիւնների զարգացման. այլ գիտական ընկերութիւններն ու հաստատութիւնները անձեռնմխելի թողնելով։

3. Այդ նպատակը իրագործելու համար ընկերակցութիւնը՝

ա). որքան կարելի է յաճախ և կանոնաւոր կերպով ժողովում է համագումարներ, մասնաճիւղերի բաժանելով, ընդհանուր և մասնագիտական հարցերի մասին հաղորդելու և համապատասխան գիտութիւնների զարգացման և տարածման միջոցները քննելու։

բ). նպաստում է գիտական հետաքրքրութեան արթնացնելուն և ամրապնդելուն, համագումարների ժամանակ սարքելով զանազան գիտական ցուցահանդէսներ, հասարակական դասախօսութիւններ, փորձեր, էկսկուրսիաներ, մասնագէտների ուղեկցութեամբ թանգարանների, արհեստագիտական հաստատութիւնների ևն դիտում։ Գրքեր և ամսագիրներ հրատարակելով գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ. ևն.

գ). Նպաստում է փոխադարձ մերձեցման գիտութիւններ ուսումնասիրող և դաս տուող անձանց, դրանց համար նիւթեր հա-

ւաքողների և դրանց յաջողութեամբ հետաքրքրուողներին. այդպիսի անձանց փոխադարձ յարաբերութիւնը թեթևացնելու ինչպէս իրար, նոյնպէս և ռուսական և օտարազգի գիտական հաստատութիւնների և ընկերութիւնների հետ։

դ). Նպաստում է գիտական ուսումնասիրութեան աւելի սիստեմատիք ընթացքի և Ռուսիայի կարելոյն չափ լայն և բազմակողմանի ուսումնասիրութեան, ընապատմական, աշխարհագրական և այլ տեսակէտից։

ե.) Հնարաւորութեան չափ բարոյական և նիւթական օգնութիւն է հասցնում գիտական հետախուզութիւնների, գիտական նիւթերի ժողովելուն, հրատարակելու գիտական աշխատութիւնները, գիտական թանգարաններ, գրադարաններ, ցուցահանդէսներ հաստատելուն, ընկերութիւններ և ուրիշ լուսաւորող հաստատութիւնների և նախաձեռնութիւնների և մանաւանդ զաւառում։

զ.) Եթէ կգտնուեն բաւական գումարներ, հաստատում է մրցանակներ, մեդալներ, նոյնպէս և պատուաւոր կարծիքներ է յայտնում և տալիս է այդպիսիները աչքի ընկնող գիտական աշխատութիւնների և ձեռնարկութիւնների համար և ընկերակցութեան մատուցած ծառայութիւնների համար։

է.) հարկաւոր դէպքերում միջնորդում է պետական և հասարակական հաստատութիւնների առաջ հովանաւորել և օժանդակել գիտական ձեռնարկութիւնները և ընկերակցութեան նպատակները։

Ընկերակցութեան գլուխ է անցած խորհուրդը, որը վարում է բոլոր գործերը. գործադիր մարմինը Վարչութիւնն է (правленіе), որը բաղկացած պիտի լինի ոչ աւելի քան ինը հոգուց։

Համագումարները ժողովելուն նպաստում են տեղական կոմիտէները և այլն և այլն։

Այս նախագիծը ամբողջութեամբ տպագրուած է «դնևնիկ» № 2 ի մէջ և русск. вѣд. № 298 և № 299 1909 թ.։

Նոյն օրը սկսուեցին և միացեալ ու մասնաճիւղերի ժողովները։

Ա. Վ.

(Վերջը հետևեալ անգամ)



ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹԻՒՆ [1])

ՀԻՆԳ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԼ ԼԱՄՊՐԵԽՏԻ

II

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԹԱՑՔԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏԻՑ.

Շաբաթներ ու ամիսներից ի վեր անդրատլանտեան աշխարհի այս մեծաթռիչք ու ընդարձակ, այս աղմկալի ու եռացող կեանքում եմ ապրում։ Պատմական գոյութեան նոր ձևերի մէջ եմ թաղուել և թէև դեռ բոլորովին չեմ հասկացել, բայց այնուամենայնիւ շատ աւելի նախազգացած ու զգացած կանգնած են իմ առաջ մարդկութեան արժէքները, որոնց ես մի քառորդ տարի առաջ տպաւորութեան այսպիսի ընդարձակութեամբ և այս անմիջական մեծութեամբ զժուարութեամբ կարող էի երազել։

Այս դրութեան մէջ պէտք է ձեզ հետ խօսեմ հին աշխարհի մասին. այն էլ այդ հին աշխարհի ոչ հասարակ բաների մասին. Աւելի շուտ նրանց վերջին և զժուարութեամբ պարզաբանուած յառաջադիմութիւնների մասին, մի այնպիսի նեղ հոգեկան շրջանում, որպիսին է պատմագիտութիւնը և ուր հնարաւոր է մի քանի անձնապէս այս վերջին նուաճումներից դուրս կատարած քայլերի մասին։ Եւ տեսնում եմ, թ՞ՆՉքան զժուար է այսպիսի պայմաններում քննադատօրէն վերաբերուող ու գործը հասկացող շրջանի առաջ պատմագիտական և պատմական խնդիրները վերլուծել։ Բայց վերջի վերջոյ իւրաքանչիւր գերմանացու համար պէտք է արժէք ունենայ Ուհլանդի խօսքը—համարձակ շվաբացին չի վախենում. ինչ պատմաբանին է վերաբերում, պէտք է ասել, որ նրա համար միշտ պատրաստ է մի վերջին օժան-

---

[1]) Լումայ 1909 № 12

դակ միջոց, որը միաժամանակ նրա սկզբնական զէնքն է. նա նկարագրող կդառնայ. նա կսկսի պատմել։

Թոյլ տուէք այժմ նորագոյն պատմագիտութեան հարցերը, որոնց մասին ձեզ հետ յետագայ դասախօսութիւններում խօսելու եմ, այսօր սկսեմ իմ ժողովրդի պատմութեամբ—սկսած Քրիստոսից շուրջ 500 տ. առաջ մինչև այժմ։ Գերման ժողովրդի պատմութիւնը մի ժամում. լսում եմ ես։ Այո՛, մի ժամում. հէնց մեզ հետագայ դասախօսութիւններում զբաղեցնող հարցերի առանձնայատկութիւնը այն պայմանն է, որ այսպիսի մի համարձակութիւն կարելի է ունենալ, այդ պատմութիւնը միայն մի ժամում դասախօսելու։

Քրիստոսի ծննդից մի քանի դար առաջ և առաջին դարում յ. Ք. մենք տեսնում ենք գերմաններին, մեծ մասամբ մեր ընդհանուր նախահայրերին, մի այնպիսի հոգեկան դրութեան մէջ. որ մեզ, յետագայում ծնուածներիս համար մօտիկից դիտելու դէպքում զարմանալի է։ Նրանց երևակայութիւնը, հոգեկան բոլոր գործօններից այդ ամենանշանակալին, իւր յորձանքում ոյժին նայելով, շատ հարուստ է, չի երևում դեռ ևս ոչ մի բանաստեղծութեան, ոչ մի մեծկատակ ներկայացման, ոչ մի երաժշտական գիստի, ոչ գեղարուեստի, սէ արձանագործութեան և ոչ նկարչութեան մէջ։ Բայց նա վերին աստիճանի գործուն է. նա իւր հիմքով ընդդրկում է երևակայութեան գործունէութեան բոլոր տեսակները միաժամանակ. ոչ մի բանաստեղծութիւն չի ասում, որի հետ չլինէին շարժումներ և մարմնի պլաստիկ-նկարչական դիրք տալ և խօսքերի երաժշտականութիւն. ոչ մի ասնական գործ, որը չստանար բանաստեղծական երաժշտական ձևեր. գեղարուեստի ոչ մի ստեղծագործութիւն, որի մէջ չլինէր մեծկատակային մօտիւներ և նրանց մէջ էլ չհնչէին միաժամանակ լեզուի և հնչիւնի եղանակներ։ Երևակայութեան գործունէութեան այսպիսի ընդհանրութիւնը արտայայտութիւնների մէջ հասկանալիօրէն վերաբերում է գոյութեան բոլոր տարրերին հաւասարապէս։ Այդպիսի տարրեր են ինչպէս բնականը՝ ծնունդ և նշանադրութիւն, ամուսնութիւն և մահ, այնպէս և հասարակականը՝ նախնական տնտեսութիւն, իրաւունք և տո-

վորութեան տարրեր, այնպէս և բնութեան փոփոխութիւնը, աշուն և գարուն և սրանց հետ կապուած զգացումները և ամենից աւելի աստուածային հետ յարաբերութեան մէջ մտնելու հանդիսաւոր տօնը: «Այս հանդիսաւոր դէպքում իրենք աստուածները, ինչպէս ներկայ եղողներ են ըմբռնւում. նրանց բերում են ուրախ ընդունելութեամբ գիւղը և տուն, նրանց առաջարկում են հիւրասիրութիւն և ուղեկցում են դէպի առաջ: Երբեմն մի երիտասարդ կամ մի կոյս աղջիկ վերերկրայինի երևայը ներկայացնելու պատիւն էր ստանում. երբ այլևս այնքան համարձակ զգայականութեան մէջ էին ընկնում, այն ժամանակ առաջ աստուածն նուիրուած կենդանիներին էին տեղաւորում հանդիսաւոր գնացքի մէջ... երկնային կոչումը երկրի վրայ զգալի ներկայացնելու վարժութեան համար աստուածը մեծ պատիւներով էր ընդունւում: Ո՞վ չի ճանաչում երջանիկ երկրի տէր Ներստուսին, որին տանում են կովերը կառքով և գարնանը երկրի վրայով անցնում է նոր սկսուող երկրից մի սեփականութիւն ստանալու համար: Երբ նա կառքը քշում է մի նոր դաշտ, նրան ողջունում է երկրագործ ընկերների ազնական խումբը. այն ժամանակ հնչում է նրա համար չափաւոր շարժումների հետ միասին փառաբանական ու զմայլման երգը» *)

Ի՞նչն էր սակայն այս զարմանալի հոգեկան դրութեան, այս երբեմն դուրս ժայթքուած, բայց իբրև ամբողջութիւն ամենուրէք երևացող երևակայութեան սկզբնական միութեան և նրա դոյութեան բոլոր ուղղութիւններում ունեցած ազդեցութիւնների հիմքը:

Այս ժամանակում, մանր ժողովրդներից կազմուած գերմանացիները, երբ մօտ 100 տեսակի ազգութիւնների էին բաժանուած, երբ ռազմիկը դեռ ևս իւր տոհմի բնական բաժանումների սահմաններում էր ապրում և գլխաւորապէս տոհմական պարտականութիւններ էր կատարում, այս ժամանակ նրանց համար աշխարհը մի պատկերացրած կամ մտածուած

*) Կ. Լամպրեխտ Գերմանիայի պատմ. I հտ. 3 հրատ. (1902) 176 եր.

բան չէր, այլ ամբողջապէս միայն շօշափելի, պարզուած մի բան, ուստի շօշափելի էր այն պատկերը, որը նա նրա մասին կազմում էր։ Կեանքի ինչ կարևոր հանգամանքն էլ հոգեպէս պէտք լինէր ընդգրկել, այդ ոչ գաղափարներով էր նկարագրում և ոչ էլ դատողութիւններով խեղու�, այլ որպէս այդպիսին շօշափելիօրէն վերարտադրում էր, նրա մտքի համաձայն միանգամ ես հոգեկան գործողներում, որոնք նրա արտաքինը վերարտադրում էին, կրկնում էր։ Մեր հասկացողութեան համար այս վերին ասիենանի տարօրինակ, ուստի և դժուար ըմբռնելի դրութիւնը այլ կերպ նկարագրենք. որև է պատկերացման կամ որև է կամեցողութեան մտաւոր կազմուածքը մարմնանում էր իսկոյն մի արժէքալի գործողութեան մէջ. երևում էր, դեռ ևս իւր գործողութիւններում բազմաթիւ հիւղաւորման չենթարկուած, երևակայութեան մէջ այլաբանական ձևով։

Այլաբանութիւնը (սիմվոլիզմ) այս նկարագրած մտքով ասած այդ հին ժամանակի իսկական որոշիչ նշանն է, նշանակալի առանձնայատկութիւնը։ Սրան, իբր կեդրոնական երևոյթի, ենթարկուում են հոգեկան եղակի գործողութիւնները, օրինակ մտածողութիւնը, որքան վերջինս համեմատութիւնից առաջ եկած եզրակացութիւն էր, որը այլաբանութեան իսկական մտաւոր գործոնն է, կամեցողութիւնը, որքան սա իւր արտայայտման ամենապարզ բոպէներում, այն է դատարանի և համայնքի առաջ եղած դէպքերում շատ զարգացած այլաբանական ձևերով էր արտայայտուում. վերջապէս զգացումը, որը իւր բարձր ոգևորութեան դէպքում՝ կրօնական զգացման դէպքում, ստանում էր շօշափելի աշխարհայեցութեան այնպիսի ձևեր, որոնցից մէկի մասին այժմ խօսեցինք։ Ինչպէս հիմնական գործոնները, նոյնպէս և նրանցից առաջ եկածները իրենց կարևոր և յարատև արտայայտութիւնների ձևերում՝ լեզուի, դեղարուեստի, աշխարհայեցողութեան, սովորութեան, այլաբանական էին։ Իրաւունքի այլաբանութիւնը սովորութեան մէջ խո-

*) Կ. Լամպրէխտ. Գերմանիայի պատմ. I. 3 հրատ (1902) եր. 177.

բացել էր, վերջինս համարեա՝ ամբողջապէս գտնուում էր նրա ազդեցութեան տակ։ Աշխարհայեցողութիւնը առասպելաբանութեան սահմաններից դուրս էր եկել. սա բնութեան և մարդկային կեանքի կարևոր երևոյթները այլաբանօրէն պատկերացրել էր աստուածների աշխարհում, որը երևոյթների ետևում գտնուելով, սրանց առաջ բերելով և կառավարելով, ապրում է. սա մի բարձր պատկեր է տեսանելի իրականութեան։ Գեղարուեստը, որը սահմանափակուած էր միայն մի պարզ զարդադիտութեամբ, այլաբանօրէն պատկերացնում էր երևոյթների աշխարհի այլ տարրը, որը ամենից առաջ և սկզբնապէս ձեւերը կազմող յիշողութեան մէջ է պահուում, այսինքն շարժումը, չափը։ Լեզուն էլ, երբ սկսեց այս չափը աւելի գիտակցօրէն, աւելի լաւ գործածուել, սկսեց սրան յատուկ, գերմանական եղանակին, որ է կազմող տարր հիւսել և աւելի խիստ ուշք դարձնել ոչ այնքան գեղեցիկ ձևեր կազմելուն, որքան նշանաւոր բովանդակութիւն ունենալու զարգացմանը։

Այսպիսով, որքան այս ժամանակի աղքատիկ տեղեկութիւններն հնարաւոր են դարձնում զարգացման նախկին և յետագայ հոսանքները տարբերել, հոգեկան կեանքը մի մեծ միութիւն ունէր։ Կարող ենք տեսնել, ինչպէս այս բանը մի յատուկ անձնաւորութեան իդէալի մէջ իւր ազդեցութիւնն ունի, ինչպէս այդ անձնաւորութիւնը կրող է այդ բանի։ Այլաբանական հոգեկան կեանքի այս աշխարհում եղակին կորչում է. նա միաժամանակ դերասան է իրենից անկախ առաջ եկող, իւր մէջ անգիտակցօրէն իշխող ընդհանուր հոգեկան կեանքի. նա ամբողջի մասն է դառնում. նա համարժէք հանուր գոյութեան անդամների կողքին նոյն արժէքն ունեցող մի անդամ է։

Գերմանական արտաքին կուլտուրայի էական, նկատողութեան արժանի յատկանիշը իսկապէս այս է։ Մենք տեսնում ենք ազգը առանց որևէ կապի, որը ամբողջին քաղաքականապէս կապէր. ազգը բաժանուած է մի ամբողջ շարք ցեղերի. նրա անհատների հոգեկան մօտիկ նմանութեան շնորհիւ անհրաժեշտ կաիրք չկար ամբողջի սերտ միութեան. ինչպէս այս պէտք է աշխատանքի բաժանման և միութեան դէպքում.

այս նշանակում է բարձր կուլտուրայի անհատական գործունէութեան շերտաւորումն. Բայց ցեղերն էլ իրենք ոչ թէ պարզ, այլ բարդ կազմութիւններ էին. սրանք կազմուած էին հարիւրակներից և գերմանացին իսկապէս այստեղ է ապրում. այս հարիւրակներն էլ աւելի պարզ տոհմադրութիւն ունին, լրևնց հիմքով դեռ տոհմեր են։ Տոհմի մէջ գերմանացին հոգեպէս կապուած է. տոհմը նրան պարփակում է իւր, դեռ չբաժանուած կեանքով. այստեղ նա միայն մի օրինակ է և ոչ թէ անձնաւորութիւն. նա ենթարկւում է արեան վրիժառութեան համակարգութեանը, որտեղ անհատների հոգեկան նման մակերևոյթում միատեսակ հոգեկան ելակէտ է իշխում։ Նա իւր անձնական հակումներով, իւր բարեկամութեան և թշնամութեան մէջ տոհմի կեանքի ուղղութեան հետ է կապուած. նա երևում է, առնուազն արտաքուստ այնպէս, որ մեր զուտ անձնական ձգտումների մասին ունեցած հասկացողութիւնների տեսակէտից, իւր տոհմի միւս ընկերների հետ կարող է շփոթուել։

Այս հակադրութիւնը, աւելի ճիշտ ասած այս կատարելապէս ժխտումն է այն բանի, ինչ որ մենք անձնաւորութիւն ենք անուանում, տոհմի բնական բաժանման մէջ համապատասխանում է այն տեսակին, երբ անհատները պետութեան ցեղերից կազմուած դրութեան մէջ գործադրւում են։ Պետութիւնը զօրքն է և պետութեան քաղաքացիութիւնն էլ ընկերականութիւնը ընկերութիւն այն մտքով, որ ամբողջին ենթարկւում են ամբողջապէս. այն մտքով, որ նոյն իսկ աչքի ընկնող հերոսների անձնականութիւնը ամբողջովին կորչում է։ Ընկերական ու բնական կապակցութիւնների շնորհիւ հայրենիքի հողային շահագործման ամենանոր տնտեսական կապակցութեան ձևն է պայմանաւորւում։ Շատ տոհմերի և հարիւրակների հողն ու գետինը բաժանւում է իբրև պատերազմի աւար ընկերական տեսակէտից. այս պատճառով մշակութեան պարզ ձևերը համայնատիրական են։

Այս բոլոր տպաւորութիւններից յետոյ կարելի է զարմանալ, որ հռոմայեցիք գերմաններին նոյն նոյն ըստ արտաքինի, ըստ դիմագծերի իրար շատ նման էին համարում։ Մեծ ժողովրդագիր Տակիտոսը այս արտաքին նմանութեան հիման վրայ այն բնո-

րոշ բանն էր ասում, թէ Yens propria et sincera et tantum sui simbilis.

Սակայն Տակիտոսից 2-3 դար յետոյ այս աշխարհը ոչ միայն արտաքին, այլ և հոգեկան շարժումն է սկսում. հինգ-վեց դար յետոյ տեսնում ենք նոր հոգեկան դրութիւն, որը շարունակւում է մօտաւորապէս մինչև ժա. դարը, որը իւր նախկինից ամեն բանով, ուրեմն հիմնաւորապէս տարբերւում է։

Ինչ նշանակութիւն ունեցաւ Գերմանիայի համար ժողովրդների գաղթը։ Հին աշխարհի կործանումն. դիւա, բայց ոչ շուտով կառուցումն մի նոր աշխարհի։ Դեռ ևս գերմանական լեզուի մէջ նկատելի են խոշոր դժերով փոխառնուած արտայայտութիւններ մի աւելի լաւ կենցաղի համար. օրինակ տան և ագարակի խմիչքի ու կերակրի վերաբերեալ։ Սրանք անջնջելի հետքեր են այն ազդեցութիւնների, որ յղփացած կայսերութեան կուլտուրայից եկան մնացել. այն կայսերութեան, որի խնամքի առարկայ եղող խաղաղութեան մէջ խուժեց աւերող գերմանացին։ Բայց այս կոպիտ և դեռ այսօր էլ եղակի դէպքում նկատելի ազդեցութիւնների հետ երևում են հրքան անթիւ մեղմ ազդեցութիւններ, որոնք գերմանական հողին դէպի աւելի խորն են մղում։ Մերովինգեան պետութեան բարոյական ու մտաւոր տխուր դրութեան մէջ, ինչպէս և Միջերկրեայ ծովի գերմանական պետութիւններում տեսնում ենք որ հանդէս է գալի նախ համարեա՛ բոլորովի՛ն նոր շերտաւորումն հին գերմանական ոգու. ոչնչանում է այն, ինչ որ կանոն էր և աստուածային. գերիմացական-այլաբանական մտապատկերներն այժմ նշանակութիւն ստացան։ Օտար կուլտուրայի անսանձ ջրերը փլատակ փլատակի ետևից տանելով վշշում են ինչպէս ջրհեղեղը, քանդում են եղածը. բայց դեռ շատ հեռու են այն բանից, որ նրանց կարելի լիներ տիրապետել և մի նոր հունի մէջ դնել։ Շատ դանդաղօրէն է սկսւում նորը և դեռ խաղաղութիւն է տիրում. հին կուլտուրայի հեռացող և վերջապէս չորացող ալիքների վրայ երևում է նոր աշխարհ, իւր հիմքով ոչ հռոմէական, այլ փոխուած, զարգացման աւելի բարձր աստիճանի վրայ գտնւող գերմանական կուլտուրայի պատկեր։

Հաւաքենք այս նոր կուլտուրայի զգեստի մի քանի արտաքին ծոպերը։ Հին ժամանակը իբրև աչքի ընկնող երևակայութեան արդիւնք և միաժամանակ իբրև հոգեկան և ֆիզիքական երևոյթների աշխարհի գեղարուեստական արտադրութիւն գործ էր դնում դիակը և այսպէս ասած զարդակապը։ Ցանձին դիակի ասնում էին միաժամանակ միմիկայի, երաժշտական, բանասաեղծական արտայայտութիւններով հերոսի գործերը. ինչպէս Տակիտոսը Արմենիուսի մասին յիշում է. caniturad hue barbaras apud gentes. զարդակապի մէջ ձևակերպող գեղարուեստը ի մի էր ամփոփում շարժումների չափական ձևերը։ Երևակայութեան գործունէութեան այս ձևերի տեղ տեսնում ենք ազգերի գաղթից յետոյ ուրիշներն են հանդէս գալի և որոշ ներքին փոփոխութիւններով ծաղկում են մինչև XI-րդ դարը, Դիւցազներգութիւնը և տիպիկ զարդը։ Դիւցազներգութեան հին ձևն է հերոսների մասին երգերը, որոնցից մէկը դեռևս 9-րդ դարուց, վերջին ծաղկման ժամանակից Հիլդեբրանդի երգի մէջ մնացել է. կարճ կարած, համարեա դրամատիկական ձևով ընթացող, իհարկէ դեռ բարձր ձայնով երգուող և որոշ շարժումներով պատմուող մի աչքի ընկնող հերոսի մասին եղած պատմութիւն է։ Սա մի ձև է, որը այս արտայայտութեամբ պէտք է ազգերի գաղթի ժամանակ ծագած լինի. ազգերի գաղթն են պատկանում ամենահին անունները, որոնց կրողները հարուստ և մաքրելի աւանդութիւններով մեզ են հասել։ Բայց արդէն 8-րդ, եթէ ոչ 7-րդ դարուց այս ձևը, որը արդէն անկման շրջանի մէջ էր, տեղի է տալիս մի ուրիշի և հեքիաթերգութեան, որտեղ նոյնպէս մեծ մարդկանց ու նրանց համարձակ գործերի մասին է պատմուում, բայց սիրալիր կերպով կանգ է առնում անցքերի մանրամասնութիւնների վրայ. աւելի ուշ ժամանակ համարեա անեկդոտական մանրամասնութիւնների մասին իսկ. իւր ամբողջութեամբ սա իրականութեանը մօտ է, որը բանասաեղծօրէն է արտայայտուում։ Այս ձևը մեզ հետաքրքրող ժամանակի վերջին դարերում է յատկապէս ծաղկում։ Այդ դարդացման բարձր աստիճանը եղել է 900 թուին. յետագայում նրկատուում է հակումն աւելի մանրամասնութիւնների մասին խո-

սել։ Սրա հետ միասին առաջ է գալի կենդանիների առակների ճաշակը և վերջապէս գործնական, ներկային վերաբերող ոտանաւորով կազմուած ժամանակագրութիւնը. այլևս 13-րդ դարի ծաղրական երգերը, ինչպէս օրինակ մի կողմից Գոտֆրիդ Հագէնի գիրքը Քեօլն քաղաքի մասին, միւս կողմից Թէև լատիներէն գրած, Ցեղարիուս ֆօն Հայստերբախի հրաշախօսութիւնները. նաև 12-րդ և 13-րդ դարերի հաղարաւոր հրաշքները. այս բոլորը կարող են լաւ բնութագրել այդ ժամանակը։

Դիւցազներգութեան այս զարգացմանը զուգահեռաբար ծաղկում է ձևակերպող գեղարուեստի մէջ տիպիկ զարդանկարը։ Տեսնում ենք ինչպէս նախկին ժամանակի զարդանկարը հետզհետէ կենդանիների ձևեր է ստանում, մինչև որ ժապաւէնները փոխւում են օձերի և ամեն տեսակ չորքոտանիների և թռչունների իհարկէ շատ սահմանափակ շարժման ձևերով։ Կարող ենք տեսնել, թէ ինչպէս այս անցման ձևերի մէջ կենդանին հետզհետէ աւելի պարզ է երևան գալի. սկզբում իհարկէ իւր մօտաւոր ուրուագծով, տիպիկ բառի իսկական մաքով, այնպէս որ կարելի է զանազանել միայն չորքոտանի, թռչուն և ծուկ լինելը և ոչ այդ ընդհանուր տեսակների առանձնայատուկ սեռերը։ Սակայն 7-րդ և 8-րդ դարերից յետոյ երևում է, թէ ինչպէս շրջապատող ծածկոցի տակից այս ընդհանուր պատկերացումներից նորից յատուկ տիպեր են դուրս գալի. չորքոտանիներից երևում է շունը, եղջերուն, թռչուններից սաղր, արծիւը. սակայն ոչ իրական ըմբռնուած տեսանելի առանձին պատկերներ նոյնիսկ ընդհանուր տիպի չափով արտայայտած, որ տեսնում ենք զինանշանի վրայ եղած կենդանիների մէջ. այնուամենայնիւ առանձին պատկերներ են, որոնք առանձին սեռեր են արտայայտում։ Միաժամանակ երևում է մի ինչոր նորի թեթև հեսքերը, որոնք 10-րդ դարու ընթացքում ծաղկած գեղարուեստի են փոխարկւում, որէ ծաղկազարդ քանդակի, շարժուող երևոյթի՝ կենդանու տիպիկ վերարտադրութեանը հեսևում են անշարժներինը, բուսականը. նորից իհարկէ ընդհանուր ձևերով. չի երևում մի որևէ ծառի կամ բոյսի առանձնայատուկ երևոյթը. դրա փոխարէն հին ժամանակ զարդաքանդակի մէջ

գործածուող ձևերը ճիւղերի և ոստերի հրաշալի ալիքանման շարժումների մէջ արտայայտուում են: Բայց այստեղ էլ առաջ է գալիս մի ուժեղ անհատականացումն. ծառը, թուփը և բոյսը, խոտանման և նուրբ ծաղկող պատկերները արդէն զանազանուում են, մինչև որ մի փոքր յետոյ իրարից տարբերուում են ծաղիկն ու ծառը և ծառերի մէջ էլ կաղնին ու հաճարին: Միևնոյն ժամանակ է, երբ նկարած իրերը տեղական գոյնով և ոչ պատահական, շատ անգամ պայծառ գոյներով նկարելու. վերջնական զարդացմանն է հասնում, իսկ կենդանական զարդաքանդակի մէջ համեմատաբար ժամանակակից զինանշանի կենդանիների ուժեղ իրականութիւնն է իշխում:

Իսկոյն երևում է ինչպիսի զուգահեռական ընթացք են ունեցել այդտեղ ձևակերպող գեղարուեստը և բանաստեղծութիւնը, որոնք ազգային զարգացման այս դարերում միայն դիւցազներդութեան ու կենդանական զարդաքանդակի մէջ են արտայայտուել: Առաջին շրջանին՝ դիւցազներդութեան ու կենդանական զարդաքանդակին հետևում է մի երկրորդը՝ հէքաթերը և բուսական զարդաքանդակը, որոնց միայնակ զարդացման նշանը առաջադիմող համապատասխանումն է իրականութեանը. թէ և մինչև դարաշրջանի վերջը միշտ նախ երևոյթների աշխարհի տիպերի արտայայտելն է նրանց յաջողուում, քան անհատականը:

Բայց զարդացման ընթացքը միևնոյնը չէ՞ արդեօք, որը նոր ժամանակի երևակայութեան ամբողջ գործունէութիւնը նախորդ գերմանական նախաժամանակից բաժանում է. միայն թէ բաժանման գիծը ազգերի գաղթից առաջ և յետոյ եղած ժամանակի մէջ աւելի ուժեղ է քան 7—9-րդ դարերում: Որովհետև երբ երևոյթների աշխարհի գեղարուեստական ըմբռնումը դեռ չի հասել շարժուող կենդանու մօտաւոր տիպին, վերարտադրութեան ասպիճանին կարո՞ղ է նա ուրիշ բան անել, քան այն, որ միայն հէնց շարժումն է իրեն նիւթ դարձնում: Սա մի նոյն տեսակի դէպք չէ, բայց զուգահեռական է. երբ երևան դեռ կենդանու և մարդու տիպիկ վերարտադրումից առաջ, որին աստիճանաբար նա հասնում է իւր զարգացման որոշ հասակում. քարեգրիչը, որ նրա ձեռքն են տալի, ուրիշ բան չէ

արտադրում, բայց եթէ շարժումներ, գծեր, որոնք նրա ծեռքի անդիտակից, չափական շարժումներից են առաջ գալի միաժամանակ որոշ տեսակի կենդանիներ՝ կատուներ, շներ, ձիեր է պատկերացնում։ Եթէ հոգեկան երևոյթների աշխարհը պատկերացնելու վերարտադրման ընդունակութիւնը մի որև է հերոսի, թէ և դեռ տիպիկ, դորժերի պատմութեանը չի հաւատարուելու, չպէ՞տք է արդեօք այս հերոսի զգացումների պատկերաւոր կրկնութիւնը և այս զգացումների յուզիչ վերարտադրումը յանձին դիակի հանդէս գար։ Այս բանը զգացումների ներշնչումն է պատկերացուելիք առարկային, մի բան, որ նախաժամանակի այլաբանութեան նշանն է, ինչպէս որ տեսած շարժումը նկարող արուեստաւորի անձնական չափի հետ միացնելը այս ժամանակին յատուկ է։ Հետևեալ ժամանակը, որին կարող ենք տիպիկ ասել, իւր հետ բերում է զգացումների վերլուծութիւն և իրերի շարժողութիւն, որի էութիւնը ու ձևը մօտաւորապէս է հասկացուում. նա բերում է դիւցազներգութիւն և զարդաքանդակ։

Այստեղ արած մի փոքր երկար դիտողութեան շնորհիւ մենք միաժամանակ իմացանք նախկին և ներկայ ժամանակի հիմնական տարբերութիւնը։ Նախաժամանակը ընդգրկում է բնութեան հետ և նրա մէջ անդիտակից կենցաղի տարրեր. լինի այդ արտաքին, ֆիզիքական երևոյթների կեանքի բնութիւնը կամ հոգու ներքին շարժումներինը։ Նոր ժամանակում մարդը սկսում է այս երևոյթները շնորհիւ դիտակցութեան աղօտ լուսաւորութեան իրենից դուրս նկարել. իբրև իւր սեփական եսից դուրս եղած մի առարկայական բան գնահատել. այս գնահատման շնորհիւ այդ առարկայականին տիրապետել։ Սա զարգացման մի գիծ է, որը գերմանական զարգացման ընթացքում մինչև ներկան էլ շարունակւում է և սրա առանձին շրջանները խորը ըմբռնուած ազգային զարգացման ժամանակաշրջաններն են կազմում։

Մինթէ յիրաւի. նախաժամանակը այսպէս բոլորովին անդիտակից դէմ յանդիման կանգնած էր բնութեան երկրի և հոգու դէմ։ Մի՞թէ հետագայ ժամանակաշրջանից մի կատարեալ

անջատումն է։ Պատմական ամբողջ փորձառութիւնը ստիպուած է այդ հարցին ոչ-ով պատասխանել։ Եթէ մենք գերմանական կեանքի աւելի նախնական ժամանակը ուսումնասիրենք, քան այսպէս կոչուած նախաժամանակն է, կտեսնենք, որ այն աւելի անդիտակից է առաջ գնացել, քան այս և որ իւր սեփական յատկութեամբ իրը առաջին և մեղ ծանօթ ժամանակ երևում է նախաժամանակը, իրը մի բացարձակ բան, որից իրրև անվերլուծելի տուեալից պէտք է սկսենք ժամանակաշրջանի հաշիւը։

Դառնանք 3-11-րդ դարերին, տիպիկի ժամանակաշրջանին. մի պարզ շրջահայեացք ցոյց կտայ, որ մինչև այժմ մեր ճանաչած հոգեկան էութեան բնոյթից են կախուած այս ժամանակի բոլոր երևոյթները, թէ արտաքուստ և թէ ներքուստ։

Պէ՞տք է արդեօք ասել, որ անձնաւորութիւնները և իրերը համածայն այն ընդունակութիւնների, որոնց միջոցով նրանք ճանաչւում են, բնականաբար ապրում են այնքան, որքան որ նրանք գործում են կամ ստեղծում։ Այդ ժամանակի պետութեան մարդը և մարտիկը մի հերոս է հնագոյն դիւցազներդութեան տուած իդէալի նման, իսկ աւելի ուշ և հէքիաթերդութեան ու նորագոյն վիպական բանաստեղծութեան տուած ձևի նման։ Գերմանը գերմանացի դառնալով մի տիպ էր, որը իւր ազգային արտաքին բնոյթը, իւր տիպիկ գերմանական էութիւնը հասկացաւ, երբ ձևակերպող գեղարուեստը օրգանական տիպերի ամբողջական վերարտադրման զարգացմանը հասաւ։ Երկու ծայրին կանգնած են հերոսը և ազգը, որոնց մէջ եղած ուսումնասիրող ժամանակաշրջանի քաղաքական պատմութիւնը առաջ է գնում։ Մի որոշ ժամանակի հոգեկան ընդունակութիւնների գործադրութիւն, որոնք առանց խորը կուլտուրական —պատմական հիմնաւորման իրենց սեփական յատկութիւններով անհասկանալի կմնան։ Այս պատճառով, տիպի լրիւ հասկացողութեան ժամանակը, 9-րդ դարուց է սկսւում. ռոմանական, գերմանական ազգերը արդէն դուրս են դալի կարլինդեան կայսերութեան մեծ, կրթական տանից ինքնուրոյն. այդ պատճառով քաղաքական պատմութեան մէջ արձագանք են գտնում հերոսների գործերը և հերոսական երգերը. այդ պատճառով դիւա-

նգի տական դէպքերը դեռ ևս մի հերոսի միւսի հետ ունեցած անձնական յարաբերութեան հետևանքով է որոշւում։ Պապի և Կարլոս մեծի յարաբերութիւնները կանոնաւորւում են կարոլինգեան իշխողի խոստումներով. նա ուզում է միշտ էլ ս. Պետրոսին տածած սէրը ամուր պահել։ Այս ժամանակի արտաքին պատմութեան աւանդութիւնը նոյնպէս գիւցազներգական կլիներ, եթէ եկեղեցին հռոմէական աւանդութիւնների ընդունակութիւնները ունենալով հոգ չտանէր տարբերական աւանդութիւնների համար։ Ինչ գիտենք Կարլոս մեծի մասին ազգային գիւցազներգութեան աղբիւրները ի նկատի ունենալով։ Պատերազմների մի շարք ընդդէմ մահմեդականների, ուխտագնացութիւններ Երուսաղէմ և հազար այլ բաներ, որոնք աւանդութեանը, որքան վերջինս իրականութեանը համապատասխանում է, հազար տեսակ վանող բնաւորութիւն ունեցող զուգորդութիւններով շրջապատում են, քան թէ թոյլ են տալի, որ եղածը պարզ պատմուի։

Բայց անհատի և ազգային համայնքի, որոնք այս ժամանակում թէև թոյլ յենարաններով, իրենք իրենց միջից կառուցւում են, միջև մտնում են հազար տեսակ կենցաղական ձևեր, որոնք ոչ պակաս ցոյց են տալի, որ այրաբանական ժամանակից յետոյ մի նոր ժամանակաշրջան է սկսուել։ Անհատը, եթէ ոչ ընտանիքի, գոնէ տոհմի խնամակալութիւնից կամաց կամաց դուրս է գալի. նա աւելի է ազատւում, թէև մեր չափով նայելով նորս կախումը մեծ սահմանների մէջ է։ Սկսում է ինքն իւր համար պատրաստուել, տնտեսապէս մի այնպիսի կազմ ստեղծել, որոնք համայնական կապերը տանում են դէպի խիստ ընկերականը. սոցիալական տեսակէտից դէպի աւելի ազատ պայմաններ պետութեան մէջ։ Նախապատմական ժամանակի հին ժողովուրդների պետութիւնը խիստ նեղ սաղմնային ընկերական կապով այժմ այլևս չկայ. սա մի աւելի ընդարձակուած պետական-տոհմական կազմի տեղի է տուել. այս վերջինիս վրայ բարձրանում է այս ժամանակաշրջանի վերջին դարերում մի մեծ, ազգային պետութիւն։ Ինարկէ իսկապէս այս ժողովրդի սեփական ոյժերի ստեղծագործութիւն չէ. այլ մի պատկեր է, որը դասական

ժամանակի վերջին մեծ պետութեանն է նմանում. այդ պատճառով սրա բարձր պարտականութիւններ կրողը՝ թագաւորը որը իւր մէջ միացնում է դասական կայսրութեան իդէան, թէև այդ միացման մէջ ապիկար, ազգին միշտ օգուտ տալ է երևում։ Սակայն յաջողուել է այս պետութիւնը իւր ազգային ընդարձակութեամբ հիմքից ժողովրդական զարգացման հիմքի վրայ այնպէս կառուցանել, որ նա տիպիկ ժամանակից էլ աւելի է տևում։ Այս ժամանակաշրջանի համար բնորոշն այն է, որ այս ժամանակում սովորութեան պայմանները, որոնց մենք իրը ազատ պայմաններ ենք նկատում, դեռևս իրաւական շղթայակապ դրութեան մէջ են մնում. հնարաւոր է միայն այս պայմաններից մէկը՝ գերմանների համար իվաղուց անտի ամենակարևորը, այս առաջին ամբողջական պետական կազմակերպութեան հիմքում դնել, այն է հաւատարմութեան պայմանը։ Այսպիսով առաջ է գալի վասալական պետութիւնը տիպիկ հաւատարմութեան գաղափարի պետական կազմ. այսպիսով սա կենդանի կերպով շարունակում է մինչև ծանօթ գերմանական պատմութեան երրորդ շրջանի առաջին դարերը։

11-և 12-րդ դարերը բերին մի ուժեղ սոցիալական յեղաշրջում. միջնադարի առաջին դարերից անցնում ենք միջնադարի վերջին դարերին տիպիկ ժամանակից հոդեկան կեանքի միակերպութեան ժամանակին։

Արդեօք սոցիալ հոդեբանական դիտողութիւնը, որը այնուամենայնիւ նեղ գերմանական պատմութեան սահմաններում է գործում հիմնաւորապէս և ըստ ամենայնի, այս նոր ժամանակը, որ տևում է մինչև 15-րդ դարը, իբրև մի նոր ժամանակաշրջան կ'երևայ, որի ներքին կեանքի սահմանները, թափն ու ընդունակութիւնը այլաբանական և տիպիկ ժամանակներում եղածին հաւասարազօր լինին։ Կարելի է կասկածել. արդէն գերմանական պատմութեան դիտողութիւնը այս հարցը անպատասխան է թողնում. արդեօք այս դարերը իբրև մի վերջին, անցողական ժամանակաշրջան չպէ՞տք է նկատել, տիպիկ ժամանակից անհատականին, 15-րդ դարուց 18-րդ դարը։

Ինչ էլ լինի. գերմանական պատմութեան մէջ այս ժա-

մանակաշրջանը լի է կեանքով և զարկերակը ուժեղ է խփում, այնպէս որ արուեստագէտի տեսակէտից նայած խնդրին թոյլ կտրուի այդ իրրև մի անկախ դրութիւն քննել։

Նուտ ըմբռնելու համար այս դէպքում ծեռնտու կլինի, ոչ թէ նոր ժամանակի հոդեկան կեանքի ուղն ուժուժը, այլ աւելի շուտ արտաքին, տնտեսական, սոցիալական կեանքի զարգացման ձևերը նկարագրել։ Դիտողութեան համար այստեղ կատարուած անցքերից երկու խոշոր շարքեր են առաջ գալի, որոնցից մէկը անշուշտ իւր տնտեսական գործօններով շատ վաղ անցեալ անգամ քննուած, ժամանակաշրջանում է թաղուած։ Այս շարքերից մէկը հողատիրութեան զարգացումն է, միւսը սկզբնական քաղաքների կազմութիւնը։

Գերմանացիների գաղթականութիւնը սկզբում հաստատուած էին ագարակներում և գիւղերում. գիւղացիական կեանքը, սրա հետ միասին որոշ չափով հողատիրութիւնը և հողային արդիւնաբերութիւնը գերակշռող է լինում. բայց արդէն մէրովինգների ամենանախնական ժամանակից այս համեմատարար միատեսակ հիմքը սկսում է տարրալուծուել. երևում է մեծ հողատէր ազնուական դասակարգը, որը գերադասէր միջին կալուածատէրերի բազմութիւնից։ Մեծ հողատիրութիւնը այդ ժամանակ կոչւում էին մեծ կալուածատէրեր։ Մեծ հողաբաժինների միատեսակ մշակման համար անհրաժեշտ էր տնտեսութեան հիմնական ձևեր, մի բան, որին բարձր կուլտուրայի դրամական տնտեսութեան ժամանակին են հասնում։ Մեր քննած դարերում մեծ կալուածը կարող է տնտեսապէս արդիւնաւէտ լինել, երբ նա ուրիշից տրուի կապալով։ Կապալով վերցնողները չէին կարողանում կապալառուներ լինել, պայմանագրի պարտաւորութիւն յանձն առնել, այնէ պարբերաբար դրամ վճարել, իրենց շահագործած հողի համար, որովհետև դրամական տնտեսութեան ժամանակը չէր, նրանք ստիպուած էին բնական արդիւնների և անձնական ծառայութեամբ վճարել այս պարտքը. այս բանին հետևեց այն, որ անձնական կախումն ունեցան իրենց տիրոջից. առաջ եկաւ մի սոցիալական դրութիւն, այն է ճորտատիրութիւն և կալուածատիրութիւն։

Այս նախաբանը արտաքոյ կարգի, նոյն իսկ հոգեկան հետևանքներ ունեցաւ։ Մի սոցիալական շարժումն առաջ եկաւ, որի ընթացքում յարմարութիւններ ունեցող հողատիրական մասը, եթէ ուզում է հոգեկան շահերի հետևեալ ազատ ժամանակ էր ունենում հոգեպէս աւելի ուժեղ ապրելու։ Այս մի պատմական ժամանակ էր, երբ առնուազն հոգևորական կոչուածատէրերի մի մասը, ամենից առաջ վանքերը սկսած 9 և 10-րդ դարերից, այդպէս էին ապրում։ Այս ժամանակը զուգահեռաբար էր զարգանում և միաժամանակ պատճառ ու հետևանք էր գերմանական հոգուց բղխած քրիստոնէութեան առաջին ընդունելութեան։ Ի՞նչ աչքի ընկնող են ընդսմին գերմանական քրիստոնէական բարեպաշտութեան առաջին արտայայտութիւնները, որոնք են մի մեծ ճգնաւորական կեանք, մարմինը տարօրինակ տանջանքների ենթարկելը և հրաշքների հաւատ, չսահմանափակուած համարեա՝ ոչ մի պատճառական գիտակցութեամբ, որը թւում էր թէ կարող է նոյն իսկ լեռները շարժել։ Եւ այս հոգեկան հոսանքի հետևանքները ինչպէս ուժեղ էին։ Նոյն ձևով Ֆրանսիայում և Իտալիայում դուրս բղխելով հոսում էր նա իբրև կենդանի ջուր, որի հոսանքը 11-րդ դարու պապերի իշխանութեան ձգտման գիտակցութեանը այն դրութեանը հասցրեց, որ հռոմէական պապական իշխանութեան արևմտեան առաջնութիւնից էլ անցաւ։ Գրիգոր Է-րդ այս գիտակցութեան ծրագիրը իւր քաղաքական պարզ տեսութեամբ ձևակերպեց և այս միջոցում տարածուած բարեպաշտական շարժումը, յատկապէս գերմանիայում աշխարհիկ իշխանութեան վրայ ճնշում գործ դնելով՝ հասցրեց եկեղեցական արժէք ունեցող համակարգութեան։

Pessimist

(Կը շարունակուի)

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԴՐ. Գ. ՌՕԼԷԴԷՐ. ՕՆԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԽՐԱՏՆԵՐ ԾՆՈՂՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ. Գ. 30 Կ.

Սեռային յարաբերութեան խնդիրը վաղուց արդէն դառել է քննութեան առարկայ ինչպէս մասնագէտների, նոյնպէս և հասարակութեան լայն շրջաններում և իրօք այս խնդիրը խիստ փափուկ խնդիրներից է, որոնց լուծելը աւելի դժուար է քան առաջին հայեացքով կարելի էր այդ ենթադրել. ժամանակակից գրականութիւնը շօշափելի կերպով ցոյց է տալիս այդ. բազմաթիւ, խնդրին վերաբերեալ, հանրամատչելի կամ մասնագիտական գրքուածքները աշխատում են ապացուցանել խնդրի այս կամ այն որոշման նպատակայարմար և ճիշտ լինելը· որքան էլ բազմազան են կարծիքները, նոյնչափ բոլորը առաջ են գալիս անհերքելի ճշմարտութիւնից թէ՝ այդ խնդրին որոշ ընթացք տալու համար, կամ աւելի ճիշդ, այդ խնդրի վերաբերեալ գաղափարները կեանքում գործադրելու համար անհրաժեշտ են մեծ զգուշութիւն, մեծ ծանօթութիւն մանկավարժական ձևերի հետ։

Եւրոպական երկրներում, ուր հասարակութիւնը կարողանում է հասկանալ և կռիւ մղել ամեն տեսակ ժողովրդի ֆիզիքական և մտաւոր ոյժերը թուլացնող ամեն մի չարիքի դէմ, վաղուց արդէն սկսել են զանազան դասախօսութիւնների միջոցով արմատացնել ժողովրդի մէջ առողջապահական առողջ գաղափարները. ինչպէս ստատիստիքան ցոյց է տալիս, այս եղանակը մեծ չափով ունենում է իւր դրական օգուտը. մենք առաջ կբերենք թոքախտի վերաբերեալ մի տեղեկութիւն, ենթադրելով որ իրողութիւնը այդպիսով փոխուած չի լինի. Ռուսաստանում մահացութեան ընդհանուր թուի յիսուն տոկոսը թոքախտից է լինում, մինչդեռ Անգլիայում թոքախտից առաջ եկող մահերի տոկոսը հասնում է միմիայն ամեն մի տասը հազարի—ութի և Անգլիացիք աւելի քան համոզուած են, որ ամենակարճ ժամանակամիջոցում պիտի այդ տոկոսը շատ աւելի իջեցնեն, զինուած գիտական և առողջապահական բոլոր

փորձով ու գիտութիւնով, պէտք է կռիւ յայտարարել ժողովրդի ոյժերը թուլացնող ամէն տեսակ ախտի դէմ, լինի դա ֆիզիքական թէ բարոյական։ Երբ մենք դիմում ենք մտաւորապէս աւելի զարգացած ազգերին, որոնք վաղուց արդէն ըմբռնել են այդ գաղափարը, մենք նկատում ենք, որ օգուտը միշտ լինում է մեծ։

Հասարակութիւնը վաղուց արդէն մտածում է սեռային յարաբերութիւնը կանոնաւորել, զանազան հիւանդութիւնների քանակը կրճատելու նպատակով, հիւանդութիւնների, որոնք պատճառ են դառնում շատերի հոգեկան տանջանքների և առաջ են բերում ցեղերի դէգէներացիա։

Որովհետև սեռային յարաբերութիւնները, գէթ այդպիսիների սկզբնաւորութիւնը, յատուկ է, ախտաբանական բացառութիւնները մի կողմը թողնելով, միմիայն մանուկներին, կամ աւելի ճիշդ կեանքի առաջին շրջանին, ուստի և անհրաժեշտ է այդ խնդրի մասին խօսելիս անցնել համապատասխան շրջանը։

Խնդիրը պարզ ընորոշելու և այլանդակութիւնների դէմ խելացի կռիւ մղելու համար անհրաժեշտ է բազմակողմանի ծանօթութիւն մանուկների սեռային կեանքի հետ։

Բժ. Ալբերտ Մոլլին իւր «Des sexualleben des Kindes» գրքոյկի մէջ մանրամասն կերպով քննում է այդ խնդիրը. գրքոյկը թարգմանուած է ռուսերէն և ցանկացողները կարող են օգտուել այդ գրքից։

Մանուկների սեկսուալ զգացումը շատ շուտ է արթնանում և եթէ նրանց շրջապատող անձերը պատրաստութիւն կամ հնարաւորութիւն չունին, որոշ և ողջմիտ ընթացք տալ այդ զգացումի, երբ մանուկը ինքը դեռ այնքան փոքր է և անփորձ, որ բոլորովին անկարող է գիտենալ թէ սպառնալիք չարիքները և կամ ողջմիտ ուղիով առաջ ընթանալ, մեծ և անփոխարինելի ծառայութիւն կարող է մատուցանել ամէն մի ծնող ոչ թէ իւր որդու, այլ և իւր մի ամբողջ սերնդի։

Սեռային զգացումը առհասարակ բաժանում են երեք շրջանի կամ երեք ճիւղի. առաջին շրջանի սէրը, որ մանուկը արտայայտում է դէպի իւր մայրը նկատում է իբրև չեզոք սէր. այս շրջանում մանուկը դեռ չի ապրում սեկսուալ կեանքով, նրա մէջ դեռ գոյութիւն չունի սիրային ձգտումը. մասամբ միայն սրա հետ կարելի է համեմատել և անգործ սէրը, որը տածում է ամէն մի ծնող դէպի իւր զաւակը. հետևեալ շրջանին սկըսում է արթնանալ սիրային ձգտումը, բայց դեռ սեռի տարբերութիւնը չի զգացում։ Ահա այս շրջանն է իւր մէջ պարունակում ապագայ այլանդակութիւնների սկզբնապատճառը. մի սխալ քայլ-

մի ինչին շարժառիթ բաւական է առաջ բերելու այն այլանդակութիւնները, որոնք այս շրջանում սկիզբ առնելով դառնում են շատ վշտերի պատճառը։

Երրորդ շրջանը առաջ է գալիս իւր վերջնական ձևով։ Ահա այս ձևով է բաժանում Մոլլը մանկան մէջ սիրային զգացումի զարգացումը։

Մտադրութիւն չունենալով այս խնդրի մասին խօսել, մենք ուղարկում ենք ընթերցողին ներկայ թուի № 4 Вѣстникъ Воспитанія ամսագիրը կարդալ, ուր զետեղած է յայտնի բժիշկ Կանելի «Սեռային հարցը մանուկների կեանքում» յօդուածը, որից և օգտուել ենք մենք. առաջ ենք բերում միմիայն պրոֆ. Էյլէնբուրգի խօսքերը։ Բժիշկների, առողջապահների (гигіенистъ) և մանկավարժների առաջ յարուցուում են աներևակայելի դժուար և լուրջ խնդիրներ մանուկների սեռային զարգացման շրջանը բարելաւելու. ինչպէս բժիշկ և նեարդախտաբան (Невропаталогъ) անհրաժեշտ եմ համարում մատնացոյց անել այն հանգամանքը, որ ներկայ պարագայում խնդիրը վերաբերում է մի պարագայի, որը ծանր նեարդային և հոգեկան հիւանդութիւնների սկզբնաւորութեան մէջ, որ մենք պարտաւոր ենք վերացնել, վճռական դեր է կատարում։ Ես ի նկատի ունիմ ջղային երեխաներին, որոնց սեռային զգացումը շուտ է արթնանում և սեռային հասունութիւնից շատ առաջ նըկատուում է սիրային ձգտում, վերջինի ինքնաբեր արտայայտութիւններով և ուղեկիցներով, այն է հակումով դէպի օնանականութիւն։

Բայց չպէտք է մոռանալ և այն, որ սեռային ամեն տեսակ այլանդակութիւնների հիմքը դրուում է սկզբնական շրջանում։ Այդ պատճառով մենք պէտք է մտածենք նախազգուշացնող միջոցների մասին, որոնք գործնական են միայն այն դէպքում, երբ գործադրուում են իւր ժամանակին։ Կեանքի ապագայ շրջաններում, արդէն արմատացած այլանդակութիւնները այլևս ենթակայ չեն բժշկութեան։

Եթէ այս ճիշդ է, որ անկասկած է, ուրեմն ամեն տեսակ այլանդակութեան դէմ մաքառելու և նախատեսնելու վերացնելու միակ կարող անձը ծնողն է. ինչպէս ասում է բժիշկ Ռոլէդէրը «Եթէ ի նկատի առնենք ախտի բոլոր հետևանքները հոգու, մտքի և մարմնի վրայ, եթէ յիշենք, թէ որ աստիճան լայն կերպով տարածուած է այն երիտասարդների մէջ, թէ ինչ կորստաբեր աղդեցութիւն ունի այս բոլորը ջնջել յանցագործների կամքի ոյժի, հոգու տրամադրութեան, բարոյականութեան և ընտանեկան վրայ, ինչպիսի անուղղելի ինքնաբերաբար է հասցնում ընդհանրապէս մարդ-

կային ամբողջ յօրինուածքին—այն ժամանակ ամենքը, կարծեմ, կհամաձայնեն ինձ հետ, որ օնանականութեան առողջապահութեան վրայ ամենամեծ ուշադրութիւնը պէտք է դարձնել և այս պէտք է լինի ոչ միայն մասնաւոր մի գործ, ոչ թէ միայն ծնողներին և շրջապատողներին պէտք է վերաբերի, այլ պէտք է լինի հասարակական, պետական մի գործ,—ժողովրդական մասնաւոր և պետական ստորին և բարձրագոյն դպրոցների գործ»։

Եւ ամենից առաջ ծնողների գործ... Ահա ինչու երկար կանգ առանք մի գրքոյկի վրայ, որը կարելի է շատերը կարմրելով վերցնեն ձեռքը. բայց կեղծ ամօթխածութեան վերջ դնելու ժամանակը վաղուց արդէն հասել է։

Sana mens in corpore sano ! Ում թանկ է ցեղերի բարգաւաճումը, ժողովրդի զարգացումն ու առողջապահութեան գաղափարը տարածելու իմաստը, նա ոչ թէ ինքը առողջ դատողութեամբ կվերաբերուի այսպիսի խնդիրներին և հրատարակութիւններին, այլ և ուժեղ կերպով կնպաստի ժողովրդի լայն խաւերում տարածման նման գիտական գեղեցիկ արտաքինի մէջ ամփոփած իմաստները։ Ընդունելով բժ. Գ. Ռօլէդէրի գրուածքի բոլոր արժանիքները, մենք չենք կարող մատնացոյց չանել մի խիստ կարեւոր մանկավարժական հանգամանքի վրայ. եր 37 և եր 43 հեղինակը խօսում է ծնողական հսկողութեան մասին։ Մենք բոլորովին դէմ չենք այդ հսկողութեան ինչպէս վերը արդէն պարզ ցոյց տուինք, բայց ինչպէս այդ յաճախ լինում է, կասկած ենք տածում, որ մանկան նուրբ հոգին խիստ շուտ կարող է ըմբռնել հսկող աչքը և խիստ անախորժ հետևանքների պատճառ կարող է դառնալ այդ հսկողութիւնը, ինչպէս օրինակ կասկածկոտութեան, ծածկասրտութեան և այլն. մանուկը կարող է մօր սիրող աչքը ընդունել իբրև հալածող, որ նրա մէջ առաջ կբերի սոսկալի հետևանքներ։ Ինքը բժիշկ Ռօլէդէրը կարծում ենք ի նկատի է առել թէ ընթերցողը կարող է նրբութիւնը ըմբռնել և չի բացատրել աւելի պարզ կերպով այդ խիստ փափուկ խնդիրը։

Ահա այս հետևանքներից զգուշացնում ենք բոլոր ծնողներին։

ՊԱՐՈՅՐ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Х. Кучукъ Іоаннесовъ. Армянская надпись изъ Симферополя. Оттискъ изъ № 44 Изв. Тавр. уч. Арх. Ком.

„ Арм. надпись изъ Карасубазара. тоже.

Երուանդ Վ. տէր Մինասեանց. Հայոց եկեղեցու վերանորոգութեան խնդիրը. Թիֆլիս 1910.

Սարգիս Իսահակեան. Ժողովուրդը ժողովրդական լէլէնիրի մէջ. Բաքու 1910.

Ալէքսանդրապոլի Հ. Ս. Փրկչի տղ. դպրոցի ուս. և տնտ. տեղեկագիրը 1908—1909 ուս. տ. Ալէքս. 1909.

Յովհ. Թումանեան 1. Գիքորը. Թիֆլիս 1909. 2. Տէրն ու Ծառան. 3. Խօսող ձուկը:

Գ. Ղազարեան. Մայրենի լեզուի ուսուցումը. Թիֆլիս 1910.

Տեղեկագիր և հաշուեկշիռ Ռաշտի Հայոց գերեզմանատան յանձնախմբի, Թեհրան 1909.

Դարբին, Տաճկաստանի շարժումը. Թիֆլիս 1909:

Տիկ. Վ. Դաղեան. Բարի է Սուրիկը. մանկական պիես. Թիֆլիս. 1910.

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Թերթերը հաւանական են համարում, որ Պոլսի Հայոց պատրիարքը վերադառնայ իւր պաշտօնին և թէ Կիլիկիայի կաթողիկոսը յետ է վերցրել իւր հրաժարականը...

Այս բոլորը շատ լաւ։ Բայց մի բան միշտ անհասկանալի է մնացել, այն է՝ թէ կաթողիկոսները և պատրիարքները իրաւունք ունի՞ն արդեօք նման պայմանների մէջ հրաժարական տալու կամ յետ ընդունելու և ե՞րբ կամ ո՞րպիսի պարագաներում։

Չնորհիւ այն բանի, որ հայ լրագրութեան մեծամասնութիւնը միշտ հաւանութիւն է տուել այդպիսի հրաժարականներին, պնդելով նրանց օրինաւորութեան վրայ—այդ հրաժարականները դառնում են մի տեսակ առեղծուած, մի հարց, որ դեռ կարօտ է նորանո՞ր լուսաբանութիւնների։

Պոլսի Հայոց Պատրիարքի՝ Ս. Դուրեանի հրաժարականը առաջինը չէ։ Գոնէ մենք չենք յիշում մի պատրիարք, որ միքանի անգամ հրաժարական տուած չլինի, որովհետև այդ բանը համարուել է և համարուում է որպէս մի վերջին միջոց, որպէս բուռն բողոք։

Բողո՞ք, բայց ո՞ւմ դէմ։

Շատ քիչ օրինակներ կան, որ պատրիարքը հրաժարական տուած լինի Ազգային ժողովին։ Մեր կարծիքով այսպիսի հրաժարականը միայն ստիպողական է, մինչև անգամ անխուսափելի։

Թիւրքիոյ Հայութիւնը ունի իւր Ազգային ժողովը, յանձին ժողովրդի ընտրեալների, որով և նա—Ազգային ժողովը ամենայն իրաւամբ ազգի ձայնն ու կամքն է ներկայացնում։ Ըստ սահմանադրութեան, Ազգային ժողովն է որ պատրիարքներ է ընտրում կամ հրաժարեցնում, թէ և նրա կատարած ընտրութիւնը վաւերացնում է թրքական կառավարութիւնը յանձին Սուլթանի։

Երբ Ազգային ժողովի կամ սրա մեծամասնութեան ու պատրիարքի միջև ծագում են տարաձայնութիւններ կամ տարակարծիքութիւն, լինի սկզբունքի հողի վրայ կամ ոչ,—այս դէպքում պատրիարքի հրաժարականը անխուսափելի է այն բանաւոր պատ-

ճառով, որ երբ ազգը ներկայացնող մարմինը պատրիարքի հետ չէ, այն ժամանակ նա այլևս անզօր է գործելու։

Բայց ասացինք որ պատրիարքական պատմութեան մէջ այս բանաւոր հրաժարականի օրինակները շատ սակաւ են, մինչև անգամ եղել են դէպքեր. երբ պատրիարքները մի տեսակ մատների արանքից են նայել Ազգային ժողովի ձայնի ու իրաւունքների վրայ։

Սրա հակառակ պատրիարքական հրաժարականների մեծագոյն մասի դրդապատճառը եղել է գժտութիւնը պատրիարքի և Օսմանեան կառավարութեան միջև կամ այս վերջինիս բռնած ՀԷսակար ընթացքը դէպի հայ հպատակները։

Ս. Դուրեան պատրիարքի հրաժարականի պատճառը արդէն յայտնի է։ Ադանայում տեղի ունեցաւ հայկական կոտորած, որ գերազանցեց անցեալում տեղի ունեցած բոլոր ջարդերին։ Արիւնալից դէպի յետագայ լուսաբանութիւնից պարզուեց, որ այդ կոտորածի մէջ որքան մեղաւոր են հին ռէժիմի հայատեացները, նոյնքան մեղաւոր են սահմանադրական ռէժիմի ղեկավարներից մի քանիսը, որպէս և սահմանադրական զօրքը։

Եթէ այս մեղադրանքը թիւրիմացութեան արդիւնք իսկ լինի, Թիւրքիոյ սահմանադրական կառավարութիւնը մեղաւոր է հէնց այն բանում, որ փոխանակ գլխաւոր ջարդարարներին պատժելով սահմանադրական կառավարութեան արդարադատութիւնը երևան հանելու, ընդհակառակը, նա իսկական ոճրագործներին թագցնելու մտքով, աշխատեց Ատանայի արիւնոտ դէպքի ամբողջ պատասխանատուութիւնը հայերի վրայ ձգել։ Այս մտքով էլ Կիլիկիայի բանտերը լցուեցին կոտորածից մի կերպ ազատուած հայերով, որոնցից մի քանիսն իսկ կախաղան հանուեցին։

Սա արդէն չափազանց ակներև և միտումաւոր անարդարութիւն էր, որ գործեց Տաճկական կառավարութիւնը, այլ էլ այն սահմանադրական կառավարութիւնը, որ իւր ժամանակին չը քաշուեց բռնակալ ռէժիմի և միահեծան Համիդի ձեռքով նահատակուած հարիւր հազարաւոր հայերի մահը ողբալ և նրանց գերեզմանի վրայ կոկորդիլոսի արցունք թափել։

Կ. Պոլսի Հայոց Պատրիարքը, որպէս ներկայացուցիչ վտանգուած ազգի, շտապեց բողոքել այդ անօրինակ անարդարութեան դէմ։ Սակայն ոչ միայն նրա բողոքը անուշադիր թողնուեց, այլև կառավարութիւնը կիսապաշտօնական ձևով հասկացնել տուաւ թէ՝ քանի որ կայ Սահմանադրական կառավարութիւնը, ներկայացուցչական մարմին, որ կոչուած է բոլոր հպատակների շահերն ու իրաւունքները պաշտպանելու անխտիր,—պատրիարքի բողոքը

հաւասար է կառավարութեան գործերին միջամտելուն... որ ի-հարկէ թոյլատրելի չէ։

Եւ ս. պատրիարքը որպէս բուռն բողոքի արտայայտութիւն, ուղարկեց իւր հրաժարականը։ Եւ ուշ.—այն կառավարութեան, որի արիւնոտ վարմունքի դէմ բողոքելու ու իւր ձայնը լսելի անել տալու համար կոչուած էր ինքը։

Աւելի զարմանալին այն է, որ պատրիարքական հրաժարականը անվերջ նիւթ դառնալով լրագրական թղթակցութիւնների ու քննադատութիւնների, հասարակութեանը բերեց այն եզրակացութեան, որ պատրիարքի վարմունքը օրինաւոր է, որ բացի հրաժարականից ուրիշ միջոց այլևս չը կար։

Որ հարիւր հազարաւոր սուլիների ու հազարաւոր թնդանօթներ ունեցող կառավարութեան դէմ վճռական միջոցների դիմելու հնարաւորութիւն չունենք, այդ գիտեն ամենքը։ Բայց որ նոյնիսկ շատ աւելի ծայրայեղ դէպքում հրաժարական տալը Տաճկական կառավարութեան բացարձակ անմտութիւն է—այս մասին դեռ հարց չի եղել։

Հէնց այս է պատճառը, որ միմեանց յաջորդող պատրիարքներն ու հայ սերունդները զոհ են գնացել թիւրիմացութեան։

Աշխատենք պարզել մեր կարծիքը, որ հակառակ է տիրապետող մեծամասնութեան կարծիքի։

Հայոց պատրիարքը Կ. Պոլսում Թիւրքիոյ Հայոց փոխ-կաթողիկոսը լինելով հանդերձ նա հանդիսանում է միևնոյն ժամանակ որպէս Թիւրքիոյ հայերի ներկայացուցիչ Թիւրք կառավարութեան առաջ։ Եւ այս ներկայացուցչական լիազօրութիւնը բղխում է թէ համայն Թիւրքիոյ հայերից ընտրուած լինելուց և թէ մի այդպիսի լիազօրութիւն տալիս է նրան Թիւրքիոյ Հայոց սահմանադրութիւնը, որ ճանաչուած ու վաւերացուած է օսմանեան Սուլթաններից։

Ուրեմն Թիւրքիոյ Հայոց պատրիարքը նոյնն է, ինչ որ օտար պետութեանց դեսպանները թիւնք կառավարութեան առաջ։ Իսկ դեսպանը ուրիշ բան չէ, եթէ ոչ ներկայացուցիչն այն կառավարութեան և այն ազգի, որից ղրկուած է իւր շահերն ու իրաւունքները պաշտպանելու։ Որպէս ամեն մի պետութիւն, նոյնպէս և Թիւրքիան կարող է չընդունել այս կամ այն անձի նշանակուելը դեսպանի պաշտօնի համար, նոյնպէս Թիւրք կառավարութիւնը կարող է ընտրուած պատրիարքին չը հաստատել։ Առաջին դիպուածում, անախորժութիւններից խուսափելու համար կառավարութիւններն այս կամ այն անձին դեսպան նշանակելուց առաջ

մտքերի փոխանակութիւն են կատարում. երկրորդ դիպուածում— նոր ընտրութիւն է կատարուում։

Ասել է թէ ոչ միայն պատրիարքների վաւերացումն է կախուած Թիւրք կառավարութիւնից, այլև դեսպանների վաւերացումը։ Սակայն սա չի նշանակում որ դեսպանները կամ պատրիարքները Թրքական պաշտօնեաներ են կամ որ և է կախումն ունեն Թիւրքիայից հէնց նրա համար, որ նրանց հաստատուելը կախուած է Թիւրքիայից։ Ոչ, սա մի բնական պահանջ է, որ բղխում է դեսպանների կամ պատրիարքների վրայ դրուած լուրջ պարտաւորութիւններից, յանուն որոնց շփումն պէտք է առաջ գայ սրանց և կառավարութեան միջև։

Որպէս դեսպանները, նոյնպէս և պատրիարքները իրենց պաշտօնի գլուխն անցնելուց յետոյ առիթը ներկայացած դէպքում դիմում են Օսմանեան կառավարութեան այս կամ այն խնդիրքով, առաջարկութիւններով, բողոքներով և այլն, միշտ իհարկէ յանուն այն պետութեան, որից դրկուած են կամ յանուն այն ազգի, որից ընտրուած են, որովհետև ոչ դեսպանները և ոչ պատրիարքները ոչինչ իրանց անունից խնդրելու կամ պահանջելու իրաւունք չունեն։

Ենթադրենք որ այս կամ այն դեսպանի խնդիրքը, առաջադրութիւնը կամ բողոքը անկատար է մնում Թիւրք կառավարութեան կողմից, որպիսի դէպքեր շատ յաճախ են պատահում։

Այդ հարց է՝ ինչ է անում այն դեսպանը, որի խօսքը գետինն է ընկնում կամ դատարկ խոստումներ է միայն արուում։

Եթէ դեսպանները իրանց պաշտօնի լիազօրութիւնը հասկանան մեր պատրիարքների նման, պէտք է հրաժարական դրկեն Թիւրք կառավարութեան ու իրենց պաշտօնին վերաբերող գործերը երեսի վրայ թողնելով, քաշուին իրենց տները։

Չէ՞ որ այսպէս են արել մեր պատրիարքները առաջնից սկըսած՝ մինչև ս. Դուրեանը։

Բայց մենք գիտենք, որ դեսպանները վարուում են ճիշտ սրա հակառակը։ Նրանք կանգնելով իրենց պաշտօնի գլխին շարունակում են իրենց պահանջներն ու բողոքները մինչև որ միջոցներն սպառուում են։ Սրանից յետոյ դեսպանի պաշտօնում մնալ կամ չը մնալը կախուած է լինում նոյն դեսպանին ուղարկող կառավարութիւնից և ոչ երբէք Թիւրքիայից։ Ծայրայեղ դիպուածում դեսպանի կառավարութիւնը նոր և աւելի խիստ հրահանգներով է զինում իւր ներկայացուցչին, եթէ հարցն այնքան ծանրակշիռ է և ներկայացուցչի ընդունակութիւնը գնահատելի. կամ հրահանգում է յարուցուած հարցը ժամանակաւորապէս կամ ընդմիշտ

փակել և կամ կառավարութիւնը յետ է կանչում իւր դեսպանին. եթէ դեսպանի մէջ գտնում է անընդունակութիւն կամ եթէ կամենում է իւր ընթացքը փոխել, և ուղարկում է նոր դեսպան։

Բացի այս բոլորից պատահում է նաև, որ ինքը դեսպանը այս կամ այն պատճառով հրաժարուելու հարկի մէջ է գտնուում։ Այս դէպքում նա իւր հրաժարականը ուղարկում է իրեն ուղարկող կառավարութեան և ոչ Թիւրքիային։

Սա մի բնական և չափազանց հասկանալի հետևութիւն է այն տրամաբանութեան թէ այս կամ այն պաշտօնեան, լինի դեսպան, պատրիարք, կառավարիչ, նախագահ և այլն, եթէ ստիպուած է հրաժարուել իւր պաշտօնից, հրաժարականով դիմում է իր կառավարութեան, ընտրող ազգին կամ հաստատութեան, և ոչ երբէք ուրիշի։

Այն ինչ մեր պատրիարքները հէնց սկզբից մինչև ս. Դուրեանը հետևել են սխալ քաղաքականութեան. հայ ժողովուրդը սկզբից մինչև մեր օրերը սխալ է հասկացել իրեն ընտրած պատրիարքի յարաբերութեան սահմանը Թիւրք կառավարութեան հետ մի կողմից և դէպի իրեն ընտրող ժողովուրդը՝ միւս կողմից։

Եւ այդ սխալ հասկացողութեան պէտք է վերագրել պատրիարքների հրաժարական մատուցանելը սուլթանի կառավարութեան և հայ ժողովրդի և մամուլի հաւանութիւնը այդօրինակ հրաժարականներին։

Վերն ասացինք որ Թիւրքիոյ Հայոց պատրիարքը նոյնն է ինչ որ օտար պետութիւնների դեսպանները։ Մեր պատրիարքները հէնց այդպէս էլ պէտք է ընդունեն իրենց և ոչ երբէք համարուին որպէս մի Թրքական պաշտօնեայ պատրիարքարանում բազմած։ Նրանք պէտք է գիտնան, որ իրանց ամբողջ գործունէութեամբ պատասխանատու են միայն ու միայն Ազգային ժողովի առաջ, որ հայ ազգի ձայնն է ներկայացնում։ Եւ դեսպանների նման պատրիարքներն էլ, ստիպողական պարագաներում, իրանց հրաժարականը պիտի մատուցանեն իրենց ընտրող և լիազօրող Ազգային ժողովին։ Հրաժարականը ընդունել կամ չընդունել կախուած պէտք է լինի Ազգային ժողովից։ Այս վերջինս պատրիարքի հրաժարականը պէտք է ընդունի երկու դիպուածում միայն. նախ՝ եթէ պատրիարքը բաւականաչափ ընդունակ չի գտնուել իրեն վրայ դրուած պաշտաւորութիւնները կատարելու մէջ և երկրորդ՝ եթէ հանգամանքներն ստիպում են պատրիարքարանի քաղաքականութեան ընթացքը փոխել։ Այնժամանակ Ազգային ժողովը պէտք է նոր ընտրութիւն կատարի։ Չընդունելով պատրիարքի հրաժարականը, Ազգային ժողովը վճռած կը լինի շա-

ունակել արդէն ընդգծուած քաղաքականութիւնը, որով և սըուած կը լինի պատրիարքին իւր վստահութեան քուէն։

Որոշ պայքար սկսող և այս առթիւ հրաժարական ներկայացնող պատրիարքին թողնել իւր պաշտօնի մէջ, միևնոյն ժամանակ փոխել արդէն սկսուած քաղաքականութիւնը—դա ոչ միայն անկարելի է, այլև ծիծաղելի։

Ս. Դուրեանը թիւրք կառավարութեան ներկայացրեց շատ տարրական պահանջներ, այն է—նա պահանջեց Ադանայի կոտորածի գլխաւոր յանցաւորների պատժումը և խնդրեց օրինաւոր միջոցներ, որով կարելի լինէր հայերին ապահովուած համարելնման վայրենի ջարդերից։ Թիւրք կառավարութիւնը իւր սովորական սարտո—մօրտալներից յետոյ, որոշ խոստումներ արեց և միևնոյն խոստումները ու աչքակապութիւնները շարունակւում են մինչև այսօր։ Սրբազան Դուրեանը շարունակ կրկնեց, որ ինքը դատարկ խոստումներին չի հաւատում և պահանջում է, որ կառավարութիւնը գործնականօրէն ցոյց տայ իւր արդարադատութիւնը...

Բայց քանի որ այդ կառավարութիւնը խաբուսիկ յոյսերից և աչքակապութիւններից այն կողմը չի անցել—ուրեմն ս. Դուրեանի վերադարձը միանգամայն անկարելի է ոչ միայն սկզբունքի տեսակէտից, այլև պատրիարքի անձնաւորութեան արժանապատուութեան տեսակէտից։

Իսկ պատրիարքարանը թողնել առանց պատրիարքի և գործերը լքեալ ու քաոսային դրութեան մէջ թողնել՝ անկարելի է։

Ուրեմն Ազգային ժողովը հաւատում է կառավարութեան արած խոստումներին կամ ոչ, նա տրամադիր է փոխել քաղաքականութեան ընթացքը և միջին ճանապարհ ընտրել, թէ շարունակել նոյն ուղղութեամբ.—այդ միևնոյնն է, բաւական է, որ նրան ուրիշ ելք չի մնացել, բացի շուտափոյթ պատրիարքական ընտրութեան ձեռնարկելուց։

Սա մեր խորին համոզմունքն է, որպէս և այն, որ այսուհետև պէտք է վերանայ պատրիարքների հրաժարականը թիւրք կառավարութեան մատուցանելու սովորութիւնը։

Mars

ԻՆՉ ՊԻՏԻ ԱՆԵՆ ՀԱՅԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՑՈՒՄ

Հազարաւոր տարիներ ապրում է հայը աշխարհի երեսին և միշտ դժբախտ։ Հայ ազգի պատմութիւնը իսկապէս մի մարտիրոսութեան և յիմարութեան անվերջ փաստերի նկարագրութիւն է։ Բոլոր դրացի ժողովուրդները հայերին չեն սիրել և չեն սիրում։ Զուր չէ։ Հայը իւր բարձր յատկութիւնների հետ միասին ունի և սոսկալի պակասութիւններ։ Հայի համակրելի յատկութիւնները—նրա աշխատասիրութիւնն է, հայրենիքի սէրն է և երկրագործութեան և հողին կպած լինելը։ Նրա սոսկալի պակասութիւնների գլխաւորը նրա անձայր անհատականութիւնն է կամ եսականութիւնը, նոյնպէս և քաղաքական խելքից զուրկ լինելը, ֆանտազեօրութիւնը հասարակական գործերում և ահռելի ցուցամոլութիւնը։ Այս յատկութիւններով հայը ապրել է մինչև այսօր միշտ հալածուած, միշտ յուսախաբ, միշտ նեղութեան մէջ, միշտ ծեծուած և կոտորուած։ Պէտք է մի օր հայը ևս քննական աչքով նայի իւր անցեալին ու ներկային և ըստ այնմ տնօրինէ իւր ապագան թէ ոչ։ Հայը իւր հասարակական գործերում ապրել է ինստինկտով, բնազդմամբ, բայց ոչ գիտակցաբար, իսկ ամեն մի առանձին հայ միշտ տասն անգամ չափել է և յետոյ կտրել։ Հայը իւր անհատական գործերում այլ եղանակով է գործել, իսկ հասարակական գործերում՝ այլ։ Եւ այս շատ հասկանալի է։

Հայը վաղուց մեռել է իբրև պետութիւն, իբրև հասարակական մարմին, իսկ իբրև անհատ ապրել։ Հասարակական օրգանիզմ պահելու կարևոր յատկութիւններ զարգացնելու պայմաններ չեն եղել, իսկ անհատականապէս ապրելու կարևորութիւնը զարգացրել է հայի անհատական խելքը։ Մինչև վերջին հայը չեն կարողացել կոտորելու արաբացի զօրավար Բուղաները, Թէյմուրլանգները, իշխան Գօլիցինները, Շաքիր փաշաները և այլն։ Բայց այս հազարաւոր տարիների կոտորածներից, փորձերից և յուսախաբութիւններից յետոյ պէտք է ուշքի գալ։ Իհարկէ պէտք է, եթէ ոչ խելքի կ'բերեն և աւելի սոսկալի ու աւելի խիստ կերպով, քան թէ եղել է մինչև այսօր։ Ապացոյցը մեր աչքի առաջ է։ Մինչև այսօր դեռ պարզուած չէ թէ արդեօք Ախմէդ Բիզայի կառավարութիւնը, որ կարողացաւ Մամէդ Ալի Շէֆկէթ փաշայ զօրապետի ուժով խորտակել Աբդուլ-Համիդին՝ նոյն եռանդոտ և անկեղծութեամբ կամեցաւ դադարեցնել Ադանայի կոտորածները իւր ժամանակին թէ ոչ։ Բայց չէ որ երբէք Աբդուլ Համիդի ժամանակ դաւառներում այդպիսի սոսկալի կոտորած տեղի չէ ունե-

ցել։ Ուրեմն։ Ուրեմն պէտք է Թուրք ժողովրդին, ուրեմն և Թուրք կառավարութեանը համոզել, որ հայը երկրի բարօրութեան համար կարևոր տարր է և այլևս քաղաքական ինտրիգների գործիք չպիտի դառնայ և ոչ էլ ցնորքներով ապրելու ցանկութիւն ունի։ Բաւական է։ Եւ այժմ բոպէն շատ յարմար է։ Թուրքիայի դրութիւնը շատ ծանր է այժմ և շատ կարօտ երկրի ազգաբնակութեան համակրութեան, Թուրքիայի վերածնութեան գործը հէնց այժմ էլ երկունքի մէջ է։ Աբդուլ-Համիդի անհեռատես և կործանիչ քաղաքականութեան և սխալների հետևանքները այժմ են արտայայտւում. Թուրք կառավարութիւնը շատ մեծ զգուշութեամբ և մեծ խելքով պիտի գործէ պետութիւնը վերջնական քայքայումից ազատելու համար։ Այսպիսի ժամանակ հայերը կարող են միմիայն մի քաղաքականութիւն ունենալ, իրենց հայրենիքի բարօրութեան հարազատ զաւակներ լինել և օգնել բարեմիտ կառավարութեանը ու ժողովրդին երկիրը կարգի բերելու։

«Баку» լրագրի թղթակից պ. Խաչմանեան նկարագրում է հայոց ազգային ժողովի կողմից նախարարապետ Հակկի-Բէյին այցելող պատգամաւորութեան խօսակցութիւնը։ Նախարարապետը շատ բարեմիտ էր դէպի պատգամաւորութեան արծարծած խնդիրները և ցանկանում է, որ ս. Պատրիարքը յետ դառնայ։ Մի մոռացէք, Թուրքահայ եղբայրներ, որ ոչ մի երկրում այսօր հայերը չեն կարող այն խնդիրների մասին խօսել կառավարութեան հետ, որպէս դուք և աշխատեցէք գնահատելի օսմանեան սահմանադրութեան շնորհիւ առաջացած կեանքի պայմանները և տնօրինելու ձեր ապագան կառավարութեան և դրացի ժողովրդի հետ փոխադարձ դիտակցութեամբ, որ դուք ընդ միշտ կապուած էք ձեր հայրենիքի հետ և ձեր աչքը մուրացկանի և դաւաճանի պէս դրսի յոյսերի վերայ չ՚պիտի լինի։

Գ. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

Ս. ՕՐՄԱՆԵԱՆ

Կ. Պոլսի Ս. Փրկչեան Հիւանդանոցի Վարչութեան հրատարակած ընդարձակ օրացոյցի 1910 էջ 45—57-ում գտնում ենք Կ. Պոլսի նախկին պատրիարք գիտնական Մաղաքիա Օրմանեանի հետևեալ հակիրճ, բայց բաւական ընորոշ կենսագրութիւնը։

Այդ կենսագրութիւնը և Օրմանեանի ներկայ դրութիւնը ինքնին մի մեծ դատապարտութիւն են Կ. Պոլսի հայութեան և զանազան հացկատակ Շահէնների հպմար, ուստի և մեր կողմից մենք ոչինչ չենք աւելացնում, բացի բառացի արտատպութիւնը։

«1896 Նոյեմբեր 6-ին 62 Երեսփոխաններէն 47-ին քուէովը Կ. Պոլսոյ պատրիարք կ'ընտրուի և Նոյեմբեր 20-ին երդումը կատարելով, պաշտօնի կը մտնի, մէկ կողմէն կառավարութեան վստահութիւնը շահել փորձելով, միւս կողմէն ջանալով կարելի եղածին չափ դարմանելու ազգին նիւթական վնասները։

Օրմանեան պատրիարք պաշտօնի մտնելէն յետոյ դարձեալ կարելի չեղաւ Սահմանադրութեան կատարեալ գործադրութիւնը, և գրէթէ օրէ օր աւելի սաստկացան սահմանադրական սովորութիւններու դէմ հալածանքը, Օրմանեան ստիպուեցաւ գործել տասերկու տարուան շրջանին՝ առաջին տասը տարիներուն մէջ միակ վարչութեան մը հետ, որուն անդամները հետզհետէ պակսելով բոլորովին կորսնցուցին իրենց մեծամասնութիւնը։ Օրմանեան պատրիարք յաջողեցաւ գաղտնապէս ընդհանուր ժողով գումարել և նոր վարչութեան մը ընտրութիւնը կատարել և վաւերացումը պահանջել, Մ. պատ. Օրմանեան, ճարահատ 1906 յուլիս 25-ին իր անուան տարեդարձի առիթով իբր թէ շնորհաւորութեան ընդունելութեան պատրուակին տակ, գաղտնապէս նիստի հրաւիրեց ազգային ժողովի մնացեալ անդամները և կատարել տուաւ կրկին ժողովներու ընտրութիւնը։ Համիտ նախ ընդդիմացաւ, սակայն յետոյ զիջաւ վաւերացնելու։ Հակառակ հալածանքին և սահմանադրութիւնը վերաքննելու համար Համիտի հետապնդումներուն, Օրմանեան կրցաւ սահմանադրութիւնը փրկել տասերկու տարի շարունակ Համիտը և իւր նախարարները խաբխբելով և ժամանակ շահելով, և միւս կողմէն ներքին մատակարարական գործերու մէջ միշտ պահպանելով սահմանադրական կարգերը, գոնէ իրենց արտաքին երևոյթովը։ Այնպէս որ բացի ընդ. ժողովի պատկա-

նեալ գործերէն, միւս գործերը կը մատակարարուէին սահմանադրութեան տրամադրութեանց համաձայն կազմուած ժողովներու ձեռքով։ Իւր պաշտօնավարութեան շրջանին գրէթէ մասնաւորապէս իւր անհատական հսկողութեան տակ և գլխաւոր աշխատութիւնը իւր վրայ ըլլալու պայմանով կը մատակարարուի նպաստից մնտուկը, որ կը կատարէ գրէթէ նախախնամական դերն, բազմաթիւ որբանոցներու և դպրոցներու մատակարարութիւնը ընելով, կարօտեալ և արկածեալ վայրերու նպաստ հասցնելով, և ուրիշ կարօտութիւնները լրացնելով։ Իր պաշտօնավարութիւնը դեռ մօտաւոր շրջանի պատկանելով աւելի չենք ծանրանար։

1908 յուլիս 16-ից կը ստիպուի թողուլ իր պաշտօնը. «ազատութեան խանտավառութենէն օգտուելով զինքը տապալելու հետամուտ խմբակի մը սարքած մէկ ցոյցի հետևանքը»։

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Մեր ռուսահայ եկեղեցականութեան մէջ մէկը կայ, որ իր ուսմամբ, խելքով, փորձառութեամբ, բեղմնաւոր գործունէութեամբ թէ աշխարհական և թէ հոգևորական ժամանակ, վերջապէս սրտով և անձնուիրութեամբ հայ ժողովրդի և հայ եկեղեցու շահերին—անօրինակ է, նա բարձր է բոլոր սեագլուխ և աշխարհիկ հոգևորականներից։ Բայց տեսէք, որ տասնեակ տարիներ է ինչ նա արհամարհուած է ու վտարանդի, և ոչ ոք չէ սիրտ անում նրա մասին խօսել անգամ. նա աքսորուած է Ն. Նախիջևանի ս. Խաչ վանքը՝ իբր թէ հանգ. Հայրապետին սխալեցնող Հայ ուսումնարանների գործում։ Եւ որ գլխաւորն է ամենքը վախում էին նրա անունը տալ երկիւղից՝ որ յետադէմ չանուանէ նրանց ժամանակի որդին...

Վահան վարդապետի գործունէութեանը հատորներ կարելի է նուիրել, բայց մենք բաւականանում ենք առ այժմ տպել Գ. Զալխուշեանցի մի նամակից հետևեալ քաղուածքը (Մշ. № 9).

Նա հին գործիչներից է. Խօսել չէ սիրում, խոստանալ երբէք, և իբրև աղգի անխոնջ մշակ նա բոլորից աւելի գործում է այժմ ս. Խաչ վանքում։

Ո՞ւր չէ եղել հայր-սուրբը. Ղարաբաղի թեմական տեսուչ, նա ձիով թափառել է գիւղից-գիւղ և ամեն տեղ նա եղել է երիտասարդական օրերից և վարդապետ, և վարժապետ։ Նա է եղել

առաջինը, որ մեր ծխական դպրոցներում, Նուխում և Մազդոկում արհեստներ է մտցրել։

Նա նշանակւում է սինոդի անդամ։ Պարտաճանաչ, ազնիւ, ատելով իր անձնական շահերը և հաշիւները, նա ջերմ պաշտպանում է ազգի, եկեղեցու իրաւունքները։

Յիշում էք Գոլիցինի չար ժամանակները։

Վահան վարդապետը գալիս է Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքը աքսոր։

Ի՞նչ էր առաջ ս. Խաչ վանքը։

Պատերը քանդած, դպրոցը փակ, եկեղեցին խեղճ վիճակի մէջ, բակը կեղտոտ, և ոչ մի ծառ, կամ բոյս։

Տեսէք այսօր մեր վանքը։ Առաջ նա աղքատ էր, այժմ ունի և հող, և փող։

Մի քանի հարիւր դեսեատին հող հայը սուրբի ջանքով և շնորհիւ ստացուեց քաղաքից։

Բակը այժմ վայելուչ է։ Ծառեր, բոյսեր, ծաղիկներ և երկու գեղեցիկ արձաններ Գամառ-Քաթիպայի և Միքայել Նալբանդեանի—դրանք բոլորը Վահան վարդապետի վանահայրութեան օրով զարդարեցին ս. Խաչ վանքը։ Նա շինեց գեղեցիկ կամուրջ։ Նա մաքրեց, կարգի բերեց աղբիւրը, որ հիանալի ջուր ունի։ Նա գեղեցկացրեց, զարդարեց եկեղեցին։ Ապահովելով ս. Խաչ վանքի նիւթականը, հայր Վահանը աշխատեց, որ ապագայում վանքը կախում չունենայ միայն վանահայրից՝ և նրա շնորհիւ այսօր մենք վանական կառավարութիւն ունենք։

Երկու գեղեցիկ երազներ երազում է այժմ ծերունի վարդապետը։ Նախ աղբիւրի ջուրը բերել վեր՝ եկեղեցու բակը և ապա հիմնել գիւղատնտ. դպրոց վանքում։

Այդ երազները կիրագործուեն, հաւատում եմ։ Մենք բոլորս նրան կօգնենք։

Եւ Նոր-Նախիջևանի հասարակութիւնը այժմ ցանկանում է, որ արժանապատիւ հ. Վահանը վարձատրուի։

Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովը յունուարի 7-ին միաձայն որոշեց՝ ի նկատի առնելով ս. Խաչ վանքի վանահայր Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանի արդիւնալից գործունէութիւնը, թէ ընդհանրապէս Կովկասում և թէ մասնաւորապէս Նոր-Նախիջևանում, և գնահատելով նրա արժանիքները իբրև համեստ և անդուլ գործչի դիմել ընկերութեան նախագահի միջոցով ուր հարկն է՝ նրան եպիսկոպոս ձեռնադրել տալու համար։ Մեր եկեղեցիների պատգամաւորների ժողովը պիտի որոշէ նոյնպէս միանալ ընկերութեան հետ այդ գործում։

Մեր միակ ցանկութիւնն է միայն, որ, բարձր յայտնեց ընդհանուր ժողովում և քաղաքագլուխ Մինաս Պալասանեանը, որ հայրենասիրը, սրբազան դառնալով, մնայ մեզ հետ, մեր վանքում...

ԼՈՒՐԵՐ

—«Սուրհ.» մէջ կարդում ենք։

«Վերջացած է Կովկասեան «դաշնակցականների» գործի վերաբերմամբ կատարուող նախնական քննութիւնը։

Այս գործի վերաբերմամբ դատական քննիչ պ. Լրժինը հիւսիսային Կովկասի, Անդրկովկասի խոշոր կենդրոններում և Ռուսիայի ուրիշ տեղերում կատարեց 1,000-ից աւելի խուզարկութիւն և ձերբակալեց 800 հոգուց աւելի։ Սակայն, վերջիններից նա 696 հոգու վերջիվերջոյ արձակեց և միայն 105 հոգու վերաբերմամբ նրա ձեռքի տակ գտնուեցան «փաստեր» նրանց 102 յոդուածի հիման վրայ դատական պատասխանատուութեան ենթարկելու համար։ Բայց դատի ենթարկուողների մէջ էլ մատնանշում են շատերին, որոնք «գործին» խառնուել են պարզ թիւրիմացութեամբ։ Այսպէս, մի քանի փաստերի հիման վրայ պէտք էր ձերբակալել ոմն «Գէորգի», որի բնակութեան տեղը ցոյց էր տրուած Թիֆլիսը. որովհետև Թիֆլիսում շատ Գէորգներ կան ուստի սկսեցին բռնել այդ անունը կրող բոլոր կրթուած հայերին և վերջիվերջոյ կանգ առան Գէորգ Առաքելեանի վրայ, որն և այժմ պատասխանատուութեան է ենթարկւում։ Մինչդեռ ստուգիւ յայտնի է, որ «դաշնակցականների» կուսակցութեան անդամ «Գէորգը», որին որոնում են, սեպտեմբերի սկզբին սպանուած է Թաւրիզ քաղաքի մօտ, և նրա մահը վկայել է ռուսաց հիւպատոսարանը։

Նոյնը պատահել է և «Հաջի-Յակոբին»։ Որոնւում էր և պիտի ձերբակալուէր «Թիւրքահպատակ հայ Հաջի-Յաբովբը»։ Նրա ձերբակալման մասին կարգադրութիւն էր եղած, և այդ անունը կրող 10 ձերբակալուածներից ընտրուած է Երևան քաղաքում ձերբակալուած թրքահպատակ հայ Հաջի Յակովբ Աւետիսով, մի զառամեալ ծերուկի, որ, ինչպէս ասում են, կուսակցութեան հետ ոչ մի կապ չունի։ Մինչդեռ քննչին հարկաւոր Հաջի-Յակովբը, որ թրքահայերի մէջ յայտնի գործիչ է, Թիւրքիայում սահմանադրութիւն մտցնելուց յետոյ, տեղափոխուել է և ապրում է այնտեղ ազատ։

Այնուհետև «դաշնակցականների» կուսակցութեան գլխաւոր կոմիտէի անդամների թւում կար ոմն «Իշխան», որ ռուսերէն նշանակում է, «КНЯЗЬ» քննիչը այդ հիման վրայ էլ վճռեց, որ

«իշխանը» «КНЯЗЬ» իշխան Յովսէփ Արղութեան երկայնաբազուկն է, որն և այդ պատճառով բռնուեց և բանտ դրուեց և այժմ պատասխանատուութեան է ենթարկուում։ Մինչդեռ այս տարուայ նոյեմբերի սկզբին իսկական «իշխանը» Թիւրքիայում ներկայացել է ռուսաց հիւպատոսին և յայտարարել է, որ ինքը ամենևին իշխան չէ, այլ մի հասարակ մահկանացու, իսկ «իշխանը» իր մականունը և կեղծ անունն է, որն և հաստատել է փաստաթղթերով»։

— Տաճկաստանի գաւառներում Զմիւռնիայից յետոյ առաջին անգամ միայն կարինում գիտէինք, որ հրատարակւում է «Յառաջ» թերթը, այժմ ստացանք Նիկոմիդիայի Իզմիտ քաղաքում տպուած տասնօրեայ «Բիւթանիա» թերթի առաջին համարը բաւական հետաքրքրական բովանդակութեամբ, որի մէջ տպուած կայ հանգ. Խրիմեան կաթողիկոսի մի գրութիւնը Ռուսիոյ մեծ. կայսեր, հայոց եկ. կալուածների գրաւման առիթով։

— Առաջիկայ մարտի 14-ին Շուշիում տոնուելու է Ղարաբաղի Հայոց թեմական Դպրոցի ուսուցիչ Գաբրիէլ Ղուլիքեխեանցի գործունէութեան 35 ամեակը։

— Ինչպէս ամէն գաւառի մէջ՝ այստեղ ալ սկսաւ Դաշնակցութեան խնդիրներ արծարծուիլ։ Սակայն տեղապահին ժողովրդական քարոզներուն շնորհիւ Եդեսիացիները մազի չափ պիտի չթերանան իրենց նախկին քարոզիչ Թաթէոսի և Բարթողիմէոսի ճշմարտագոյն կրօնէն։ Դաշնակցականներ կ՚ճգնին ծածկաբար անհաւատութեան որոմներ ցանել նորհաս երիտասարդութեան մտքին մէջ։ Անցեալ շաբթու Ուր. երեկոյ, Տեղ. Հօր զգուշաւոր դիրքով Եդեսիոյ Հայը տղատեցաւ կուսակցական ընդհարումէ մը։ Եթէ տեղապահը դուրս գար և յանդիմանէր խլրտող երիտասարդները՝ արդեօք քանիներու դժբախտութեան վրայ պիտի ողբայինք։ Որովհետև Հալէպն ու Այնթապը վրդովող Տիգրան Ամասեանի ոտքերը մինչև այս կողմ երկնցան։ («Բիւզ.»)

— Էդիսոնը մի նոր գիւտ է արել, որով տրամուայի վագոնները այսուհետև կարող են երթևեկել առանց վերին հաղորդիչ լարերի։ Յունուարի 7-ին Նիւ-Եորքում փորձեր են կատարուած։ Աջողութիւնը կատարեալ է։ Ամերիկայի էլէքտրոտեխնիկները չեն կասկածում, որ Էդիսոնի նոր գիւտը ամեն տեղ կը տարածուի ամենամօտիկ ապագայում։

— Յունուարի 14-ին, երեկոյեան ժ. 6½-ից Էկզարխեան հրապարակով և և նրան կից փողոցներում անցնողները նկատեցին, որ երկնքից դէպի վայր է թռչում ոչ մեծ մի հրեղէն գընդակ, որն ընկնում է 4-րդ թաղամասի ոստիկանատան մօտի փողոցը։ Անցնորդները կարծել են, թէ դա գիսաստղ էր, որ վայր

ընկաւ, հետաքրքրուողները շտապել են ընկնելու տեղը։ Աստղաքարն ընկնելու ժամանակ փշրուել է և բաժանուել մանր բեկորների։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

«Արօր»-ի խմբագրութեան. Դուք մեզ առաջարկել էիք փոխանակել մեր թերթերի յայտարարութիւնները և թերթերը. մենք արձագանք տալով՝ անմիջապէս տպեցինք Ձեր յայտարարութիւնը «Լումայի» դեկտեմբերի համարում։ Բայց ինչքան եղաւ մեր զարմանքը, երբ Ձեր թերթի № 1-ում ամեն լրագրի յայտարարութիւն կար տպուած. . . . բացի «Լումայ»-ից։

Բազու Գ. Ենգ.—Փետրուարի համարը պէտք է լոյս տեսնի ամսոյս վերջը. Ձեր յօդուածը խնդրում ենք այնպէս կարգադրէք ուղարկել, որ չմնայ մարտի համարին։

Ղարաքիսա. Բօֆֆօրին, միւսները չտպեցինք. սպասում ենք նորերին։

Կ. Պոլիս. Օ. Թերթիս խմբագրի միամսեայ հիւանդութիւնը արգելք եղաւ Ձեր նամակներին մանրամասն պատասխանել։ Շուտով կհոգանք։

Ն. Նախ. Ե. Շ. գրքերն ուղարկեցինք։

1909 Թ. ՆՈՅ. ՀԱՄԱՐՈՒՄ Ս. ՕՐՄԱՆԵԱՆԻ ՅՕԴ. ՄԷՋ ՄՏԵԼ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՍԽԱԼՆԵՐԸ

		Վրիպակ	Ուղիղ
Եւ. 51.	տող 4	աքսորական	արքունական
»	» 19	շարունակութեան	պարունակութեան
»	» 39	Յովհաննու	Յովհաննա.

Խմբագիր Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագիրը, որն առ այժմ լոյս է տեսնելու շաբաթը երեք անգամ՝ կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, իսկ ապագայում ամեն օր։

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

Տարեկան	5 ռուբլի
Կէս տարին	3 ռ.
Երեք ամիսը	1 ռ. 50 կ.
Թիֆլիզում տարեկան	4 ռուբլի

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» ԲԱԺԱՆԳԻՆՆ Է ԱՌԱՆՁԻՆ

Տարեկան	7 ռուբլի
Կէս տարին	4 ռ. » »
Երեք ամիսը	2 ռ. 25 կ.
Ամիսը	75 կ.

ԽԱԹԱԲԱԼԱՆ ԵՒ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ ՄԻԱՍԻՆ ԱՐԺԵՆ

Տարեկան	10 ռուբլի	Երեք ամիսը	3 ռ. 50 կ.
Կէս տարին	6 ռ.	Մէկ ամիսը	1 ռ. 20 կ.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“. *Հեռագրով՝* Тифлисъ „Хатабала“
Արտասահմանից Tiflis, Caucas rédaction «Khatabala»

Բացուած է 1910 թ. բաժանորդագրութիւնը

ՀՈՐԻԶՈՆ

Գրական, քաղաքական, տնտեսական եւ հասարակական լրագրի

	ՏԱՐԵԿԱՆ	6 ԱՄՍԻԱՆԸ	3 ԱՄՍԻԱՆԸ	1 ԱՄՍԻԱՆԸ
Ռուսաստանի համար	8 ռ.—կ.	4 ռուբ. 50 կոպ.	2 ռուբ. 30 կոպ.	80 կոպ
Պարսկաստանի	9 ռ.—կ.	5 ռուբ. — »	2 ռուբ. 70 կոպ.	1 ռուբ.— »
Թիւրքիայի	20 ղրշ.	70 ղրշ. — »	35 ղրշ. — »	14 ղրշ — »
Ամերիկայի	6 դոլլար	3½ դոլլար »		— — »
Եւրոպայի	30 ֆր.	18 ֆր. »		— — »

Բաժանորդագրութիւն ընդունւում է միայն իւրաքանչիւր ամսի 1-ից։ Ապատիկ ո ոքի թերթ չէ ուղարկւում։

1909 տարւայ տարեկան բաժանորդները կստանան թերթը՝ վճարելով միայն **6** ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція "ОРИЗОНЪ" Вельяминовская, № 16. *Արտասահմանից՝* Rédaction „H o r i z o n“ Tiflis (Russie-Caucase)։

ԲԱՑԻԱԾ Է 1910 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XXVIII ՏԱՐԻ ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ XXI ՏԱՐԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍՆԵՐԻ

Հրատարակւում են ճոխ, բազմաբովանդակ, մասնակցութեամբ մեր և արտասական ակնյայտնի գրականագէտների, հրապարակախօսների, լրագրողների, արուեստագէտների և գեղագէտների։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԱՂԲԻՒՐ դպրոցական աշակերտուհիների և աշակերտների համար տարեկան ՄԷԿ ՐՈՒԲԼԻ (1 ր.)։

2. ԱՂԲԻՒՐ և ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ ս. ՍԱՀԱԿԻ, ս. ՄԵՍՐՈՊԻ և ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ մեծադիր 3 պատկերներով տարեկան ԵՐԿՈՒ ՐՈՒԲԼԻ (2 ր.)։

3. ԱՂԲԻՒՐ դպրոցների, գրադարանների, հաստատութիւնների և հասակաւոր բաժանորդների համար 3 ր. (Արտասահման 5 ր.)

4. ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶ Աղբիւրի Ակունք դպրոցական աշակերտի հասցէով, ընտանիքների համար, տարեկան 10 բուբլու փոխարէն 5 ր.։ Մինչև դեկտեմբ. 15-ը ստորագրող բաժանորդներին կուղարկւին և պրէմիաները՝ ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ բազմագոյն ձիթանկար և ս. ՍԱՀԱԿԻ, ս. ՄԵՍՐՈՊԻ, ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ մեծադիր 4 պատկերներն էլ։ Դեկտեմբերի 15-ից յետոյ բաժանորդագրւող աշակերտները վճարում են այդ պրէմիաների համար մէկ բուբլի, այսինքն փոխանակ հինգ բուբլու ՎԵՑ ՐՈՒԲԼԻ։

5. ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶ, Աղբիւր Ակունք, Յաւելուածներ եւ պրէմիաներ դպրոցների, հաստատութիւնների, գրադարանների և հասակաւոր բաժանորդների համար տարեկան 10 ր. Արտասահման 18 ր. կամ 50 ֆր։

РѢДКІЙ СЛУЧАЙ!

за 7 руб. 25 коп.

высылаемъ 2 зимнихъ, или осенныхъ костюма: 1 отрѣзъ **Англійское трико** шерстяная, прочная и модная матерія, новѣйшаго рисунка, 2-хъ ар. ширины 4¹/₄ арш. на полный мужскій костюмъ и 1 отрѣзъ въ 8 арш. **„Трико Панама“** для дамскаго, прочнаго и элегантнаго костюма, новѣйшаго рисунка, съ нашей упаковкой и пересылкой почтой, безъ задатка и безъ риска, непонравится, Фабрика возвращаетъ деньги сполна; По желанію высылается за ту-же цѣну два мужскихъ или два дамскихъ отрѣза. за наложъ присчитывается 16 коп. а въ Сибирь еще 85 коп. Адресовать; въ фабрику Т-ва **„Суконно-Шерстяной Мануфактуры“** Лодзь № 51

Բացուած է **1910** *թ. բաժանորդագրութիւնը*
(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով

Մշտական աշխատակցութեամբ **ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ**

Ամսագիրը ունի նաև **ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ**, *ուր շօշափուում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։*

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՀԱՆԱՊԱՐԱԺԱԽՍՈՎ

Տարեկան **ՀԱՍԿԵՐ**, *մանկ. բաժին*	*3 ռ.*	*մանկավարժ. բաժ.*	*4 ռ.*
Կէս տարուանը	*ռ. 80 կ.*		*2 ռ. 10 կ.*
Մէկ ամսուանը	*— 30 կ.*		*— 35 կ.*
Պարսկաստանում	*3 ռ. 50 կ.*		*4 ռ. 50 կ.*
Արտասահմանում տարեկան	*ԻՆԸ ֆր.*		*ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.*
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	*11 ռ.*		*15 ռ.*

15-Դ ՏԱՐԻ

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 ԹՈՒԻ

ԼՈՒՄԱՅ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԻ

1910 թուին Լումաան լոյս կը տեսնի իւր այժմեան դիրքով, բաղկացած 64—80 երեսներից, մեր մշտական աշխատակիցների գործակցութեամբ։ Ինչպէս միշտ հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

1910 թուի «ԼՈՒՄԱՅ»ի ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՈՂ բաժանորդները կստանան իբրև ՊՐԷՄԻԱ

ԵՂԻՇԷԻ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

աշխարհաբար նոր թարգմանութիւնը։

ԲԱԺՆԷԳԻՆՆ Է տարեկան 6 *ռ.*, *կէս տ.* 4*ռ.*
Արտասահման „ 8 „ „ 5„

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ, ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԵՒ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ԼՈՒՄԱՅ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԷԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ Է ՅԱՆՁՆՈՒԱԾ

ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑԻ

„ՁԱՐԱՄԻՏՆԵՐԻ ՁԱՌԱՆՑԱՆՔՆԵՐԸ“

վերնագրով բրոշիւրը